# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐ

ԵՐԵՎԱՆ 2006

ՀՏԴ 336.347.73(479.25)
ԳՄԴ 65.9(2Հ)261.3+67.99(2Հ)2
Տ 308

*Սույն գիրքը հրատարակվել է Համաշխարհային Բանկի Աղքատության հաղթահարման աջակցության ծրագրի շրջանակներում*

Տ 308 **Տեղեկատվական թերթիկներ**: — Եր., Դար, 2006, 88 էջ:

Ձեռնարկը նախատեսված է հարկ վճարողների համար և նվիրված է հարկերի ու պարտադիր վճարների հետ կապված իրավունքների ու պարտականությունների, դրանց հաշվարկման, հաշվետվական ձևերի կազմման, ներկայացման ու վճարման կարգերի ու ժամկետների և մի շարք այլ հարցերի պարզաբանմանը:

*Սույն գրքի ցանկացած մաս չի թույլատրվում որևէ կերպով փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:*

Տ $\frac{6050102040}{0123(01)2006}$ 2006 ԳՄԴ 65.9(2Հ)261.3+67.99(2Հ)2

ISBN 99941-47-22-6

© ՀՀ ԿԱ ՀՊԾ, 2006

Ձեզ ներկայացվող տեղեկատվական թերթիկները չեն հավակնում հանդիսանալ հարկային և այլ պարտադիր վճարների հարաբերությունները կարգավորող օրենսդրության, դրանց հաշվարկման մեթոդաբանական հիմնահարցերը ներկայացնող համապարփակ ձեռնարկ կամ ուղեցույց: Տեղեկատվական թերթիկների հիմնական նպատակն է Ձեզ ներկայացնել ձեռնարկատիրական գործունեություն սկսելուց մինչև դրա սահմանված կարգով ավարտը հիմնական այն ընթացակարգերին, որոնք ցանկացած ձեռնարկատիրոջ համար գրեթե անխուսափելի են:

Առանձնապես կարևորում ենք ինքնուրույն, սեփական ռիսկի գիտակցությամբ և շահ ստանալու ակնկալիքով ձեռնարկատիրությամբ զբաղվել ցանկացող կամ արդեն զբաղվող ձեռնարկատիրոջ իրազեկումն օրենքով սահմանված ամենահիմնական պահանջների պահպանման, իր գործունեության հետևանքով առաջացող պարտավորությունները կրելու ու դրանք կատարելու կարգի, ինչպես նաև օրենքի պահանջների խախտմամբ իր գործողությունների կամ անգործության համար պատասխանատվության միջոցների մասին: Եվ այս ամենի մասին հակիրճ, համակարգված ու մատչելի լեզվով:

Տեղեկացված լինելու մի շարք հնարավորություններից այս մեկը ևս օգտագործելը կնշանակի՝ առաջին հերթին հնարավորինս ձեռնպահ մնալ պատասխանատվության առումով հետագա ֆինանսական կորուստներից և հետո՝ ներկայացվածը փնտրելու ու համակարգելու առումով խնայել ժամանակ (իսկ ձեռնարկատիրոջ համար ժամանակը..... չափման միավոր չունի):

Մաղթում ենք հաջողություն.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ ................................................ 5**

Իրավաբանական անձի ստեղծում, իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման և այլ հիմնական ընթացակարգեր

Հարկային մարմիններում հաշվառվելու հիմնական դրույթներ, հարկային և օրենքով սահմանված այլ հաշվառման հիմնական ընթացակարգեր

**ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԵՎ ՎՃԱՐԵԼ ................................................ 26**

Հարկերի ու պարտադիր այլ վճարների հաշվետվական ձևերի ներկայացման ու վճարման գործող կարգը, օրենսդրության հիմնական պահանջները, խախտելու համար պատասխանատվությունը

Հարկերի ու պարտադիր այլ վճարների վճարման ուղղությունները ըստ բյուջետային պատկանելության և գործող գանձապետական հաշվեհամարների

**ԻՆՉՊԵՍ ՏԵՂԵԿԱՆԱԼ ................................................ 59**

Իրավական ակտի հասկացությունը և իրավական ակտերի համակարգը, հարկերի ու պարտադիր այլ վճարների հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ լիազոր մարմիններից տեղեկատվության ստացման հնարավորություն

Տեղեկատվություն օգտակար ինտերնետային կայքերի վերաբերյալ

**ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳՎԵԼ ................................................ 70**

Ստուգումներ և ուսումնասիրություններ, դրանց ընթացակարգերը, վերստուգումներ

Ստուգվող սուբյեկտի և հարկային մարմնի պաշտոնատար անձանց իրավունքերն ու պարտականությունները

Ստուգման արդյունքների և ստուգող պաշտոնատար անձանց գործողությունների բողոքարկում

**ԻՆՉՊԵՍ ԱՎԱՐՏԵԼ ................................................ 79**

Իրավաբանական անձի լուծարում և անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցում

Հարկային մարմիններում հաշվառման դադարեցում, իրավունքներ ու պարտականություններ, սահմանված կարգը խախտելու համար պատասխանատվությունը

# ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ

> **Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք:**
>
> **(ՀՀ *Սահմանադրություն, 33[1]-րդ հոդված*)**
>
> **Յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:**
>
> **(ՀՀ *Սահմանադրություն, 45-րդ հոդված*)**

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը[1] և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը (ընդհանուր առմամբ՝ քաղաքացիական օրենսդրությունը) սահմանում են քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, քաղաքացիական իրավունքների ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունները:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս քաղաքացիական շրջանառության մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց համար անխուսափելիորեն առաջանում է օրենքով սահմանված կարգով ու չափերով հարկեր, տուրքեր վճարելու, պարտադիր այլ վճարումներ կատարելու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պարտավորությունը:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկներից, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերից, ներկայացուցչություններից), հիմնարկներից, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:**
>
> **(*«Հարկերի մասին»* ՀՀ *օրենք, 3-րդ հոդված*)**

Հարկը ենթակա է գանձման անվերադարձ (բացառությամբ դրա համար սահմանված չափից ավելի վճարման կամ արտոնությունների կիրառման դեպքերի) և քաղաքացիական շրջանառության մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից դրա վճարումը չի առաջացնում որևէ պարտավորություն պետության համար՝ կոնկրետ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանդեպ: Հարկի վճարումը նաև կամավոր է, սակայն հարկի վճարման համար օրենքով սահմանված կարգը խախտելու դեպքում հարկի գանձումը կատարվում է հարկադիր կարգով:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Մեկ կողմի՝ մյուսի վարչական կամ այլ իշխանական ենթակայության վրա հիմնված գույքային՝ ներառյալ հարկային, ֆինանսական ու վարչական հարաբերությունների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը չեն կիրառվում, եթե այլ բան նախատեսված չէ օրենսդրությամբ:**
>
> **(ՀՀ *քաղաքացիական օրենսգիրք, 1-ին հոդված*)**

## ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկատիրական է համարվում[1] ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գույքն օգտագործելը, ապրանքներ վաճառելը, աշխատանքներ կատարելը կամ ծառայություններ մատուցելը՝

- որն անձի կողմից իրականացվում է ինքնուրույն և իր ռիսկով, մասնավորապես՝
  - կամքի ինքնավարություն, գործելու ինքնուրույն նախաձեռնություն, քաղաքացիական իրավունքների ձեռքբերում և իրականացում իր կամքով և ի շահ իրեն.
  - օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ գործունեության տեսակի, ձևի ու միջոցների ինքնուրույն ընտրություն, ինչպես նաև այդ պահանջների պահպանմամբ՝ իր հայեցողությամբ գործարքների ազատ կնքում, գույքի ձեռք բերում, տիրապետում և օգտագործում.

---

[1] ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ, հրապարակված է ՀՀՊՏ1998/17(50),10.08.1998թ.

- գործունեության հետևանքով առաջացած պարտավորությունները և վնասները կրելու գիտակցում և պատրաստակամություն,

- որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է.
  - այս չափանիշի հիմքում ընկած է անձի քաղաքացիական իրավունքներն ի շահ իրեն օգտագործելու նպատակն ու մտադրվածությունը, շահույթ (եկամուտ) ստանալու ակնկալիքը.
  - շահույթ (եկամուտ) փաստացի չստանալը չի կարող հիմք հանդիսանալ անձի իրականացրած գործունեությունը որպես ձեռնարկատիրական գործունեություն չորակելու համար (անձի գործունեության արդյունքում բացառված չէ վնասների առաջացումը, որի ռիսկերը ստանձնել է անձամբ):

Ֆիզիկական անձանց (ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա պետությունների քաղաքացիներ, քաղաքացիություն չունեցող անձինք) քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) ծագում է դեռևս ծննդյան պահին: Ֆիզիկական անձինք քաղաքացիական իրավունքների թվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նկատառումներով կարող են՝

- առանց իրավաբանական անձ կազմավորելու՝ անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.
- ինքնուրույն կամ այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ համատեղ ստեղծել իրավաբանական անձ (ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակիցը):

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Այս պահանջների խախտմամբ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձի գործարքների նկատմամբ կիրառվում են ձեռնարկատիրական գործունեության հետ կապված պարտավորությունների մասին կանոնները:**
>
> (**ՀՀ** ***քաղաքացիական օրենսգիրք, 26-րդ հոդված***)

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Անհատ ձեռնարկատերն[2] այն գործունյա ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի առանց իրավաբանական անձ կազմավորելու իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Անհատ ձեռնարկատեր չի կարող գրանցվել այն ֆիզիկական անձը՝

- որը ճանաչված է սնանկ և դիմում տալու պահին չի կատարել սնանկ ճանաչելու համար հիմք հանդիսացած իր պարտավորությունները.
- որի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը սահմանափակված է օրենքով,
- որը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ (հոգեկան խանգարման հետևանքով իր գործողությունների նշանակությունը չհասկանալը կամ դրանք չղեկավարելը).

Անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կիրառվում են օրենքով առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձը պարտավոր է հանդես գալ որպես անհատ ձեռնարկատեր: Անհատ ձեռնարկատիրոջ կողմից, որպես ֆիզիկական անձ, ձեռնարկատիրական գործունեության իրականացումը համարվում է անհատ ձեռնարկատիրոջ իրականացրած գործունեություն:**

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով ֆիզիկական անձը պարտավոր է օրենքով[3] սահմանված կարգով գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր: Պետական գրանցումն իրականացնում է ֆիզիկական անձի բնակության կամ պետական գրանցման վայրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը, ինչ համար ներկայացվում են՝

- գրանցման մասին դիմում՝ նշելով անձնագրի տվյալները.

---

2 «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» 03.04.2001թ. ՀՕ-167 օրենք., ուժի մեջ է մտել 02.05.2001թ., հրապարակված է ՀՀՊՏ 2001/13(145),02.05.2001թ.

3 «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» 03.04.2001թ. ՀՕ-169 օրենք, ուժի մեջ է մտել 18.08.2001թ, հրապարակված է ՀՀՊՏ2001/14(146),18.05.2001թ.

- բնակության և պետական գրանցման վայրը, գործունեության ժամկետը.
- անձնագրի պատճենը, լուսանկար և պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պետական ռեգիստր ներկայացնելուց և նույն օրը տարածքային ստորաբաժանման փաստաթղթերի ընդունման մատյանում գրառում կատարելուց հետո ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում, պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը պետք է կատարի պետական գրանցումը: Անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցումը հավաստվում է իրավաբանական անձանց գրանցող մարմնի տարածքային ստորաբաժանման կողմից տրված համապատասխան վկայականով, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

- անհատ ձեռնարկատիրոջ անունը, անձնագրային տվյալները.
- պետական գրանցման վկայականի սերիան և համարը.
- անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը.
- բնակության վայրը և պետական գրանցման վայրը.
- անհատ ձեռնարկատիրոջ լուսանկարը.
- պետական գրանցումն իրականացրած պետական ռեգիստրի համապատասխան ստորաբաժանման անվանումը.
- գործունեության ժամկետը (անժամկետ, իսկ որոշակի ժամկետի դեպքում՝ նշելով դրա ավարտի տարին, ամիսը և ամսաթիվը).
- նշում՝ հերթական ներդիրը տալու մասին:

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը՝

- որպես սեփականություն ունի առանձնացված գույք.
- իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով.
- կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.
- Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

### Իրավաբանական անձինք՝

- *առևտրային՝ իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություններ.*

  Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները: Հիմնադիրների (մասնակիցների) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը նրանն է պատկանում սեփականության իրավունքով:

  - **տնտեսական ընկերություններ՝**
    - ***սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն.***

      Մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը:
    - ***լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն.***

      Մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով:

      Մասնակիցներից մեկի սնանկության դեպքում ընկերության պարտավորությունների համար նրա պատասխանատվությունը մյուս մասնակիցների միջև բաշխվում է նրանց ավանդներին համամասնորեն, եթե պատասխանատվության բաշխման այլ կարգ նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:
    - ***բաժնետիրական ընկերություններ՝***

      Ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Մասնակիցները (բաժնետերերը) պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորություն-

ների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերությունը կարող է ստեղծվել մեկ անձի կողմից կամ կազմված լինել մեկ անձից՝ մեկ բաժնետիրոջ կողմից ընկերության բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում:

- **բաց բաժնետիրական ընկերություններ.**
  Ընկերության մասնակիցներն առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը: Ընկերությունն իրավունք ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պայմաններով անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք:
- **փակ բաժնետիրական ընկերություններ,**
  Ընկերության բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև: Ընկերությունն իրավունք չունի անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք: Փակ բաժնետիրական ընկերությունը պետք է ունենա ոչ ավելի, քան 49 բաժնետեր:

- **տնտեսական ընկերակցություններ՝**
  - ***լիակատար ընկերակցություն,***
    Ընկերակցություն, որի մասնակիցները (լիակատար ընկերները) կանոնադրությանը համապատասխան, ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ և իրենց պատկանող գույքով պատասխանատվություն են կրում նրա պարտավորությունների համար: Անձը կարող է լինել միայն մեկ լիակատար ընկերակցության մասնակից:
  - ***վստահության վրա հիմնված (կոմանդիտային) ընկերակցություն,***
    Վստահության վրա հիմնված (կոմանդիտ) է այն ընկերակցությունը, որում ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և իրենց գույքով ընկերակցության պարտավորությունների համար պատասխանատվություն կրող մասնակիցների (լիակատար ընկերներ) հետ միասին կան մեկ կամ մի քանի մասնակից ավանդատուներ (կոմանդիտիստներ), որոնք իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը:
- **առևտրային կոոպերատիվներ,**
  Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը: Կոոպերատիվի սեփականության ներքո գտնվող գույքը, կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան, բաժանվում է նրա անդամների փայերի:

- ոչ առևտրային՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպություններ.
  - ***հասարակական միավորումներ՝*** քաղաքացիների կամավոր միավորումները, որոնք օրենքով սահմանված կարգով միավորվել են իրենց շահերի ընդհանրության հիման վրա՝ հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու համար.
  - ***հիմնադրամներ՝*** քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ.
  - ***իրավաբանական անձանց միություններ՝*** առևտրային կազմակերպությունները, իրենց ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու, ընդհանուր գույքային շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով, իսկ ոչ առևտրային կազմակերպություններն իրենց գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակներով կարող են ստեղծել նման ոչ առևտրային միություններ.
  - ***ոչ առևտրային կոոպերատիվներ և օրենքով նախատեսված այլ ձևեր:***

Իրավաբանական անձի գույքի կազմավորմանը մասնակցելու կապակցությամբ՝

- տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ.
- հասարակական միավորումների, հիմնադրամների և իրավաբանական անձանց միությունների նկատմամբ հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Ոչ առևտրային կազմակերպությունները կարող են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել միայն այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար նրանք ստեղծվել են, և համապատասխանում է այդ նպատակներին: Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ոչ առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել նրանց մասնակից:**

## ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ

Ֆիրմային անվանման ներքո առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձն իրականացնում է իր գործունեությունը և դրանով զանազանվում նման այլ իրավաբանական անձանցից: Ֆիրմային անվանումը պետք է բովանդակի իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը բնորոշող բառեր և տարբերակող նշանակության գոնե մեկ հատուկ (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում) կամ հասարակ անուն: Այն կարող է բովանդակել նաև անձի գտնվելու վայրի անվանումը, նրա գործունեության բնույթը բնորոշող բառեր, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք նրա հիմնադիրները կամ մասնակիցները համարում են անհրաժեշտ:

Ֆիրմային անվանումների մեջ տարբերակող նշանակության անուններում «Հայ», «Հայաստան», «հայկական» բառերն ու դրանց թարգմանությունները, ՀՀ վարչատարածքային միավորների անվանումները, ինչպես նաև ֆիրմային անվանումների մեջ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը (նրա մահվան և ժառանգներ չունենալու դեպքում) կարող են օգտագործվել միայն ՀՀ կառավարության սահմանած կարգով տրված թույլտվության հիման վրա՝

- Ֆիրմային անվանման մեջ տարբերակող նշանակության անուններում «Հայ», «Հայաստան», «հայկական» բառերն ու դրանց թարգմանությունները կարող են օգտագործվել առանց թույլտվության, եթե դա պայմանավորված է ֆիրմային անվանման մեջ իրավաբանական անձի հիմնադրի անվան օգտագործմամբ, կամ եթե այդ բառերը ներառված չեն ֆիրմային անվանումների տարբերակող նշանակության անուններում (նշված թույլտվության համար սահմանված է տարեկան պետական տուրք՝ բազային տուրքի 600-ապատիկի չափով):
- ՀՀ վարչատարածքային միավորների անվանումները ֆիրմային անվանումներում առանց թույլտվության կարող են օգտագործվել, եթե դրանք իրավաբանական անձին չեն բնորոշում որպես տվյալ վարչատարածքային նշանակության սուբյեկտ: Հակառակ պարագայում անհրաժեշտ է ստանալ մարզի անվանման համար համապատասխան մարզպետի, «Երևան» բառն օգտագործելու համար Երևանի քաղաքապետի, Երևանի թաղային համայնքների անվանումների համար համապատասխան թաղապետի, ՀՀ այլ քաղաքների ու գյուղերի անվանումների համար համապատասխան քաղաքապետի կամ գյուղապետի թույլտվությունը:
- Հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը (նրա մահվան և ժառանգներ չունենալու դեպքում) ֆիրմային անվանման մեջ առանց թույլտվության կարող է օգտագործվել, երբ այդ անձի համբավը ձեռք է բերվել այնպիսի ոլորտում, որը համընկնում է իրավաբանական անձի գործունեության հիմնական ոլորտին:

Մինչև առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձի պետական գրանցումը իրավաբանական անձի ֆիրմային անվանումը պետք է գրանցվի ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալությունում ստորև ներկայացված ընթացակարգով.

Ֆիրմային անվանման գրանցման հայտը պետական ռեգիստր է ներկայացնում իրավաբանական անձի հիմնադիրներին ներկայացնող լիազորված անձը կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմինը: Հայտը պետք է պարունակի՝

- դիմում ֆիրմային անվանման գրանցման մասին, որի մեջ նշվում են գրանցման ներկայացված ֆիրմային անվանման նախընտրելի տարբերակները, դրանց հապավումը կամ կրճատ ձևը (եթե այդպիսին կա),
- հայտատուի հասցեն, գրանցման ներկայացված ֆիրմային անվանման բացատրությունը, եթե այն հայերեն հասկանալի չէ,
- հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը օգտագործելու դեպքում այդ անձի կամ նրա ժառանգների համաձայնությունը կամ թույլտվությունը.
- լիազորագիր, եթե հայտը ներկայացվում է հայտատուի կողմից լիազորված անձի միջոցով.
- պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Հայտի քննարկման ընթացքում, մինչև ֆիրմային անվանման գրանցման վերաբերյալ որոշման ընդունումը, հայտատուն կարող է փոփոխություններ կատարել ներկայացված հայտում:

Պետական ռեգիստրը 1-օրյա ժամկետում գործակալություն է ներկայացնում վերոնշյալ տեղեկությունները բովանդակող հայտ, որն էլ իր հերթին 1-օրյա ժամկետում անցկացնում է փորձաքննություն ու որոշում հայտի և գրանցման ներկայացված ֆիրմային անվանման համապատասխանությունն օրենքի պահանջնե-

րին: Եթե հայտը և ֆիրմային անվանումը համապատասխանում են օրենքի պահանջներին, ապա որոշում է կայացվում ֆիրմային անվանումը գրանցելու մասին և հայտի ստացման օրվանից 1-օրյա ժամկետում տրվում է համապատասխան որոշում:

Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ գրանցման ներկայացված ֆիրմային անվանումը չի համապատասխանում օրենքի պահանջներին, ապա որոշվում է գրանցումը մերժել, ինչի մասին համապատասխան հիմնավորմամբ ծանուցվում է պետական ռեգիստրին (որը մերժումն ստանալու օրվանից 1-օրյա ժամկետում ծանուցում է հայտատուին): Փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից 1 ամսյա ժամկետում, հայտատուն իրավունք ունի բողոքարկել գործակալության բողոքարկման խորհուրդ կամ սահմանված կարգով դիմել դատարան:

Ֆիրմային անվանումը գրանցելու մասին որոշումն ընդունելույց հետո գործակալությունը ֆիրմային անվանումը գրանցում է ֆիրմային անվանումների գրանցման՝ ՀՀ պետական գրանցամատյանում: Ֆիրմային անվանումը գրանցվում է հայերեն: Մինչև իրավաբանական անձի պետական գրանցումը, բայց ոչ ավելի, քան 6 ամիս, պետական գրանցամատյանում գրանցված ֆիրմային անվանումն ստանում է ժամանակավոր պահպանություն: Ֆիրմային անվանման վկայագիր տալու մասին որոշում կայացնելուց հետո, իրավաբանական անձի դիմումի համաձայն, գերատեսչությունը 10 օրվա ընթացքում նրան հանձնում է ֆիրմային անվանման գրանցման վկայագիրը, որը հաստատում է ֆիրմային անվանման պետական գրանցման փաստը և իրավաբանական անձի կողմից դրա օգտագործման բացառիկ իրավունքը: Ֆիրմային անվանման գրանցումը գործում է անժամկետ:

Իրավաբանական անձը զրկվում է ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից, եթե՝

- օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ նրան արգելվել է օգտագործել տվյալ ֆիրմային անվանումը.
- օրենքով սահմանված դեպքերում դատարանն անվավեր է ճանաչել ֆիրմային անվանման գրանցումը.
- իրավաբանական անձը փոխել է իր ֆիրմային անվանումը.
- իրավաբանական անձը լուծարվել է:

Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից իրավաբանական անձի զրկվելու դեպքում տվյալ անվանումը որպես այլ իրավաբանական անձի ֆիրմային անվանում կարող է գրանցվել ոչ շուտ, քան 3 տարի հետո:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում կարող են սահմանվել գործունեության իրականացման հետ կապված՝ ֆիրմային անվանման մեջ օգտագործվող բառերի ու դրանցածանցյալների օգտագործման սահմանափակումներ՝ կապված այդ գործունեության իրականացման լիցենզիայի առկայության հետ: Այսպես՝ «աուդիտ», «աուդիտոր», «աուդիտորական», «գրավատուն», «վիճակախաղ», «խաղատուն», «խաղասրահ» կամ «շահումով խաղ» բառերն ու դրանց ածանցյալները ֆիրմային անվանման մեջ կարող են օգտագործվել միայն համապատասխան լիցենզիա ստացած անձինք: Այս իրավաբանական անձանց համար սահմանված է 6 ամիս ժամանակ պետական գրանցումն ավարտելու և լիցենզիա ստանալու համար:**

**Առանց համապատասխան լիցենզիա ստանալու՝ օրենքով սահմանված բառերը կամ դրանց ածանցյալներն իրենց անվանման մեջ օգտագործելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169$^{14}$-րդ հոդվածով սահմանված է վարչական պատասխանատվության:**

## ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Իրավաբանական անձն ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից, իսկ համարվում է գրանցված իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը կատարելու պահից: Իրավաբանական անձի պետական գրանցումը հավաստվում է պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման կողմից տրված համապատասխան վկայականով: «Իրավաբական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝

- բանկերի, վարկային կազմակերպությունների, ֆոնդային բորսաների պետական գրանցման առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով
- հասարակական միավորումների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և ժամկետները սահմանվում են համապատասխան օրենքով
- իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները ենթակա են հաշվառման ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով.
- հասարակական միավորումների, հիմնադրամների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների միությունների պետական գրանցումն ու իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ (բայառությամբ վերակազմավորման) պայմանավորված պետական գրանցումներն իրականացնում է պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը:

Պետական գրանցման համար իրավաբանական անձինք ներկայացնում են՝

- իրավաբանական անձի հիմնադրի (հիմնադիրների) լիազորված անձի դիմումը.
- իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադրի (հիմնադիրների) ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը՝ ստորագրված նախագահի և քարտուղարի կողմից: Եթե հիմնադիրների կազմում առկա է իրավաբանական անձ, ապա անհրաժեշտ է ներկայացնել հիմնադիր իրավաբանական անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը.
- օրենքով սահմանված դեպքերում մեկ անձի կողմից իրավաբանական անձի հիմնադրման դեպքում ներկայացվում է հիմնադրի գրավոր որոշումը.
- կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից.
- առևտրային կազմակերպությունների հիմնադրման համար ներկայացվում է ֆիրմային անվանման պետական գրանցման մասին լիազորված մարմնի որոշումը.
- տնտեսական ընկերությունները ներկայացնում նաև ընկերության կանոնադրական կապիտալի վճարումը հաստատող փաստաթղթերը.
- պետական տուրքի վճարման անդորրագիրը.
- «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկություն տրամադրող անձինք՝ նաև իրավաբանական անձին հանձնվող կամ վերջինիս կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում ներդրվող գույքի օրինականության վերաբերյալ հայտարարություն՝ նշելով հանձնվող գույքի կազմը, չափը և ծագման աղբյուրները, եթե հանձնվող կամ ներդրվող գույքի արժեքը գերազանցում է 25,0 մլն. դրամը.
- առանձին կազմակերպական-իրավական ձև ունեցող իրավաբանական անձանց վերաբերյալ օրենքներով կարող են նախատեսվել պետական գրանցման համար պարտադիր ներկայացման ենթակա նաև այլ փաստաթղթեր.
- օտարերկրյա հիմնադիր (մասնակից) իրավաբանական անձով պետական գրանցման համար ներկայացնում են նաև քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից կամ օտարերկրյա ներդրողի իրավական կարգավիճակը հաստատող այլ համազոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները)՝ վավերացված և հայերեն թարգմանված:

Իրավաբանական անձանց պետական գրանցման համար սահմանված փաստաթղթերը ներկայացվում են իրավաբանական անձանց գտնվելու վայրի պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանում կամ ռեգիստրի կենտրոնական մարմին, ինչի մասին փաստաթղթերի ընդունման մատյանում կատարվում է գրառում: Հիմնադրվող առևտրային կազմակերպության պահանջով ռեգիստրի կողմից տրամադրվում են գրանցման համար ՀՀ արդարադատության նախարարի սահմանած փաստաթղթերի նմուշային ձևեր (դիմումի ձև, կանոնադրություն, հիմնադիր ժողովի որոշում), որոնցում առևտրային կազմակերպությունները լրացնում են միայն անհատականացնող տեղեկություններ (հետագայում ստուգվում է միայն լրացված տեղեկությունների լիարժեքությունը և ճշտությունը):

Պետական ռեգիստրի կողմից ստուգվում է իրավաբանական անձի կազմավորման կարգն ու ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքների պահանջներին: Փաստաթղթերի ստուգումից հետո պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման ղեկավարը համապատասխան տեղեկությունները լրացնում է պետական գրանցման քարտում, կոդավորում է իրավաբանական անձին, շնորհում գրանցման համար, ստորագրում և կնքում է քարտը, գրառում է անհրաժեշտ տեղեկություններ պետական գրանցամատյանում ու տալիս է պետական գրանցման վկայական, որը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

- իրավաբանական անձի անվանումը (ներառյալ՝ ֆիրմային անվանումն ու կազմակերպական-իրավական ձևը), պետական գրանցման վկայականի սերիան և համարը, պետական գրանցման համարը, տարին, ամիսը, ամսաթիվը.
- կոդը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի տեսակը, պետական գրանցումն իրականացրած պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման (կամ կենտրոնական մարմնի) անվանումը.
- գործունեության ժամկետը (անժամկետ, իսկ որոշակի ժամկետի դեպքում՝ նշելով դրա ավարտի տարին, ամիսը և ամսաթիվը).
- իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի (տնօրեն, գլխավոր տնօրեն, նախագահ, գործերը վարող և այլն) կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ իրավաբանական անձին ներկայացնելու իրավունք ունեցող այլ անձի (այսուհետ՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության (հաշվառման) վայրը.
- իրավաբանական անձի իրավանախորդի անվանումը և գրանցման համարը.
- նշում՝ հերթական ներդիրը տալու մասին և օրենքով նախատեսված այլ տեղեկություններ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման, իրավաբանական անձանց կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցման, կորցրած պետական գրանցման վկայականի փոխարեն նորը տալու, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանի տեղեկություններից օգտվելու համար գանձվում է տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով:**

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Պետական ռեգիստր փաստաթղթերի ներկայացման օրը պետական ռեգիստրում գրանցման համար սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի փաստայի ստացման ամսաթիվն է, որը նշվում է ստացված դիմումի վրա՝ փաստաթղթերն ընդունած անձի ստորագրությամբ և գրառվում է փաստաթղթերի ընդունման մատյանում: Պետական ռեգիստր ներկայացվող փաստաթղթերը պետք է բավարարեն (չբավարարող փաստաթղթերը պետական ռեգիստրի կողմից վերադարձվում են առանց քննարկման) հետևյալ պահանջները՝

- մեկ թերթից ավելի ծավալ ունեցող փաստաթղթի, այդ թվում՝ դրանց պատճենի թերթերը պետք է լինեն կարված, համարակալված, ինչը պետք է ապահովի փաստաթղթի ամբողջականությունը.
- փաստաթղթերում պետք է նշված լինեն դրանք կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- փաստաթղթերը չպետք է պարունակեն ջնջումներ կամ էական վնասվածքներ, հավելագրումներ, ջնջված բառեր, դատարկ և հետագայում լրացման համար նախատեսված չլրացված մասեր, չծանոթագրված ուղղումներ.
- փաստաթղթերի տեքստը պետք է գրված լինի պարզ, հստակ և ընթեռնելի.
- միաժամանակ հայերեն և օտար լեզվով ներկայացվող փաստաթղթերի տեքստերը պետք է շարադրվեն իրար հետևից կամ իրար կողքի, պայմանով, որ իրար հետևից տեքստերի շարադրման դեպքում վերևում զետեղվում է հայերեն տեքստը, ընդ որում՝ տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին.
- փաստաթուղթը պետք է նշում պարունակի այն հաստատելու մասին կամ ձևակերպված լինի այն հաստատող փաստաթղթի հետ մեկ փաստաթղթի տեսքով.
- մեկից ավելի թերթեր պարունակող փաստաթղթերը (փոխանցման ակտ, բաժանիչ հաշվեկշիռ) կարող են ներկայացվել էլեկտրոնային կրիչի տեսքով (բացառելով որևէ անձի կողմից փոփոխություններ կատարելու հնարավորությունը).
- կանոնադրության (փոփոխությունների) տիտղոսաթերթը պետք է ՀՀ արդարադատության նախարարի կողմից սահմանված ձևով նշում պարունակի հաստատման մասին, ներկայացված օրինակների քանակի ու օրինակի հերթական համարի, պետական գրանցման տվյալների մասին.
- սահմանված դեպքերում ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է բավարարեն վերոնշյալ պահանջներին և պետք է վավերացված լինեն իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից, եթե օրենքներով վավերացման այլ կարգ սահմանված չէ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի Հանրապետությունում առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն արգելվում է: Առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձինք կրում են պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:**

## ՀԱՇՎԱՌՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցում (լիցենզիա) ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են հաշվառման կանգնել հարկային տեսչությունում և ստանալ հարկ վճարողների հաշվառման համարներ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:**

Հարկ վճարողների հաշվառման համարը (կազմված է ութանիշ թվից) միակն է և ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման: Հարկ վճարողների հաշվառման համարները պարտադիր կարգով ստանում են՝

- ՀՀ տարածքում պետական գրանցում ունեցող և ՀՀ հարկային մարմիններում հաշվառման ենթակա բոլոր կազմակերպությունները՝ անկախ սեփականության ձևից և կազմակերպական-իրավական տեսակից, ըստ գտնվելու վայրի.
- բոլոր անհատ ձեռնարկատերերն՝ ըստ բնակության վայրի.

- հարկային մարմնում հաշվառման ենթակա ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք՝ ըստ ՀՀ տարածքում բնակության վայրի.

Հարկ վճարողի հաշվառման համարը տրամադրվում է ըստ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման գտնվելու վայրի (հասցեի) վարչատարածքային պատկանելության հարկային մարմնի կողմից:

Հարկ վճարողի հաշվառման համար ստանալու համար կազմակերպությունները լրացնում են ՀՎՀՀ-ի տրամադրման համապատասխան քարտը և պահանջվող բոլոր տեղեկությունները (տեղեկություններում հետագայում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում 10-օրյա ժամկետում պետք է հայտնեն գրավոր):

Հարկ վճարողին տրվում է հարկային մարմնի կնիքով հաստատված փաստաթուղթ, որում նշվում է հարկ վճարողի անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը) և նրան շնորհված հարկ վճարողի հաշվառման համարը:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
> **Պետական գրանցում ստացած (հաշվառված) բոլոր կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պետական գրանցում ստանալուց կամ սահմանված այլ ձևով հաշվառման կանգնելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր են որպես ապահովադիր հաշվառվել համապատասխան հարկային մարմնում:**

Կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները որպես ապահովադիր հաշվառվում են այն հարկային տեսչություններում, որտեղ հաշվառվում են որպես հարկ վճարող, ներկայացնելով իրենց մասին պահանջվող տեղեկություններ (որոնցում հետագայում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում 10-օրյա ժամկետում պետք է հայտնեն գրավոր): Հարկային տեսչություններն իրենց մոտ հաշվառվող յուրաքանչյուր ապահովադրին տալիս են հաշվառման միասնական ութանիշ թվից կազմված ապահովադրի ծածկագիր, որը միակն է և ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
> **Հարկային տեսչության մարմիններում սահմանված ժամկետում հաշվառման չկանգնելը առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170[4]-րդ հոդվածով:**

## ԿՆԻՔՆԵՐ ԵՎ ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐ

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում եկամուտները կամ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի, հաշվառման համար սահմանված գրանցամատյանների, գրքերի ու փաստաթղթերի, պետական կառավարման մարմինների հետ առընչվող գրագրության, դիմումների, պաշտոնական փաստաթղթերի վավերացման նպատակով պետական գրանցում ստացած իրավաբանական անձը պարտավոր է (իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար նախընտրելի է) ունենալ կնիք և դրոշմակնիք: Հայաստանի Հանրապետությունում գործում են պետական և ոչ պետական կնիքներ: Պետական են համարվում այն կնիքները, որոնք ունեն ՀՀ պետական զինանշանի պատկեր և հստակ վավերապայմաններ: Ոչ պետական են համարվում առանց ՀՀ պետական զինանշանի պատկերի կնիքները, որոնց համար պարտադիր են հետևյալ պահանջները՝

- կնիքների և դրոշմակնիքների տեքստերը գրվում են հայերենով՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով (ընդհանուրը՝ ոչ ավելի, քան 3 լեզվով), եթե այդպիսի իրավունք տրված է կանոնադրությամբ, և կանոնադրությունում առկա են կազմակերպության անվանման օտարալեզու թարգմանություններ.
- կնիքների և դրոշմակնիքների տեքստերում «Հայաստանի Հանրապետություն» կամ «Հայաստան» բառերը ներառվում են բացառապես այն դեպքերում, երբ իրավաբանական անձանց անվանումներում դրանք առկա են.
- պետք է նշվի պատվիրատուի անվանումը (ամբողջությամբ կամ կրճատ): Իրավաբանական անձանց անվանումները (ամբողջությամբ կամ կրճատ) կնիքների և դրոշմակնիքների վրա պետք է փորագրվեն այնպես, ինչպես դրանք գրանցված են իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականում.
- պետք է նշվեն հարկ վճարողի հաշվառման համարը, կնիքների, դրոշմակնիքների պատրաստմամբ կամ արտադրությամբ զբաղվող լիցենզավորված անձանց լիցենզիաների համարները:

Ոչ պետական կնիքների և դրոշմակնիքների տեքստերում կարող են ներառվել՝

- առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ապրանքային (սպասարկման) նշանները, եթե դրանք գրանցված են օրենքով սահմանված կարգով.
- խորհրդանիշը, եթե դա նախատեսված է պատվիրատուի կանոնադրությամբ կամ ՀՀ կառավարության որոշմամբ, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ ցանկությամբ.

- անհատ ձեռնարկատիրոջ կնիքի տեքստում կարող է նշվել նաև ձեռնարկատիրական գործունեության տեսակը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ոչ պետական կնիքները գործածում են՝

- իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը,
- իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումները, հիմնարկները՝ իրենց կանոնադրության մեջ նշված լինելու դեպքում,
- օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված (գրանցված) ներկայացուցչությունները և մասնաճյուղերը,
- օտարերկրյա դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները:

Նշված անձինք (բացի անհատ ձեռնարկատերերից) կարող են պատվիրել միայն մեկական ռետինե և (կամ) մետաղական (ռելիեֆային) ոչ պետական կնիք: Թույլատրվում է պատվիրել նույն բովանդակությամբ լրացուցիչ կնիք «2» թվի և (կամ) տվյալ կնիքի օգտագործման նպատակից բխող բառի (բառերի) նշումով:

Մինչև կնիքների, դրոշմակնիքների պատրաստմամբ կամ արտադրությամբ զբաղվող լիցենզավորված անձանց կնիքների պատրաստման համար պատվեր տալն անհրաժեշտ է ստանալ համապատասխան թույլտվություն: Կնիք պատվիրելու թույլտվությունը ձևակերպվում է լիազորված մարմնի կողմից՝ լիցենզավորված իրավաբանական կամ ֆիզիկական անձի ներկայացուցչի միջոցով պատվիրատուի ներկայացրած համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում: Կնիք պատրաստելու պատվերի թույլտվություն ստանալու համար կազմակերպության ղեկավարը կամ անհատ ձեռնարկատերն իր պետական գրանցման վայրի ՀՀ ոստիկանության մարմին է ներկայացնում սահմանված ձևի դիմում և հետևյալ փաստաթղթերը՝

- պետական գրանցման վկայականի պատճենը, հարկ վճարողի հաշվառման համար հարկ վճարողի հաշվի համար տրամադրելու մասին հարկային տեսչության կողմից տրված տեղեկանքը.
- իրավաբանական անձինք՝ կանոնադրության պատճենը.
- կնիքի կամ դրոշմակնիքի ուրվագիծը՝ մեկ օրինակից.
- ապրանքային (սպասարկման) նշանի գրառման ցանկության դեպքում՝ դրա գրանցման վկայականի պատճենը.
- գործունեության տեսակի գրառման ցանկության դեպքում՝ լիցենզիայի պատճենը, եթե օրենքով սահմանված է, որ գործունեության այդ տեսակը ենթակա է լիցենզավորման.
- պետական տուրքի վճարման անդորրագիրը:

Կնիքներ պատրաստելու պատվերի թույլտվությունը տրվում է անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 2 օրվա ընթացքում՝ 3 ամիս ժամկետով: Դիմումատուն 2 օրվա ընթացքում մերժում չստանալու դեպքում համարվում է թույլտվություն ստացած, իսկ 3 ամսվա ընթացքում արտադրամաս չդիմելու դեպքում կնիք պատվիրելու թույլտվությունը ստանում է նորից՝ ընդհանուր հիմունքներով: Թույլտվություն տալը գրավոր մերժվում է, եթե՝

- դիմողի ներկայացրած փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված.
- ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության պահանջներին:

Թույլտվությունը մերժելու դեպքում մերժման համար հիմք հանդիսացող փաստաթղթերի բնօրինակները չեն վերադարձվում: Կնիքներ պատրաստելու պատվերի թույլտվություն տալու համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

Դրոշմակնիքները թույլատրվում են պատվիրել առանց թույլտվության, կազմակերպության ղեկավարի գրության հիման վրա: Կազմակերպությունների պահարանները կնքելու, գծագրերը հաստատելու, գործառական այլ կարիքների, ինչպես նաև քաղաքացիների անձնական օգտագործման համար գործածվող մյուս կնիքները պատրաստվում են առանց թույլտվության:

Հին կնիքների մաշվածության, որևէ պատճառով դրանց փոխարինման կամ պատվիրատուի վերանվանման դեպքերում նորերը պատվիրելու թույլտվությունները տրվում են ոստիկանության կողմից սահմանված անդորրագրի ձևով: Պատվիրատուները նոր պատրաստված կնիքներն ու դրոշմակնիքներն ստանում են հին կնիքներն ու դրոշմակնիքները ոստիկանություն հանձնելուց հետո: Կնիքը կորցնելու դեպքում, բացի պահանջվող փաստաթղթերից, նոր կնիքի պատրաստման թույլտվություն ստանալու համար ներկայացվում են նաև կնիքի կորստյան մասին հայտարարությունը և առնվազն 1000 օրինակից ոչ պակաս տպաքանակ ունեցող որևէ մամուլում տպագրված հայտարարությունը՝ տվյալ կնիքի կորստյան և այն անվավեր համարելու մասին: Այդ դեպքում կնիքի վրա պարտադիր նշվում է «Կ» (կրկնօրինակ) տառը: Կորած կնիքների և դրոշմակնիքների փոխարեն նորերը պատրաստելու պատվերի թույլտվությունը տրվում է ընդհանուր հիմունքներով:

## ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը գործունեության առանձին տեսակներով կարող են զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա:

## ■ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԸՆԴԵՐՔԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ) ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐ).

Լիցենզավորման ենթակա գործունեության այս տեսակների սահմանումը և լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և ընդերքի ոլորտը կարգավորող իրավական ակտերով[4]: Ընդերքը կարող է օգտագործվել երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման, դրանց արդյունահանման հետ չկապված ստորերկրյա կառույցների ստեղծման նպատակով:

Ընդերքօգտագործման՝ երկրաբանահետախուզական աշխատանքների որոշ տեսակների կատարումը, օգտակար հանածոների հանքավայրերի շահագործումը, ստորերկրյա կառույցների շինարարությունն ու շահագործումը ենթակա են լիցենզավորման: Ընդերքի ուսումնասիրության աշխատանքներ կամ հանքարդյունահանում կարող է իրականացվել միայն օրենքի համաձայն տրամադրված (օրենքով սահմանված դեպքում՝ մրցույթի միջոցով) հանքային իրավունքների կամ օրենքով նախատեսված այլ իրավասության առկայության դեպքում: Լիցենզառու է համարվում հանքային իրավունք կրող՝ ՀՀ անհատ ձեռնարկատերը, առևտրային կազմակերպությունը, ինչպես նաև օտարերկրյա պետության առևտրային կազմակերպությունը:

| |
|---|
| **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**<br>**Ընդերքօգտագործման իրավունքը (լրիվ կամ մասամբ) կարող է փոխանցվել ընդերքօգտագործողի իրավահաջորդին կամ նրա նախաձեռնությամբ այլ անձանց (այդ թվում՝ գրավադրվել) լիազորված մարմնի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:** |

Ուսումնասիրության կամ հանքարդյունահանման լիցենզիա հայցելու նպատակով ներկայացված դիմումի գրանցման օրվանից մեկ ամսվա ընթացքում լիազոր մարմինն օրենքով սահմանված կարգով (ընդերքօգտագործման խորհրդատվական հանձնաժողովի եզրակացության հիման վրա) որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ, որի մասին գրավոր ծանուցում է դիմումատուին: Եթե նշված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա լիցենզիան համարվում է տրված: Լիցենզիան տրվում է անմիջապես՝ օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելուց հետո: Հանքային իրավունք կրողի և լիազոր մարմնի միջև կնքվում է լիցենզային պայմանագիր: Լիցենզային պայմանագիրը, ինչպես նաև սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված նախագիծը հանդիսանում են տվյալ հանքային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի գործողության ժամկետի սկիզբ է համարվում լիցենզային պայմանագրի կնքման պահը:

## ■ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

Լիցենզավորման ենթակա գործունեության այս տեսակների սահմանումը և լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով[5]:

Լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից տրվող՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է և այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված հսկողություն:

| |
|---|
| **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**<br>**Գործունեության տեսակը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե ընդգրկված է օրենքի 43-րդ հոդվածի աղյուսակում: Աղյուսակում չնշված գործունեության տեսակներով ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունք ունեն զբաղվել առանց սահմանափակման, եթե տվյալ տեսակով զբաղվելն օրենքով արգելված չէ:** |

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեն իրավաբանական և ֆիզիկական անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը՝

- առևտրային կազմակերպություններն իրավունք ունեն զբաղվել լիցենզավորման ենթակա բոլոր գործունեության տեսակներով, եթե դա արգելված չէ օրենքով կամ կազմակերպության կանոնադրությամբ.

---

[4] «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին» 06.11.2002թ. ՀՕ-456-Ն օրենսգիրք, ուժի մեջ է մտել 21.12.2002թ., հրապարակված է ՀՀՊՏ 2002/54(229), 11.12.2002թ. և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» 05.11.2002թ. ՀՕ-440-Ն օրենք, ուժի մեջ է մտել 01.04.2003թ., հրապարակված է ՀՀՊՏ 2002/52(227), 29.11..2002թ.

[5] «Լիցենզավորման մասին» 30.05.2001թ. ՀՕ-193 օրենք, ուժի մեջ է մտել 08.08.2001թ., հրապարակված է ՀՀՊՏ2001/26(158), 08.08.2001թ.

- ոչ առևտրային կազմակերպությունները իրավունք ունեն զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր տեսակներով, եթե դա արգելված չէ օրենքով, և եթե գործունեության նման տեսակով զբաղվելու իրավունքն ուղղակիորեն նախատեսված է նրանց կանոնադրությամբ.
- անհատ ձեռնարկատերն իրավունք ունի զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեության բոլոր տեսակներով, եթե դա արգելված չէ օրենքով:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Լիցենզիա ստանալու համար դիմած առևտրային կազմակերպության կանոնադրությունում կամ պետական գրանցման վկայականում, ինչպես նաև անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականում գործունեության համապատասխան տեսակների իրականացում նախատեսող գրառման բացակայությունը՝**

- **հիմք չի կարող հանդիսանալ լիցենզիայի հայտի մերժման համար,**
- **հիմք չի կարող հանդիսանալ կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը պատասխանատվության ենթարկելու համար,**
- **գործունեության ընթացքում չի կարող համարվել լիցենզիայի պահանջների կամ պայմանների խախտում, ինչպես նաև չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն:**

Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար կարող են տրվել պարզ և բարդ ընթացակարգով լիցենզիաներ՝

- պարզ լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից առանց լիցենզավորող հանձնաժողովի որոշման տրվող՝ գործունեություն իրականացնելու անժամկետ թույլտվությունն է,
- բարդ լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան և լիցենզավորող հանձնաժողովների եզրակացության հիման վրա տրվող (օրենքով սահմանված դեպքերում՝ մրցույթով) տրվող՝ անժամկետ (եթե օրենքով լիցենզիայի տրման համար ժամկետ սահմանված չէ)՝ գործունեություն իրականացնելու թույլտվությունն է:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների իրականացման ժամանակ լիցենզավորված անձինք պարտավոր են պահպանել բնապահպանական, հիգիենիկ և սանիտարահամաճարակային անվտանգության, հակահրդեհային նորմերն ու կանոնները (որոնց ցանկը լիցենզավորող մարմինը հանձնում է լիցենզիայի հետ միասին), իրավական ակտերով, այդ թվում՝ լիցենզավորման կարգերով տվյալ գործունեության իրականացման համար նախատեսված պարտադիր պահանջները կամ պայմանները (որոնց ցանկը լիցենզավորող մարմինը հանձնում է լիցենզիայի հետ միասին), մասնագիտական որակավորման պահանջները, եթե լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացումը ՀՀ օրենսդրությամբ պահանջում է մասնագիտական գիտելիքներ, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակին վերաբերող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեխնիկական պահանջներն ու պայմանները:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, ինչպես նաև այլ վայրում ևս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Լիցենզավորված անձինք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, կարգով ու ժամկետներում պարտավոր են լիցենզիաների տրման համար վճարել տարեկան պետական տուրք:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող անձինք կարող են զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ՝ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից: Լիցենզիաներն ուժի մեջ են մտնում դրանք լիցենզավորված անձին պատշաճ ձևով հանձնելու կամ ուղարկելու օրվանը հաջորդող օրվանից: Տեղեկացումը կամ փաստաթղթերի ուղարկումը համարվում է պատշաճ ձևով կատարված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ կամ հանձնվել են ստացականով.**

**Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:**

**Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:**

<table>
<tr><th>Դիմող</th><th>Ներկայացվող փաստաթղթերի հիմնական ցանկը</th><th>Լիցենզիայի հայտի քննարկման ընթացակարգը</th><th>Լիցենզիայի տրման ընթացակարգը</th></tr>
<tr><td colspan="4">Լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը լիցենզավորող մարմին կարող են հանձնվել փոստով կամ առձեռն: Բոլոր պարզ լիցենզիաները տալիս է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը, բացառությամբ հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառի պարզ լիցենզիաների, որը տալիս է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Բարդ ընթացակարգով լիցենզիաների մասով լիցենզավորող լիազոր մարմինները սահմանված են օրենքով կամ ՀՀ կառավարության որոշմամբ[6]:</td></tr>
<tr><td rowspan="2">իրավաբանական անձ</td><td>հայտ՝ նշելով անվանումը, կազմակերպա-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ և օրենքով (բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների դեպքում՝ նաև լիցենզավորման կարգերով) նախատեսված այլ տեղեկատվություն</td>
<td rowspan="6">Լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե՝<br>• փաստաթղթերը թերի են, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված, չեն համապատասխանում օրենքի և ՀՀ օրենսդրության պահանջներին.<br>• դիմողն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվել հայցվող գործունեության տեսակով.<br>• օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ դեպքերում:<br>Պարզ լիցենզիա ստանալու հայտը գրավոր մերժվում է լիցենզավորող մարմնում հայտը մուտք լինելու օրվանից՝ 3 օրվա ընթացքում:<br>Բարդ լիցենզիա ստանալու հայտը գրավոր մերժվում է լիցենզավորող մարմնում հայտը մուտք լինելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ժամկետում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:<br>Փաստաթղթերը թերի լինելու հիմքով լիցենզիա ստանալու հայտը մերժվում է, եթե այդ մասին պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվանը հաջորդող 10 օրվա ընթացքում հայտատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:<br>Պարզ լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերը թերի լինելու վերաբերյալ լիցենզավորող մարմինը նախազգուշացումն ուղարկում է դրանք ստանալու օրվանից 3 օրվա, իսկ բարդ լիցենզիայի դեպքում՝ 10 օրվա ընթացքում:<br>Օրենքով չնախատեսված հիմքերով լիցենզիայի հայտի մերժումն արգելվում է: Լիցենզիայի հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի լիցենզիա ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով:</td>
<td rowspan="6">Պարզ լիցենզիան տրվում է օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց 3 օր հետո:<br>Բարդ լիցենզիան տրվում է օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում (եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ):<br>Եթե օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը (առկա է լիցենզավորման ենթակա գործունեությունը միայն լիցենզիայում նշված վայրում իրականացնելու պահանջ), ապա յուրաքանչյուր վայրում գործունեություն իրականացնելու համար տրվում է առանձին լիցենզիա:<br>Եթե լիցենզիայի հայտի մերժման համար սահմանված ժամկետում հայտը չի մերժվում, և հայտատուն օրենքով սահմանված կարգով և չափով վճարել է պետական տուրքն ու վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացրել է լիցենզավորող մարմին, ապա վերջինս պարտավոր է նշված ժամկետներին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրել լիցենզիա, և լիցենզիան հայտատուին հանձնելու կամ ուղարկելու օրվանը հաջորդող օրվանից հայտատուն իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:</td></tr>
<tr><td>կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենը</td></tr>
<tr><td rowspan="2">անհատ ձեռնարկատեր</td><td>հայտ՝ նշելով անունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարի կամ սոցիալական քարտի վերաբերյալ և օրենքով (բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների դեպքում՝ նաև լիցենզավորման կարգերով) նախատեսված այլ տեղեկատվություն</td></tr>
<tr><td>պետական գրանցման վկայականի պատճենը</td></tr>
<tr><td rowspan="2">իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր</td><td>օրենքով (բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաների դեպքում՝ նաև լիցենզավորման կարգերով) նախատեսված այլ փաստաթղթեր (մասնավորապես՝ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագրի բնօրինակը, եթե օրենսդրությամբ նախատեսված չէ այն ներկայացնել լիցենզավորող մարմնի որոշումն ընդունելուց հետո)</td></tr>
<tr><td>անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ որակավորում պահանջող գործունեության տեսակով զբաղվելու համար հայտ ներկայացվելու դեպքում</td></tr>
</table>

6 ՀՀ կառավարության 24.09.2001թ. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N895 որոշում, ուժի մեջ է մտել 24.09.2001թ., հրապարակված է ՀՀՊՏ2001/32(164), 18.10.2001թ.

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով: Օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությամբ առանց լիցենզիայի, լիցենզիայի գործողության կասեցման ընթացքում, լիցենզիայի գործողության դադարեցումից հետո զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն.**

- **ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված կամ հարկային մարմիններում օրենսդրությամբ սահմանված կարգով չհաշվառված կամ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու դեպքում (ապօրինի գործունեություն) «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածին համապատասխան գանձվում է տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50%-ի չափով, իսկ նշված տուգանքը նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում խախտումը կրկնելու դեպքում՝ իրացման շրջանառության (համախառն եկամտի) 100%-ի չափով.**
- **Ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելը՝ առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը կամ առանց լիցենզիայի պետական լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը կամ պետական մենաշնորհի հանդիսացող ձեռնարկատիրական գործունեությամբ ապօրինի զբաղվելը առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169-րդ հոդվածով.**
- **Ապօրինի (առանց պետական գրանցման կամ առանց հատուկ թույլտվության (լիցենզիայի) լիցենզավորման ենթակա կամ օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը) ձեռնարկատիրությամբ զբաղվելն առաջացնում է քրեական պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով:**
- **Քրեական պատասխանատվություն է առաջացնում նաև կեղծ ձեռնարկատիրությունը՝ առանց ձեռնարկատիրական կամ բանկային գործունեություն իրականացնելու մտադրության առևտրային կազմակերպություն ստեղծելը, որի նպատակը վարկեր ստանալը, հարկերից խուսափելը, գերավճարներ առաջացնելը, նյութական այլ օգուտներ քաղելը կամ արգելված այնպիսի գործունեություն թաքցնելն է, որը խոշոր վնաս է պատճառել քաղաքացիներին, կազմակերպություններին կամ պետությանը (189-րդ հոդված):**

## ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական վիճակագրական դիտարկումները տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների և գործընթացների մասին տեղեկությունների (տվյալների) հավաքագրումն է վիճակագրական տեղեկություններ տրամադրողներից սկզբնական հաշվառման փաստաթղթերի կամ անմիջական հարցումների հիման վրա, նախապես մշակված ծրագրով, մեթոդներով և ձևերով:

Պետական գրանցում ստացած և ծրագրում ընդգրկված իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և օտարերկրյա իրավաբանական անձանց՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները հանդիսանում են վիճակագրական տեղեկություններ տրամադրողներ և պարտավոր են ծրագրով սահմանված ժամկետներում ու կարգով Ազգային վիճակագրական ծառայության տարածքային ստորաբաժանումներ ներկայացնել ծրագրի իրագործման համար անհրաժեշտ տվյալներ ու տեղեկություններ: Պետական վիճակագրական տեղեկություններ տրամադրողներն իրավունք ունեն պետական վիճակագրություն իրականացնող մարմնից անվճար ստանալ վիճակագրական հաշվետվությունների ձևեր և հրահանգներ, պետական վիճակագրություն իրականացնող մարմինների տվյալների բանկից ստանալ իրենց վերաբերյալ սկզբնական տվյալները:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Վիճակագրական հաշվետվությունները սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում 15 օրվա ընթացքում կատարվում է գրավոր նախազգուշացում: Սահմանված ժամկետից հաշվետվությունները 1 ամսից ավելի ուշացնելու և գրավոր նախազգուշացման ներկայացումից 15 օրվա ընթացքում հաշվետվությունը չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով (ոչ արժանահավատ տվյալներ, դրանց ոչ ամբողջականորեն արտացոլում և այլ աղավաղումներ) ներկայացնելու (անկախ ժամկետից) համար վիճակագրական հաշվետվություններ ներկայացնողները ենթարկվում են պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:**

**Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է վարչական կամ քրեական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:**

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները (իրավաբանական անձինք (ներառյալ՝ նրանց ստեղծած հիմնարկները), օտարերկրյա կազմակերպությունների մասնաճյուղերը և ներկայացուցչությունները) պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով[7] սահմանված կարգով: Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով: Հաշվապահական հաշվառման վարման հիմնական կանոներն են.

- Հայաստանի Հանրապետության արժույթով՝ հայկական դրամով.
- կրկնակի գրանցման եղանակով՝ հաշվապահական հաշվառման հաշվային պլանին համապատասխան.
- անընդհատ՝ կազմակերպության պետական գրանցման պահից մինչև օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը.
- անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց.
- բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է հաշվապահական հաշվառման հաշիվներում գրանցվեն ժամանակին այնպես, որ դրանք արտացոլվեն այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին վերաբերում են:

Հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել՝

- կառուցվածքային ստորաբաժանում համարվող հաշվապահական ծառայության միջոցով.
- կազմակերպության աշխատակիցը համարվող հաշվապահի միջոցով.
- հաշվապահական ծառայություններ մատուցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ (իսկ կուսակցությունների, հասարակական և կրոնական կազմակերպությունների համար՝ նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի) միջոցով.
- անձամբ:

Կազմակերպության ղեկավարը պարտավոր է՝

- սահմանել կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջությունը.
- ապահովել հաշվապահական հաշվառում վարելը, օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու ներկայացնելը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $169^{9}$, $169^{10}$, $169^{11}$, $169^{12}$ և $169^{13}$-րդ հոդվածներով սահմանված է վարչական պատասխանատվություն՝**

- **Հաշվապահական հաշվառում չվարելու՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ չունենալու համար.**
- **Հաշվապահական հաշվառման քաղաքականություն չսահմանելու համար.**
- **Հաշվապահական հաշվառման փաստաթղթերը, ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցամատյանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մեքենայական մշակման ծրագրերն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չպահպանելու համար.**
- **Օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում ֆինանսական հաշվետվությունները պետական մարմիններ չներկայացնելու կամ դրանք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չհրապարակելու համար.**
- **Հրապարակվող ֆինանսական հաշվետվությունները հաշվապահական հաշվառումը կարգավորող պետական մարմնի սահմանած կարգով չորակավորված հաշվապահի կողմից ստորագրելու կամ անստորագիր ներկայացնելու համար:**

[7] «Հաշվապահական հաշվառման մասին» 26.12.2002թ, ՀՕ-515-Ն օրենք, ուժի մեջ է մտել 22.02.2003թ. (հրապարակվել է ՀՀՊՏ2003/9(244), 12.02.2003թ.

## ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձինք, դրանց՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), օտարերկրյա կազմակերպությունների՝ ՀՀ տարածքում գործող առանձնացված ստորաբաժանումները կանխիկ դրամի մուտքագրումը կազմակերպություն, ելքագրումը կազմակերպությունից, ինչպես նաև շարժը դրամարկղների ու հաշվետու անձանց միջև (դրամարկղային գործառնությունները) պարտավոր են կատարել «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքին[8] համապատասխան:

Դրամարկղային գործառնությունների իրականացման, այդ թվում՝ դրանց փաստաթղթավորման և դրամարկղային գրքի վարման կարգը սահմանում է կառավարությունը[9]: Կանխիկ դրամի բոլոր մուտքագրումները և ելքագրումները գրանցվում են դրամարկղային գրքում մուտքի և ելքի օրդերների հիման վրա: Կազմակերպությունն իր կողմից օգտագործվող յուրաքանչյուր արժույթի համար վարում է առանձին դրամարկղային գիրք, որի թերթերը պետք է լինեն համարակալված, թելակարված: Դրամարկղային գիրքը կնքվում և համարակալվում է հարկային մարմնի կողմից:

Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ օրենքով սահմանված են նաև հետևյալ սահմանափակումները՝

- ապրանքների, ծառայությունների, աշխատանքների միանվագ գնման դեպքում դրանց դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 300.0 հազ. դրամ.
- մեկ ամսվա ընթացքում ապրանքների (հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և այլ ակտիվների), ծառայությունների, աշխատանքների գնումների դիմաց կանխիկ դրամով վճարման գումարի առավելագույն չափը 3.0 մլն. դրամ:

Սահմանափակումները չեն տարածվում աշխատավարձի, դրան հավասարեցված վճարումների, նպաստների, կրթաթոշակների, կենսաթոշակների և այլ համանման վճարումների, գործուղման և դաշտային բավարարման նպատակով կատարվող վճարումների, ներկայացուցչական ծախսերի դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց հետ կնքված գրավոր քաղաքացիաիրավական պայմանագրերի համաձայն կազմակերպությանը մատուցված ծառայությունների ու կազմակերպության համար կատարված աշխատանքների դիմաց կատարվող վճարումների, ֆիզիկական անձանց կատարվող՝ նրանց ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ կապ չունեցող վճարումների, գյուղատնտեսական մթերքներ մթերող կազմակերպությունների կողմից գյուղացիական տնտեսություն վարող քաղաքացիների հետ կնքված գրավոր պայմանագրերի հիման վրա նրանցից գնված գյուղատնտեսական մթերքների դիմաց վճարումների, կառավարության կողմից սահմանված չափաքանակներով պետական հատուկ նշանակության ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց վճարումների, ինչպես նաև կառավարության սահմանած դեպքերում անհետաձգելի վճարումներ կատարելու անհրաժեշտության առկայության դեպքում կատարվող վճարումների վրա:

Կանխիկ դրամի շարժի համար օրենքով սահմանված են նաև հետևյալ սահմանափակումները՝

- Միևնույն անձին առհաշիվ կանխիկ դրամ չի կարող տրվել, եթե նրա կողմից նախկինում ստացված առհաշիվ գումարների ծախսման մասին հաշվետվությունը կազմակերպությունում այդ հաշվետվությունների ընդունման համար պատասխանատուին դեռևս չի ներկայացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ հաշվետվության ներկայացման ժամկետը չի լրացել.
- Կազմակերպությունների կողմից առհաշիվ տրված կանխիկ գումարների նկատմամբ կառավարությունը կարող է սահմանել նաև ժամկետային սահմանափակումներ:

Սահմանափակումները չեն տարածվում այն կազմակերպությունների վրա, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երկուսը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- **Կանխիկ դրամով վճարումների նկատմամբ սահմանափակումները չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ կանխիկ դրամով վճարումների թույլատրված չափը գերազանցող գումարի 5%-ի չափով, բայց ոչ պակաս քան սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը, իսկ արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, դրանք կրկին չպահպանելու դեպքում գանձվում է տուգանք՝ խախտման գումարի 10%-ի չափով, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկը և ոչ ավելի, քան սահմանված նվազագույն աշխատավարձի 2000-պատիկը.**

---

8 «Դրամարկղային գործառնությունների մասին» 26.12.2002թ, ՀՕ-501-Ն օրենք, ուժի մեջ է մտել 05.03.2003թ. (հրապարակվել է ՀՀՊՏ2003/7(242), 05.03.2003թ.

9 հաստատված է ՀՀ կառավարության 08.10.2003թ N1408-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 13.12.2003թ., հրապարակված է ՀՀՊՏ2003/59(294), 03.12.2003թ.)

- **Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով, իսկ արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, դրանք կրկին չգրանցելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 100-ապատիկի չափով.**
- **Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 20-ապատիկի չափով, իսկ արձանագրելուց հետո՝ 1 տարվա ընթացքում, դրանք կրկին խախտելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով:**

**Նշված տուգանքները ենթակա են վճարման պետական բյուջե՝ խախտումը հայտնաբերելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:**

## ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ՀՀ տարածքում գործող իրավաբանական անձինք, դրանց առանձնացված ստորաբաժանումները (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ), ՀՀ տարածքում գործող օտարերկրյա կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումները և անհատ ձեռնարկատերերը ՀՀ տարածքում մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկները պարտավոր են կատարել հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կիրառմամբ[10], բացառությամբ՝

- բնակչությանը կոմունալ ծառայությունների մատուցման, պայմանով, որ դրանց դիմաց կանխիկ դրամով դրամական հաշվարկներ իրականացնելիս վճարողին տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգով վճարումը հավաստող փաստաթուղթ.
- կրպակներում թերթերի և ամսագրերի վաճառքի, պայմանով, որ թերթերի և ամսագրերի իրացման տեսակարար կշիռը գերազանցում է ապրանքաշրջանառության ծավալի 50 տոկոսը:
- վիճակախաղի տոմսերի վաճառքի.
- ավտոմոբիլային, ջրային, երկաթուղային, օդային տրանսպորտով երթևեկելու համար երթևեկության տոմսերի վաճառքի.
- ուսումնական դասընթացների անցկացման ընթացքում հանրակրթական և դրանց հավասարեցված այլ ուսումնական հաստատությունների աշակերտներին և աշխատակիցներին սննդով ապահովման.
- առևտրի իրականացման վայրերում գտնվող բաց վաճառասեղաններից գյուղատնտեսական արտադրանքի և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող գործածության մեջ եղած անձնական օգտագործման իրերի վաճառքի.
- ձեռքի սայլակներից, զամբյուղներից, արկղերից պարենային և ոչ պարենային ապրանքների (բացառությամբ այնպիսի ապրանքների, որոնք պահանջում են պահպանման և վաճառքի հատուկ պայմաններ) շրջիկ և շրջածախ մանրածախ վաճառքի.
- գյուղական բնակավայրերի մանկաբարձական-բուժական կետերում գտնվող դեղատներից դեղանյութերի վաճառքի.
- կրպակներից ոչ ոգելից խմիչքների լցնովի վաճառքի.
- բուսական յուղի և կշռովի բանջարաբոստանային մշակաբույսերի, ինչպես նաև ցիստեռններից (տակառներից) լցնովի գարեջրի և կվասի վաճառքի.
- կրոնական կազմակերպությունների կողմից կրոնական պարագաների իրացման և կրոնական ծիսակատարությունների ծառայությունների մատուցման.
- փոստային ծառայությունների դիմաց վճարումը հավաստող փոստային վճարման պետական նշանների (փոստային նամականիշերի և այլ նշանների) անվանական արժեքով իրացման.
- նոտարական և փաստաբանական ծառայությունների իրականացման.
- փոստային և սուրհանդակային գործունեության իրականացման.
- փորձագիտական բնագավառում գիտահետազոտական, գիտատեխնիկական և գիտամեթոդական աշխատանքների իրականացման:

Հսկիչ-դրամարկղային մեքենաներին ներկայացվող պահանջները, գրանցման կարգը և շահագործման կանոնները հաստատում է ՀՀ կառավարությունը[11]: Արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնողների կողմից կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաներին կամ համակարգչային սարքավորումներին ներկայացվող պահանջները, գրանցման կարգը և շահագործման կանոնները սահմանում է ՀՀ կենտրոնական բանկը՝ հարկային մարմնի հետ համատեղ:

---

[10] «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» 22.11.2004թ. ՀՕ-129-Ն օրենք, ուժի մեջ է մտել 01.01.2005թ., հրապարակված է ՀՀՊՏ2004/68[1],18.12.2004թ.

[11] հաստատված է ՀՀ կառավարության 25.08.2004թ N1325-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 23.10.2004թ., հրապարակված է ՀՀՊՏ2004/55(354), 13.10.2004թ.)

Օրենքով սահմանած կարգով ՀԴՄ-ի պարտադիր կիրառմամբ գործունեություն իրականացնողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում դիմում օգտագործման (շահագործման) համար նախատեսվող ՀԴՄ-ի (այդ թվում՝ վարձակալված և (կամ) ժամանակավորապես օգտագործվող) գրանցման մասին: Դիմումին կից ներկայացվում են՝

- ՀԴՄ-ի (ՀԴՄ-ների) անձնագիրը (անձնագրերը),
- պետական գրանցում ստացած՝ տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող կենտրոնի հետ կնքված ՀԴՄ-ի տեխնիկական սպասարկման և նորոգման պայմանագրի պատճենը՝ մինչև ՀԴՄ-ի գրանցումն այդպիսի պայմանագրի կնքման դեպքում,
- շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտրի իրականացման դեպքում՝ նաև այդ տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագրի և համայնքի կողմից տրված առևտրի իրականացման թույլտվության պատճենները,
- ՀԴՄ-ի գրանցումից հետո կենտրոնի հետ կնքված պայմանագրերը, ինչպես նաև համայնքից ստացված առևտրի իրականացման նոր թույլտվության պատճենները ևս ենթակա են ներկայացվելու հարկային տեսչություն:

Հարկային տեսչությունը նշված բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է ՀԴՄ-ի գրանցում: Շրջիկ կետի միջոցով մանրածախ առևտրի իրականացման դեպքում առանց համայնքի կողմից տրված առևտրի իրականացման առնվազն մեկ թույլտվության պատճենը չներկայացվելու դեպքում հարկային տեսչությունը մեկօրյա ժամկետում բոլոր փաստաթղթերը վերադարձնում է՝ ՀԴՄ-ի չգրանցման պատճառների գրավոր հիմնավորմամբ:

ՀԴՄ-ի գրանցումից հետո այն կապարակնքվում է հարկային տեսչության կլոր կնիքով՝ 2 տեղից (հանդիպակաց): Կապարակնքված ՀԴՄ-ն և ներկայացված փաստաթղթերի բնօրինակները վերադարձվում են, միաժամանակ տալով հարկային տեսչությունում ՀԴՄ-ի գրանցման քարտի մեկ օրինակը, իսկ փաստաթղթերի պատճենները պահվում են հարկային տեսչությունում:

Օգտագործվող ՀԴՄ-ն նորով փոխարինելու կամ լրացուցիչ ՀԴՄ տեղակայելու անհրաժեշտության դեպքում նախքան նոր ՀԴՄ-ի օգտագործումը, հարկային տեսչություն է ներկայացվում դիմում՝ նոր ՀԴՄ-ի գրանցման և նախկինում գրանցված՝ փոխարինման ենթակա ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին:

Մեկ տրանսպորտային միջոցի վրա տեղակայված ՀԴՄ-ն մեկ այլ տրանսպորտային միջոցի վրա տեղակայելու համար հարկային տեսչություն է ներկայացվում դիմում, նախկինում գրանցված ՀԴՄ-ն գրանցումից հանելու և այն նոր տրանսպորտային միջոցի վրա գրանցելու մասին: Դիմումին կից ներկայացվում են բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Հարկային տեսչությունը ՀԴՄ-ի փոխարինման կամ լրացուցիչ ՀԴՄ-ի տեղակայման, կամ տրանսպորտային միջոցի փոխանակման մասին դիմումն ստանալուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նոր ՀԴՄ-ն և (կամ) գրանցումից հանում նախկինում գրանցված ՀԴՄ-ն՝ տալով նոր քարտ:

Կազմակերպությունը քարտը պահպանում է ՀԴՄ-ի օգտագործման վայրում՝ օգտագործման ամբողջ ժամանակահատվածում, և ներկայացնում է հարկային տեսչության պահանջով: ՀԴՄ-ն օգտագործումից հանելու ժամանակ քարտը վերադարձվում է հարկային տեսչություն: Վերադարձված քարտը հարկային տեսչությունում պահվում է տվյալ ՀԴՄ-ն օգտագործումից հանելու օրվանից սկսած՝ 3 տարվա ընթացքում: Շահագործողի պահանջով հարկային տեսչության կողմից նրան տրվում է տեղեկանք տվյալ ՀԴՄ-ն գրանցումից հանելու մասին:

Շահագործման գործարանային համարները, ՀԴՄ-ն շահագործող հարկ վճարողի հաշվառման համարը, հարկային տեսչություններում ՀԴՄ-ի գրանցման համարը և գործունեության իրականացման վայրը (հասցեն) նշվում են ՀԴՄ-ին առնչվող բոլոր փաստաթղթերում (դրամարկղային չեկ (կտրոն), հաշվետվություն և այլն):

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- **Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումն օրենքով պարտադիր լինելու դեպքում կանխիկ դրամով դրամական գործարքներ իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի բացակայության համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է 150.0 հազ. դրամի չափով: Տուգանքը նշանակելուց հետո 1 տարվա ընթացքում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է 300.0 հազ. դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է մինչև սահմանված կարգով հսկիչ-դրամարկղային մեքենայի ներդրումը:**
- **Հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտմամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում են 75.0 հազ. դրամի չափով: Տուգանքը նշանակելուց հետո՝ 1 տարվա ընթացքում նշված խախտումն առաջին անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է 150.0 հազ. դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 5 օրով: Տուգանքը նշանակելուց հետո՝ 1 տարվա ընթացքում նշված խախտումը երկրորդ և ավելի անգամ կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է 300.0 հազ. դրամի չափով, և նրա գործունեությունն այդ մասով կասեցվում է 10 օրով:**

- **Գործունեության կասեցումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով` ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետի համապատասխան որոշման հիման վրա: Գործունեության կասեցման հիմքերի վերաբերյալ հայտարարությունը փակցվում է գնորդների և հաճախորդների համար տեսանելի տեղում: Նշված խախտումը թույլ տված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը հարկային մարմնի ղեկավարի կողմից ենթակա է հրապարակման` ՀՀ կառավարության սահմանած կարգով:**

**Սահմանված տուգանքը հարկային մարմնի կողմից խախտման փաստն արձանագրելուց հետո երկամսյա ժամկետում չմուծելու դեպքում կրկնապատկվում է:**

## ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ԳՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) առաքող կամ տրամադրող կամ տեղափոխող կազմակերպությունները, օտարերկրյա կազմակերպությունների կողմից ՀՀ տարածքում ստեղծված առանձնացված ստորաբաժանումները, անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների ու պարզեցված հարկ վճարողների) շարժական (նույթական) գույք հանդիսացող արտադրանքի, (ապրանքների) առաքման, տրամադրման կամ տեղափոխման դեպքում պարտավոր են ՀՀ կառավարության սահմանած կարգին[12] համապատասխան վարել դրանց հաշվառումը` գրանցումներ կատարելով առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքերում: Գրքում չի գրանցվում.

- պատրաստի արտադրանք կամ ապրանք չհանդիսացող գույքի ներտնտեսական (նույն հասցեի տարածքում) տեղափոխումը.
- խողովակաշարերով, էլեկտրահաղորդման, էլեկտրական գծերով արտադրանքի առաքումը.
- տարածման ցպատակով մամուլի տեղափոխումը.
- վերանորոգման և համանման այլ ծառայությունների մատուցման ու աշխատանքների կատարման ժամանակ պահեստամասերի կամ երաշխիքային ժամկետ ունեցող տեխնիկայի տեղափոխումը.
- տնտեսավարող սուբյեկտների հիմնական միջոցների, փոքրարժեք և արագամաշ առարկաների, բլանկների ու ձևաթղթերի տեղափոխումը:

Առաքումների գրանցման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո ներկայացվում սուբյեկտի հաշվառման վայրի հարկային մարմին` առաքումների գրանցման գրքի կնքման ու համարակալման համար` համապատասխան հայտով: Հարկային մարմինը հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում և համարակալում է առաքումների գրանցման գիրքը` դրա վրա փակցնելով հարկային մարմնի տարբերանշանի պատկերով ինքնասոսնձվող դրոշմանիշ: Տրանսպորտային միջոցներով առևտրական գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների առաքումների գրանցման գրքերը կնքվում և համարակալվում են հարկային մարմնի ղեկավարի գրավոր թույլտվության հիման վրա: Առաքումների և (կամ) տեղափոխումների իրականացման յուրաքանչյուր հասցեի (կետի, այդ թվում` նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով առաքումների գրանցման գրքի կազմի վրա)) համար (պատրաստի արտադրանքի կամ ապրանքի պահեստ, այլ մատակարարման վայրեր) վարվում է առանձին առաքումների գրանցման գիրք:

Կնքված և համարակալված առաքումների գրանցման գրքերը խիստ հաշվառման փաստաթղթեր են և հերթական համարներով հաշվառվում են հարկային մարմնում: Առաքումների գրանցման գրքի կազմի վրա նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, կազմակերպա-իրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու (բնակության) վայրը և առաքումների գրանցման գրքի հերթական համարը: Առաքումների իրականացման (ապրանքների բացթողման) վայրի (կետի) հասցեն տնտեսավարող սուբյեկտի գտնվելու (բնակության) վայրից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի (կետի) հասցեն:

Լրացված-ավարտված առաքումների գրանցման գրքերը պահվում են տնտեսավարող սուբյեկտի մոտ` մինչև գրքում ամենավերջին գրանցման օրից սկսած 3 տարին լրանալը և ներկայացվում հարկային մարմին` նրանց պահանջի դեպքում: Առաքումների գրանցման գրքի լրանալուց-ավարտվելուց հետո տնտեսավարող սուբյեկտը նույն կարգով նոր առաքումների գրանցման գիրք է ներկայացնում հարկային մարմին` կնքման և համարակալման: Մինչև առաքումների գրանցման գրքի լրանալ-ավարտվելը տնտեսավարող սուբյեկտը սահմանված կարգով կարող է հարկային մարմին ներկայացնել նոր առաքումների գրանցման գիրք` կնքման և համարակալման: Նոր առաքումների գրանցման գրքում գրանցումները կատարվում են հարկային մարմին ներկայացված` լրացված-ավարտված առաքումների գրանցման գրքի վերջին գրառումից անմիջապես հետո հարկային մարմնի կողմից «Գիրքն ավարտված է» նշումը կատարվելուց և կնքվելուց հետո:

ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և ձեռնարկատիրական գործունեության առարկաներ (արտադրանք, ապրանք) վաճառող (այդ թվում` կոմիսիոն հիմունքներով) կազմակերպությունները, օտարերկրյա կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստեղծված

[12] հաստատված է ՀՀ կառավարության 31.07.1997թ N314 որոշմամբ (ուժի մեջ է մտել 15.08.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/17, 31.07.19997թ.)

առանձնացված ստորաբաժանումները, անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ պարզեցված հարկ վճարողների, ինչպես նաև ոչ նյութական ակտիվների, անշարժ գույքի թերթերի վաճառքի), որոնք ունեն ապրանքների անմիջական ցուցադրության և վաճառքի վայր, առևտրի իրականացման վայրում պարտավոր են վարել[13] արտադրանքի, ապրանքների և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գիրք:

Գրանցման գրքի էջերը համարակալվում, կարվում և կազմվում են, որից հետո տնտեսավարող սուբյեկտն իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում գրավոր հայտ՝ գրանցման գրքի կնքման և համարակալման համար: Հարկային մարմինը հայտն ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կնքում և համարակալում է գրանցման գիրքը՝ դրա վրա փակցնելով հարկային մարմնի տարբերանշանի պատկերով ինքնասոսնձվող դրոշմանիշ: Առևտրի (անմիջական վաճառքի) իրականացման յուրաքանչյուր վայրի (կետի, այդ թվում՝ նույն հասցեում, դրա մասին նշում կատարելով գրանցման գրքի կազմի վրա) համար վարվում է առանձին գրանցման գիրք: Կնքված և համարակալված գրանցման գրքերը խիստ հաշվառման փաստաթղթեր են և հերթական համարներով հաշվառվում են հարկային մարմնում: Գրանցման գրքի կազմի վրա նշվում է տնտեսավարող սուբյեկտի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու (բնակության) վայրը և գրքի հերթական համարը: Առևտրի իրականացման վայրի (կետի) հասցեն տնտեսավարող սուբյեկտի գտնվելու (բնակության) վայրից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի (կետի) հասցեն:

Լրացված - ավարտված գրանցման գրքերը պահվում են տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ մինչև այդ գրքում ամենավերջին գրանցման օրից սկսած 3 տարին լրանալը և ներկայացվում են հարկային մարմիններին նրանց պահանջի դեպքում: Գրանցման գրքի լրանալուց - ավարտվելուց հետո տնտեսավարող սուբյեկտը սահմանված կարգով նոր գրանցման գիրք է ներկայացնում հարկային մարմին՝ կնքման և համարակալման համար: Մինչև գրանցման գրքի լրանալ-ավարտվելը տնտեսավարող սուբյեկտը սահմանված կարգով կարող է նոր գրանցման գիրք ներկայացնել հարկային մարմին՝ կնքման և համարակալման: Նոր գրանցման գրքում գրանցումները կատարվում են հարկային մարմին ներկայացված՝ լրացված-ավարտված գրանցման գրքի վերջին գրառումից անմիջապես հետո հարկային մարմնի կողմից «Գիրքն ավարտված է» նշումը կատարվելուց և կնքվելուց հետո:

Լրացված-ավարտված գրքում գրանցված, սակայն չիրացված (չվաճառված) արտադրանքի, ապրանքների մնացորդը շարունակվում է հաշվառվել լրացված-ավարտված գրքում՝ մինչև իրացումը (վաճառքը), բացառությամբ գնային փոփոխությամբ պայմանավորված նոր տողից գրանցման դեպքերի:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելու, առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքը, ապրանքները սահմանված կարգով չգրանցելու դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝**

- **հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 25%-ի չափով, այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար: Տուգանքը ենթակա է վճարման հարկային տեսչության կողմից խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է.**
- **խախտումն արձանագրվելուց հետո 1 տարվա ընթացքում չգրանցելու կրկնակի փաստ արձանագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ չգրանցված առարկաների վաճառքի (իրացման) գներով արտահայտված (հաշվարկված) ամբողջ արժեքի 50%-ի չափով, այդ թվում՝ վաճառված (իրացված) մասի համար: Տուգանքը ենթակա է վճարման հարկային տեսչության կողմից կրկնակի խախտման փաստն արձանագրվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում: Նշված ժամկետում տուգանքը չմուծելու դեպքում այն կրկնապատկվում է.**
- **Տուգանքները չեն կիրառվում, եթե խախտումները կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանում, որի համար սահմանված կարգով ներկայացված են հաշվապահական հաշվետվություններ (հայտարարագրեր) կամ իրացման շրջանառությունից (համախառն եկամտից) բխող հարկային պարտավորություններն արտացոլող՝ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր.**
- **տուգանքների կիրառումը հարկ վճարողին չի ազատում սահմանված հարկային պարտավորությունների կատարումից:**

**Սահմանված կարգով հաշվառում չվարելու համար նախատեսված է նաև վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169$^{1}$-րդ հոդվածով:**

Պարզեցված հարկ վճարողներն այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում գործունեության այդ մասով վարում են եկամուտների և ծախսերի հաշվառման գրքեր: Հաշվառման գրքի էջերը համարակալվում են, կարվում և կազմվում են ու ներկայացվում պարզեցված հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային մարմին՝ կնքման:

---

[13] հաստատված է ՀՀ կառավարության 31.07.1997թ N315 որոշմամբ (ուժի մեջ է մտել 15.08.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/17, 31.07.19997թ.)

Հարկային մարմինը պարտավոր է կնքել և վերադարձնել հաշվառման գիրքը 1 օրացուցային օրվա ընթացքում: Հաշվառման գրքի կազմի վրա նշվում է պարզեցված հարկ վճարողի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը, հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու (բնակության) վայրի հասցեն և գրքի հերթական համարը: Գործունեության վայրի հասցեն պարզեցված հարկ վճարողի գտնվելու (բնակության) վայրի հասցեից տարբերվելու դեպքում նշվում է նաև այդ վայրի հասցեն:

Պարզեցված հարկով հարկվող գործունեության յուրաքանչյուր տեսակի համար վարվում է առանձին հաշվառման գիրք: Կնքված և համարակալված հաշվառման գիրքը խիստ հաշվառման փաստաթուղթ է և հերթական համարով հաշվառվում է հարկային մարմնում: Լրացված ավարտված հաշվառման գրքերը պահվում են պարզեցված հարկ վճարողի մոտ` մինչև` այդ գրքում ամենավերջին գրանցման օրվանից սկսած երեք տարին լրանալը: Հաշվառման գրքի լրանալուց ավարտվելուց հետո պարզեցված հարկ վճարողը նշված կարգով նոր հաշվառման գիրք է ներկայացնում հարկային մարմին` կնքման և համարակալման համար:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Պարզեցված հարկ վճարողի կողմից սահմանված կարգով հաշվառում չվարելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $169^{1}$-րդ հոդվածով:**
**Պարզեցված հարկ վճարող կազմակերպությունները ու անհատ ձեռնարկատերերը այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կարող են`**

- **չվարել առաքվող, տեղափոխվող ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր.**
- **չվարել արտադրանքի, ապրանքների եւ դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր.**
- **հարկային մարմիններ չներկայացնել ֆինանսական (հաշվապահական) հաշվետվություններ:**

## ԳՈՐԾԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՀԱՇՎԱՌՈՒՄ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածին համապատասխան` գործատուի կողմից վարձու աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագիրը նույն օրը գրանցվում է գործատուի աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում: Աշխատանքային պայմանագրի գրանցման կարգը, գրանցամատյանի ձևը, դրա վարման ու պահպանման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը[14]:

Աշխատանքի ընդունման, նույն գործատուի մոտ այլ աշխատանքի փոխադրման պայմանագրերը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի լուծումը գրանցվում է գրանցամատյանում, որի էջերը համարակալվում, կնքվում են գործատուի կնիքով կամ անհատ ձեռնարկատիրոջ ստորագրությամբ: Գրանցամատյանի վարումը և պահպանումն իրականացվում է գործատուի կամ գործատուի ներկայացուցչի կողմից, այն պահվում է գործատուի կենտրոնական գրասենյակում (գործունեության իրականացման վայրում): Իրավաբանական անձի կողմից ստեղծված ներկայացուցչություններում և մասնաճյուղերում պահվում են գործատուի կողմից վավերացված գրանցամատյանից քաղվածքը և պայմանագրերի պատճենները` ներկայացուցչություններում և մասնաճյուղերում աշխատողների մասով:

**Վարձու աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագիրը սահմանված ժամկետում գործատուի աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանում չգրանցելու կամ աշխատանքային պայմանագրերի գրանցամատյան չվարելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի $169^{7}$-րդ հոդվածով:**

Յուրաքանչյուր ապահովադիր, մինչև ընթացիկ տարվա ապրիլի 1-ը ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տարածքային կենտրոն է ներկայացնում[15] իր մոտ աշխատող յուրաքանչյուր ապահովագրված անձի հաշվարկային ժամանակահատվածի (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) մասին անհատական տվյալները:

Ապահովադիրն ապահովագրված անձի անհատական հաշվում ներառելու համար տարածքային կենտրոն անհատական հաշվետվության ձևով ներկայացված և ընդունված տվյալների կրկնօրինակը` ապահովագրված անձի դիմելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնում է նրան: Տարածքային կենտրոն ներկայացված փաստաթղթերում ապահովադրի կողմից սխալներ հայտնաբերվելու դեպքում ներկայացվում են ճշտված անհատական տվյալներ: Իրավաբանական անձ հանդիսացող ապահովադրի կողմից տարածքային կենտրոն ներկայացվող անհատական տվյալները հաստատվում են կազմակերպության կնիքով և ղեկավարի ստորագրությամբ: Իրավաբանական անձ չհանդիսացող ապահովադրի կողմից տարածքային կենտրոն ներկայացվող անհատական տվյալները հաստատվում են նրա ստորագրությամբ:

---

[14] հաստատված է ՀՀ կառավարության 16.06.2006թ N875-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 22.07.2006թ., հրապարակված է ՀՀՊՏ2006/38(493), 12.07.2006թ.)

[15] հաստատված է ՀՀ կառավարության 12.05.2005թ N938-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 16.08.2005թ., հրապարակված է ՀՀՊՏ2005/48(420), 27.07.2005թ.)

# ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԵՎ ՎՃԱՐԵԼ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հարկ վճարող ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները), հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են.

- ինքնուրույն հաշվարկել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով[16] սահմանված հարկերը, սահմանված կարգով ու ժամկետներում վճարել ՀՀ պետական և (կամ) համայնքների բյուջեներ, հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և սահմանված կարգով կատարելով նաև դրանց կանխավճարային մուծումներ.
- օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում կամ գրանցումներ), կազմել հաշվետվություններ ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ, սահմանված ժամկետներում հարկային տեսչություն ներկայացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, տեղեկությունները և այլ փաստաթղթերը, ներկայացնել հարկային արտոնությունների իրենց իրավունքը հաստատող փաստաթղթեր՝ կախված իրականացվող գործունեության տեսակից, իրացման շրջանառության ծավալներից, հարկման ռեժիմից և այլն: Առանձին հարկատեսակների մասին օրենքներով հարկ վճարողները սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են ներկայացնել նաև ճշտված հաշվետվական ձևեր:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Հարկային մարմինների կողմից հարկ վճարողների մոտ իրականացվող ստուգումների ընթացքում կամ ստուգումների ավարտից հետո հարկային մարմին ներկայացված ստուգվող կամ արդեն ստուգված ժամանակաշրջաններին վերաբերող հարկային հաշվարկների ճշտում չի իրականացվում:**
>
> **Որպես կանոն, եթե որևէ հաշվետվության ներկայացման օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա դրա ներկայացման վերջին ժամկետ է համարվում ոչ աշխատանքային օրվան անմիջապես հաջորդող առաջին աշխատանքային օրը:**

Հաշվետվությունները, հաշվարկները, տեղեկությունները և այլ փաստաթղթերը հարկ վճարողները հարկային մարմին կարող են ներկայացնել երկու ճանապարհով՝ առձեռն (հանձնելով դրանք հարկային մարմին ըստ պատկանելության) և փոստի միջոցով[17]:

Հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված է նաև հաշվետվությունների՝ էլեկտրոնային փոստով ներկայացման դրույթ, սակայն դրա ընթացակարգը դեռևս կանոնակարգման փուլում են (կսահմանվեն ՀՀ կառավարության կոմից):

Ինչ վերաբերում է փոստի միջոցով հաշվետվությունների ներկայացմանը, ապա հարկ վճարողները դրանք հարկային մարմին կարող են ներկայացնել միայն պատվիրված նամակով: Վերջինիս ներկայացման օր է համարվում փոստային բաժանմունքի ընդունման օրվա օրացուցային կնիքի արտատիպը: Փոստային բաժանմունքի կողմից նամակի ընդունման օրը հավաստող օրացուցային կնիքի արտատիպի բացակայության կամ վնասվածության, կամ դրա բացահայտ անընթեռնելիության դեպքում այդ նամակները չեն ընդունվում հարկային մարմնի կողմից: Նամակում հաշվետվությունների հետ առանձին լրացվում է պարունակության նկարագրությամբ թերթիկ՝ ծրարում պարունակվող հաշվետվությունների ցանկի: Թերթիկի բացակայության դեպքում փոստի միջոցով ներկայացված բոլոր հաշվետվությունները հարկային մարմնի կողմից այդ հաշվետվություններն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում փոստի միջոցով կամ առձեռն՝ համապատասխան հիմնավորմամբ հետ են վերադարձվում հարկ վճարողին:

## ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հարկերի (այդ թվում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարներ: Հարկային պարտավորությունը դադարում է՝

- պարտավորության կատարմամբ,

---

[16] «Հարկերի մասին» 14.04.1997թ. ՀՕ-107 օրենք, ուժի մեջ է մտել 30.05.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ 1997/11, 20.05.1997թ.

[17] ՀՀ կառավարության 16.02.2006թ «Հարկային և պարտադիր այլ վճարների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթերը և հաշվետվությունները փոստի միջոցով հարկային մարմին ներկայացնելու պարզեցված ընթացակարգը հաստատելու մասին» թիվ 471-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան (ուժի մեջ է մտել 13.05.2006 թ., հրապարակված է ՀՀՊՏ 2006/25(480), 03.05.2006 թ.):

- հարկի վերացմամբ,
- հարկից ազատելու արտոնության սահմանմամբ,
- հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, իսկ ֆիզիկական անձի համար՝ նաև նրա մահվան դեպքում, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

## ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ

Բացի «անմիջականորեն» իրենց գործունեությանը վերաբերող հաշվետվություններից, գոյություն ունեն նաև օրենքով սահմանված մի շարք դեպքեր, երբ հարկ վճարողները հարկային պարտավորություն են կրում (այդ թվում հարկերի պահման և բյուջե փոխանցման, հաշվարկների և հաշվետվությունների ներկայացման) նաև այլ անձանց փոխարեն: Հարկային գործակալը այլ հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող) իրավաբանական անձն է (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձի հիմնարկը, մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը), անհատ ձեռնարկատերը, նոտարը, հիմնարկը, տեղական ինքնակառավարման մարմինը, որի վրա օրենքով դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը հաշվարկելու, պահելու (գանձելու) և պետական կամ համայնքների բյուջեներ վճարելու պարտավորությունը:

Եթե հարկային գործակալ հանդիսացող գործատուն աշխատանքային պայմանագրով աշխատող անձանցից (վարձու աշխատողներից) ժամանակին չի պահել (գանձել) հարկի գումարները, ապա դրանք վարձու աշխատողներից պահվում (գանձվում) են այդ մասին հայտնի դառնալուց ոչ ավել, քան վերջին 3 ամսվա համար, իսկ մնացած հարկային պարտավորությունները դրվում են գործատուի վրա:

## ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԸ ԽԱԽՏԵԼԸ

ՀՀ հարկային օրենսդրությամբ և հարկային հարաբերությունները կարգավորող իրավական այլ ակտերով սահմանված են նաև պատասխանատվության համապատասխան նորմեր հաշվարկներ, հաշվետվություններ չկազմելու և չներկայացնելու համար, մասնավորապես՝

> **Հոդված 22.** *Եթե հարկ վճարողը չի ներկայացնում հարկվող օբյեկտների գծով հաշվապահական (նաև այլ) հաշվառման փաստաթղթեր, կամ դրանք վարում է սահմանված կարգի կոպիտ խախտումներով, կամ ակնհայտ կեղծ տվյալներ է մտցնում ներկայացված հաշվետվություններում, հաշվարկներում, և այլ փաստաթղթերում, որի հետևանքով անհնար է դառնում հարկ վճարողի հարկային պարտավորությունների հաշվարկումը, ապա այն հաշվարկվում է հարկային մարմնի կողմից:*

> **Հոդված 24.** *Հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկները օրենսդրությամբ սահմանված ժամկետից 2 ամսից ավել ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված հարկի ընդհանուր գումարի 5%-ի չափով, բայց ոչ ավել, քան այդ հարկի ընդհանուր գումարն է:*

> **Հոդված 25.** *Հաշվառում և (կամ) գրանցումներ) չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից (հարկային գործակալից) գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի 10%-ի չափով:*

## ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Հարկերի և պարտադիր այլ վճարների վճարումը ՀՀ պետական, պարտադիր սոցիալական ապահովագրության կամ համայնքային բյուջեներ կատարվում է բանկային համակարգի միջոցով: Ինչպես վճարման հանձնարարականով միջոցների փոխանցման (անկանխիկ հաշվարկների), այնպես էլ կանխիկ միջոցների փոխանցման (կանխիկ հաշվարկների) ժամանակ անհրաժեշտ է՝

- անկանխիկ հաշվարկների դեպքում ապահովել վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի (վճարման հանձնարարականների) նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնների[18] պահպանումը՝
    - վճարման հանձնարարականի համարը և այն բանկ ներկայացնելու ամսաթիվը (օր, ամիս, տարի),

---

18 ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 20.05.2004թ. «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանները և դրանց լրացման կանոնները» նոր խմբագրությամբ հաստատելու մասին» N131-Ն որոշում, ուժի մեջ է մտել 11.07.2004թ, հրապարակված է ՀՀԳՆԱՏ 2004/15(163), 01.07.2004թ.

- վճարման հանձնարարականը ուղարկողի անունը կամ անվանումը, վճարման հանձնարարականը ստացող բանկի (մասնաճյուղի) անվանումը և դեբետագրվող հաշիվը (ուղարկողի հաշվի համարը վճարման հանձնարարականը ստացող բանկում (մասնաճյուղում)),
- շահառուի անունը կամ անվանումը (ՀՀ պետական, պարտադիր սոցիալական ապահովագրության կամ համայնքային բյուջեներ),
- շահառուի բանկի (մասնաճյուղի) անվանումը (ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարան),
- կրեդիտագրվող հաշիվ (շահառուի հաշվի համարը շահառուի բանկում (մասնաճյուղում)[19], ինչպես նաև հարկ վճարողին (ապահովադրին) հաշվառող կամ ֆիզիկական անձի հաշվառման վայրի համապատասխան հարկային տեսչության բանկային նիշը (կոդը)[20]
- արժույթը (կոդով և բառերով)՝ կոդը լրացվում է համաձայն ԻՍՕ 4217 ստանդարտի (հարկերը և պարտադիր այլ վճարները համապատասխան բյուջեներ պարտադիր կարգով վճարվում են ՀՀ դրամով),
- գործարքի նպատակը՝ ցանկալի է, իսկ օրենքով սահմանված դեպքերում անհրաժեշտ է նշել վճարման կոնկրետ նպատակը (հարկատեսակ, վճարատեսակ, ստուգման արդյունքեր, օրենսդրությունը խախտելու համար տուգանքներ և այլն), այն հաշվետու ժամանակահատվածը, որին վերաբերվում է վճարումը, ինչպես նաև հարկային կամ պարտադիր այլ վճարի կոնկրետ պարտավորությունը (հարկի գումար, տուգանք, տույժ),
- ուղարկողի (վճարողի) ստորագրությունը և վավերայումը կնիքով (եթե ուղարկողն իրավաբանական անձ է), հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) և ապահովադրի ծածկագիրը, ֆիզիկական անձանց համար՝ նաև սոցիալական ապահովության քարտի համարը («Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի[21] 11-րդ հոդվածով սահմանված՝ հարկեր, տուրքեր, պարտադիր սոցիալական ապահովագրության և պարտադիր այլ վճարներ վճարելու դեպքերում):

■ կանխիկ հաշվարկների ժամանակ կիրառվող վճարահաշվարկային փաստաթղթերի (մուտքի հայտարարություն (հայտարարագիր, անդորրագիր, օրդեր), մեմորիալ օրդեր, դրամարկղի մուտքի օրդեր և այլն) կազմման համար բանկին տեղեկացնել վճարողին ու վճարմանը վերաբերող՝ վերոնշյալ պարտադիր վավերապայմանների մասին (մյուս պարտադիր վավերապայմանները կապահովի բանկը):

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
> **Եթե վճարման համար սահմանված վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա վճարման ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:**

| ՀՀ ԿԱ ՀՊԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[22] ԲԱՆԿԱՅԻՆ ՆԻՇԵՐԻ (ԿՈԴԵՐԻ) ՑԱՆԿ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Խոշոր հարկ վճարողների ՀՏ | 23 | Աշտարակի ՏՀՏ | 51 | Կոտայքի ՏՀՏ | 62 |
| Ակցիզային հարկ վճարողների ՀՏ | 33 | Ախուրյանի ՏՀՏ | 22 | Հրազդանի ՏՀՏ | 61 |
| Բանկերի և վարկային կազմակերպությունների ՀՏ | 66 | Անիի ՏՀՏ | 24 | Մասիսի ՏՀՏ | 94 |
| Հանքարդյունաբերողների ոլորտային ՀՏ | 46 | Ապարանի ՏՀՏ | 53 | Մարտունու ՏՀՏ | 73 |
| Արաբկիրի ՀՏ | 11 | Արարատի ՏՀՏ | 92 | Մեղրու ՏՀՏ | 87 |
| Արաբկիրի 1 ՀՏ | 38 | Արթիկի ՏՀՏ | 26 | Նաիրիի ՏՀՏ | 63 |
| Էրեբունու ՀՏ | 12 | Արմավիրի ՏՀՏ | 81 | Նոյեմբերյանի ՏՀՏ | 44 |
| Խորհրդայինի ՀՏ | 13 | Արտաշատի ՏՀՏ | 91 | Չարենցավանի ՏՀՏ | 64 |

[19] Տեղեկատվական թերթիկի հետագա տեքստում բերված են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչությունում հարկերի և պարտադիր այլ վճարների համար գործող հաշվի համարները, որոնց փոփոխվելու արդյունքում հետագա բարդություններից խուսափելու համար անհրաժեշտ է այդ հաշվի համարները պարբերաբար ճշտել համապատասխան բանկում (մասնաճյուղում).

[20] ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային տեսչությունների բանկային նիշերի (կոդերի) գործող ցանկը բերված է հաջորդիվ.

[21] «Սոցիալական ապահովության քարտերի մասին» 24.09.2003թ. ՀՕ-1-Ն օրենք, ուժի մեջ է մտել 01.11.2003թ., հրապարակված է ՀՀՊՏ2004/52(287), 22.10.2003թ.

[22] հաստատված է ՀՀ կառավարության 21.11.2002թ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1926-Ն որոշման (ուժի մեջ է մտել 17.12.2002թ., հրապարակված է ՀՀՊՏ2002/58 (233) , 26.12.2002թ.) N2 հավելվածով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մաշտոցի ՀՏ | 14 | Գավառի ՏՀՏ | 71 | Սպիտակի ՏՀՏ | 35 |
| Սպանդարյանի ՀՏ | 18 | Գյումրու ՀՏ | 21 | Ստեփանավանի ՏՀՏ | 34 |
| Սպանդարյանի 1ՀՏ | 40 | Գորիսի ՏՀՏ | 89 | Սիսիանի ՏՀՏ | 88 |
| Մյասնիկյանի ՀՏ | 15 | Դիլիջանի ՏՀՏ | 42 | Սևանի ՏՀՏ | 74 |
| Շահումյանի ՀՏ | 16 | Եղեգնաձորի ՏՀՏ | 56 | Վայքի ՏՀՏ | 57 |
| Շենգավիթի ՀՏ | 17 | Էջմիածնի ՏՀՏ | 82 | Վանաձորի ՀՏ | 31 |
| Քանաքեռ-Զեյթունի ՀՏ | 10 | Թալինի ՏՀՏ | 52 | Վարդենիսի ՏՀՏ | 75 |
| Ավանի ՀՏ | 37 | Թումանյանի ՏՀՏ | 32 | Տաշիրի ՏՀՏ | 36 |
| Դավթաշենի ՀՏ | 39 | Իջևանի ՏՀՏ | 41 | Տավուշի ՏՀՏ | 43 |
| Նորք-Մարաշի ՀՏ | 45 | Կապանի ՏՀՏ | 86 | | |

## ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԸ

- Սահմանված ժամկետներից վճարումներն ուշացնելու դեպքում, վճարման համար սահմանված ժամկետի վերջին օրվանը հաջորդող օրվանից սկսած (բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար) ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային գործակալը) պարտավոր է վճարել տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15%-ի չափով: Տույժը կիրառվում է՝
  - օրենքով սահմանված ժամկետում չվճարված հարկի գումարների նկատմամբ,
  - հարկային գործակալի կողմից այլ հարկ վճարողներին վճարված եկամուտներից պահման (գանձման) ենթակա ու օրենքով սահմանված ժամկետում բյուջե չվճարված հարկի գումարների նկատմամբ,
  - օրենքներով սահմանված դեպքերում ու ժամկետներում կանխավճարների չկատարված գումարների նկատմամբ,
  - ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով օրենքով սահմանված (հարկային մարմնին կողմից ակտը ներկայացնելուց հետո 10-օրյա) ժամկետում չվճարված հարկերի գումարների նկատմամբ:
- Հարկային պարտավորությունների գումարների վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի՝
  - սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար,
  - վճարման համար օրենքով սահմանված ժամկետին հաջորդող 183 օրվա ընթացքում հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու հայցով սահմանված կարգով դիմել դատարան (բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած դեպքերի) և այդ հայցից չի կարող հրաժարվել, քանի դեռ հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն,
  - չկատարված հարկային պարտավորությունը 600,0 հազ. և ավելի դրամ կազմելու դեպքում հարկ վճարողի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա սահմանված կարգով[23] դնել արգելանք (առաջնահերթության կարգով կիրառվում է հարկ վճարողի նախ բանկային հաշիվների, ապա անշարժ գույքի, այնուհետև այլ ակտիվների նկատմամբ) մինչև դատարանի վճռի կայացումը (բացառությամբ օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը): Դատարանի վճռից հետո հարկային մարմինը սահմանված կարգով[24] ապահովում է բռնագանձված գույքի իրացումը, իսկ հարկ վճարողի գույքի արգելադրումից հետո 30-օրյա ժամկետում, դատարանի վճիռը չապահովելու դեպքում հարկ վճարողի գույքը համարվում է արգելանքից հանված,
  - որպես հարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և հարկ վճարողի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

---

[23] հաստատված է ՀՀ կառավարության 11.05.2002թ N520 որոշմամբ (ուժի մեջ է մտել 11.05.2002 թ., հրապարակված է ՀՀՊՏ2002/17(192) ,05.06.2002թ.)

[24] հաստատված է ՀՀ կառավարության 11.05.2002թ N520 որոշմամբ (ուժի մեջ է մտել 11.05.2002թ., հրապարակված է ՀՀՊՏ2002/17(192), 05.06.2002 թ.)

- Հարկերը սահմանված ժամկետում չվճարելու համար սահմանված է նաև վարչական պատասխանատվություն՝ տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի 10-ապատիկից 20-ապատիկի չափով (Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170$^{3}$-րդ հոդված),
- Հարկերը (խոշոր չափերով) վճարելուց խուսափելու համար սահմանված է նաև քրեական պատասխանատվություն (ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ և 206-րդ հոդվածներ):

## ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՎԵԼ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ

- Հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարները) հարկային մարմնի կողմից հաշվանցվում են հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների (հաշվարկված տույժերի, տուգանքների՝ ապա հարկերի) հաշվին կամ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին հարկ վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում:
- ԱԱՀ-ով և ակցիզային հարկով հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված գումարների և հաշվանցման (վերադարձման) ենթակա հարկի գումարների միջև առաջացող բացասական տարբերությունը հաշվանցվում (վերադարձվում) է այդ հարկատեսակների մասին օրենքներով սահմանված կարգով:
- Շահութահարկի և եկամտահարկի տարեկան կանխավճարային մուծումների, եկամտահարկի նվազագույն չափի և վերջնական հարկային պարտավորության միջև առաջացող բացասական տարբերությունը հաշվանցվում է ընդհանուր սահմանված կարգով, եթե այդ հարկատեսակների մասին օրենքներով այլ բան նախատեսված չէ:
- Հարկային գործակալի կողմից ավել գանձված հարկի գումարները վարձու աշխատողներին վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից 1 ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավել գանձման օրվան հաջորդող երեք տարվա համար (վերադարձնելու մասին հարկ վճարողի դիմումը կասեցնում է նշված ժամկետի ընթացքը):

### ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

| ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ[25] | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ | |
|---|---|---|---|
| | | Իրավաբանական անձինք | Ֆիզիկական անձինք |

ԱԱՀ վճարող են համարվում ինքնուրույն տնտեսական (ձեռնարկատիրական) գործունեություն վարող ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են օրենքով սահմանված հետևյալ գործարքները (գործառնություններ).

- ապրանքների (այդ թվում՝ արտադրանքի և անշարժ գույքի) մատակարարում՝ սեփականության իրավունքը հատուցման դիմաց այլ անձի փոխանցում.
  - ֆիզիկական անձանց անձնական գույքի օտարումը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, ապրանքների մատակարարում չի համարվում,
  - ԱԱՀ-ով հարկման առումով, ֆիզիկական անձանց պատկանող բնակելի շինության օտարումը չի դիտվում որպես ԱԱՀ-ով հարկվող գործարք,
- ծառայությունների մատուցում՝ ապրանքների մատակարարում չհամարվող գործարք (գործառնություն) որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց (ներառյալ՝ ոչ նյութական ակտիվների իրացումը (փոխանցումը), ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը),
- անհատույց (մասնակի հատուցմամբ) սպառում՝ ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում (ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով) փվյալ անձանց կամ այլ անձանց (բացառությամբ օրենքով կամ իրավական այլ ակտով սահմանված դեպքերի),
- «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

---

[25] «Ավելացված արժեքի հարկի մասին» 14.05.1997թ. ՀՕ-118 օրենք, ուժի մեջ է մտել 01.07.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/14, 21.06.1997թ.

ԱԱՀ վճարողներն ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելու դեպքում պարտավոր են դուրս գրել հարկային հաշիվներ՝ օրենքով սահմանված կարգի հաշվարկային փաստաթղթեր: Այն դեպքերում, երբ օրենքը թույլ չի տալիս դուրս գրել հարկային հաշիվներ (ԱԱՀ վճարող չհանդիսացող անձինք, ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չհանդիսացող կամ ԱԱՀ-ից ազատված ապրանքներ և ծառայություններ, ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով հարկվող գործարքներ), դրանց փոխարեն լրացվում են այլ հաշվարկային և վճարային փաստաթղթեր: Նշված պահանջները խախտելու և հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը սահմանված ընդհանուր կարգով վճարել բյուջե:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱԱՀ վճարող անձինք պարտավոր են ժամանակագրական կարգով հաշվառել և դուրսգրման օրվան հաջորդող առնվազն 3 տարի պահպանել իրենց կողմից տրված բոլոր հարկային հաշիվների պատճենները, ապրանքների ու ծառայությունների ձեռքբերման ժամանակ ԱԱՀ-ի վճարումը հաստատող հաշիվները, ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային մարմիններին ԱԱՀ-ի վճարումը հաստատող հայտարարագրերը, ինչպես նաև ԱԱՀ-ի հաշվարկմանը և վճարմանը վերաբերող մյուս փաստաթղթերը:**

Եթե ԱԱՀ վճարող անձինք միաժամանակ իրականացնում են ԱԱՀ-ով հարկվող և ԱԱՀ-ով չհարկվող գործարքներ (ներառյալ՝ ԱԱՀ-ից ազատված, հարկման օբյեկտ չհամարվող, հաստատագրված վճարներով, պարզեցված հարկով հարկվող գործարքներ, ինչպես նաև այնպիսի գործարքներ, որոնց վրա չի տարածվում օրենքի գործողությունը), ապա նրանք կարող են հաշվանցել (պակասեցնել պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարից) միայն հարկվող գործարքների իրականացման համար ձեռք բերված ապրանքներին և ծառայություններին վերաբերող (այդ թվում՝ մաքսային մարմինների կողմից գանձված) ԱԱՀ-ի գումարները: Այդ նպատակով ԱԱՀ վճարողները պարտավոր են վարել հարկվող և չհարկվող գործարքների առանձնացված հաշվառում: Եթե նման առանձնացված հաշվառման իրականացումն անհնարին է, ապա հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է ելնելով իրականացված բոլոր գործարքների շրջանառության (առանց ԱԱՀ) մեջ հարկվող գործարքների շրջանառության (առանց ԱԱՀ) տեսակարար կշռից:

ԱԱՀ-ի հաշվետու (ԱԱՀ-ի հաշվարկների ներկայացման) ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր եռամսյակը: Բացառություն են կազմում այն ԱԱՀ վճարողները, որոնց կողմից իրականացված գործարքներից ստացված հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60 մլն. դրամը: Վերջիններիս համար ԱԱՀ-ի հաշվարկման, հաշվարկների ներկայացման և վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**60,0 մլն. դրամը որոշելիս հաշվի է առնվում հաշվետու տարվա ընթացքում իրականացված բոլոր գործարքների ընդհանուր հասույթը, անկախ նրանից թե այդ գործարքները ինչպես են հարկվել՝ հարկի 20%, թե 0% դրույքաչափով, համարվել են ԱԱՀ-ով չհարկվող կամ ԱԱՀ-ից ազատված, հարկվել են պարզեցված հարկով կամ հաստատագրված վճարներով:**

ԱԱՀ վճարողները մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին (եռամսյակ, ամիս) հաջորդող ամսվա 20-ը իրենց գրանցման վայրի հարկային մարմին (հարկային տեսչություն) են ներկայացնում պետական բյուջե ԱԱՀ-ի վճարման համար համապատասխան հաշվարկներ: ԱԱՀ վճարողների կողմից ԱԱՀ-ի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով նրանք կարող են ներկայացվել ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկներ (բացառությամբ այն դեպքերի, երբ նրանք օրենքի համաձայն իրավունք չունեին, սակայն դուրս են գրել հարկային հաշիվներ):

ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև դրան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում տեղեկություններ՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ: Ընդ որում, այդ տեղեկություններում ԱԱՀ վճարող անձը ներառում է տեղեկություններ միայն այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում ներառված հարկվող շրջանառության արժեքը (առանց ԱԱՀ-ի) գերազանցում է 100,0 հազար դրամը[26]:

[26] Նշված չափը սահմանված է ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 30-ի «Հարկային մարմիններ տեղեկություններ ներկայացնելու նպատակով՝ հարկ վճարողների հարկային հաշիվներում ցույց տրված հարկվող շրջանառության չափը սահմանելու մասին» N481 որոշմամբ, ուժի մեջ է մտել 01.07.2001 թ., հրապարակված է ՀՀՊՏ 2001/16(148), 12, 06, 2001 թ.:

| ՀՀ մաքսային մարմինների կողմից հաշվարկվող և գանձվող ԱԱՀ | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները |
|---|---|

ՀՀ փարածք ներմուծվող ապրանքներից ԱԱՀ հաշվարկվում և գանձվում են մաքսային մարմինները (ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող մաքսափուրքի ու ակցիզային հարկի գումարը): Ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ-ի հաշվարկումը և գանձումը հիմնավորվում է մաքսային ձևակերպման ժամանակ լրացվող մաքսային հայտարարագրերով և վճարային փաստաթղթերով (վճարման հանձնարարագիր, անդորրագիր կամ վճարումը հաստատող այլ փաստաթղթեր): ՀՀ ներմուծվող ապրանքներից ԱԱՀ չի գանձվում հետևյալ դեպքերում՝

- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ միայն օրենքով[27] սահմանված ցանկում ընդգրկված ապրանքների ներմուծում, որոնց մաքսափուրքի դրույքաչափը սահմանված է 0%, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման,
- օրենքով սահմանված՝ ներմուծման դեպքում ԱԱՀ-ից ազատված ապրանքների ներմուծում և օրենքով սահմանված կարգով ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ չհամարվող ապրանքների (գույքի) ներմուծում:

<table>
<tr><td>ԱԱՀ այն ապրանքների ներմուծման համար, որոնց մաքսափուրքի դրույքաչափը 0% չէ և որոնք ենթակա են ակցիզային հարկով հարկման</td><td rowspan="4">ԱՏԳԱԱ որոշ ծածկագրերին (որոնք սահմանված են օրենքով[28]) դասվող ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է՝<br>▪ 1 տարի ժամկետով (եթե ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70,0 մլն դրամից),<br>▪ 2 տարի ժամկետով (եթե ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70,0 մլն դրամ և ավելի).<br>Եթե մինչև նշված ժամկետների ավարտը ՀՀ տարածքում իրականացված հարկվող գործարքների համար օրենքով սահմանված կարգով հաշվարկված և վճարված ԱԱՀ-ի գումարները գերազանցում են ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի հետաձգված պարտավորությունների գումարին, ապա այդ ժամկետների ավարտից հետո հետաձգված գումարների մասով ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չի առաջանում, հակառակ պարագայում ԱԱՀ-ի հետաձգված պարտա-վորությունների դրական տարբերությունը ենթակա է վճարման նշված ժամկետը լրանալու հաշվետու ժամանակաշրջանում:</td><td>900005010112</td><td>900005020111</td></tr>
<tr><td>ԱԱՀ այն ապրանքների ներմուծման համար, որոնց մաքսափուրքի դրույքաչափը 0 % չէ, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման</td><td>900005010120</td><td>900005020129</td></tr>
<tr><td>ԱԱՀ այն ապրանքների ներմուծման համար, որոնց մաքսափուրքի դրույքաչափը 0 % է, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման</td><td>900005010146</td><td>900005020145</td></tr>
<tr><td>ԱԱՀ այն ապրանքների ներմուծման համար, որոնց մաքսափուրքի դրույքաչափը 0 % է, և որոնք ենթակա են ակցիզային հարկով հարկման</td><td>900005010138</td><td>900005020137</td></tr>
</table>

| ՀՀ հարկային մարմինների կողմից գանձվող ԱԱՀ | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները |
|---|---|

ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝

- արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները (բացառապես օրենքով սահմանված կարգով ու դեպքերում՝ հաշվի առնելով օրենքով նախատեսված սահմանափակումները),
- ներմուծված ապրանքների համար օրենքով սահմանված կարգով և չափերով ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձված (գանձման ենթակա) ԱԱՀ-ի գումարները (եթե օրենքով նախատեսված է ԱԱՀ-ի գանձում ապրանքների ներմուծման պահին):

Տնտեսական գործունեություն իրականացրած և անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը ընթացիկ տարում համարվում է ԱԱՀ վճարող, եթե նրա կողմից ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքներից հասույթի գումարը գերազանցել է 3,0 մլն. դրամը (ԱԱՀ հաշվարկվում և վճարվում է 3,0 մլն. դրամը գերազանցող մասի համար):

---

[27] «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող և ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնցից ավելացված արժեքի հարկը մաքսային մարմինների կողմից չի հաշվարկվում և չի գանձվում» 29.06.2001թ. ՀՕ-195 օրենք, ուժի մեջ է մտել 01.07.2001թ., հրապարակված է ՀՀՊՏ2001/20(152), 04.07.2001թ.

[28] «Ավելացված արժեքի հարկի մասին» 14.05.1997թ. ՀՕ-118 օրենքի (ուժի մեջ է մտել 01.07.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/14, 21.06.1997թ.) 61-րդ հոդված.

| | | | |
|---|---|---|---|
| Հայաստանի Հանրապետությունում ապրանքների մատակարարման գործարքներից ԱԱՀ | Օրենքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարը վճարվում է պետական բյուջե յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև այդ ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ.<br>ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում ***յուրաքանչյուր եռամսյակը***՝ բացառությամբ այն անձանց, որոնց կողմից ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման գործարքներից (այդ թվում անհատույց կամ մասնակի հատուցմամբ) հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60,0 միլիոն դրամը:<br>Նշված անձանց համար ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում ***յուրաքանչյուր ամիսը:*** | 900005001020 | 900005002028 |
| Հայաստանի Հանրապետությունում ծառայությունների մատուցման գործարքներից ԱԱՀ | | 900005001038 | 900005002036 |

<table>
<tr><th colspan="4">ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ</th></tr>
<tr><th rowspan="2">ՕՐԵՆՔՈՎ[29] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ</th><th rowspan="2">ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</th><th colspan="2">ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ</th></tr>
<tr><th>արտադրվող ապրանքներ</th><th>ներմուծվող ապրանքներ</th></tr>
<tr><td colspan="4">Ակցիզային հարկ վճարող են համարվում ակցիզային հարկով հարկման ենթակա՝ օրենքով սահմանված ապրանքները ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շշալցնող կամ այլ կերպ փարայավորող) իրավաբանական (այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանց ՀՀ-ում սահմանված կարգով գրանցված ներկայացուցչություններն ու մասնաճյուղերը) և ֆիզիկական անձինք՝<br>■ ՀՀ-ում սահմանված կարգով պետական գրանցում ստացած անձանց հետ կնքված պայմանագրերով և նրանց կողմից տրված հումքից (այդ թվում՝ շշալցման կամ այլ տարաներով տարայավորման) ՀՀ տարածքում արտադրվող (պատրաստվող, շշալցվող) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի վճարման պարտավորությունը կրում են այդ անձինք (պատվիրատուները),<br>■ ՀՀ-ում սահմանված կարգով պետական գրանցում չստացած անձանց հետ կնքված պայմանագրերով և նրանց կողմից տրված հումքից (այդ թվում՝ շշալցման կամ այլ տարաներով տարայավորման) ՀՀ տարածքում արտադրվող (պատրաստվող, շշալցվող) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար ակցիզային հարկի վճարման պարտավորությունը կրում են դրանք արտադրող (պատրաստող, շշալցնող) անձինք,<br>■ Որպես գրավի առարկա գրավառուին հանձնված ապրանքների տնօրինման իրավունքը օրենսդրությամբ սահմանված կարգով գրավառուին անցնելու դեպքում ակցիզային հարկի վճարման պարտավորությունը կրում է գրավատուն, եթե վերջինս օրենքի համաձայն համարվում է հարկ վճարող:</td></tr>
</table>

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձանց համար ակցիզային հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը:

Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողները յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար, մինչև դրան հաջորդող ամսվա 15-ը, համապատասխան տարածքային հարկային տեսչություն են ներկայացնում սահմանված ձևի ակցիզային հարկի հաշվարկ:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **ՀՀ ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծման դեպքում հարկ վճարող անձանց կողմից (ներմուծված ապրանքների մասով) հարկային մարմին ակցիզային հարկի հաշվարկ չի ներկայացվում:**

Ակցիզային հարկի հաշվարկ ներկայացվում է նաև արտադրողների կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված կամ ՀՀ ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարի (այդ հումքից պատրաստված ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների արտահանման դեպքում) վերադարձման համար: Հարկ վճարողի կողմից ակցիզային հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման և սահմանված կարգով դրանց ճշգրտման արդյունքներով կարող են ներկայացվել ճշգրտված հաշվարկներ:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ 200,0 հազ. դրամի չափով:**

---

[29] «Ակցիզային հարկի մասին» 07.07.2000թ. ՀՕ-79 օրենք, ուժի մեջ է մտել 01.08.2000թ., հրապարակված է ՀՀՊՏ2000/17(115), 01.08.2000թ

Հարկ վճարողն իրավունք ունի տեղեկանք պահանջել ակցիզային դրոշմանիշերի յուրաքանչյուր նմուշի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափի վերաբերյալ: Այդ տեղեկանքը հարկ վճարողին տրվում է համապատասխանաբար հարկային և մաքսային մարմինների կողմից՝ հարկ վճարողի դիմումի ստացմանը հաջորդող 15-րդ օրվանից ոչ ուշ:

<table>
<tr><td colspan="2">ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող ակցիզային հարկ</td><td colspan="2">Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները</td></tr>
<tr><td colspan="4">ՀՀ ներմուծվող ապրանքների համար օրենքով սահմանված կարգով հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձանց կողմից ակցիզային հարկը վճարվում է ներմուծման օրվանից 10 օրվա ընթացքում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:</td></tr>
<tr><td colspan="2">ՀՀ հարկային մարմինների կողմից գանձվող ակցիզային հարկ</td><td colspan="2">Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները</td></tr>
<tr><td colspan="4">ՀՀ-ում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մասով օրենքով սահմանված կարգով հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) անձինք ակցիզային հարկի գումարները վճարում են յուրաքանչյուր հաշվետու ամսվա համար՝ մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 15-ը:</td></tr>
<tr><td>գարեջուր</td><td rowspan="16">ՀՀ-ում ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներ արտադրողների կողմից ՀՀ-ում ձեռք բերված կամ ՀՀ ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց օրենքին համապատասխան վճարված ակցիզային հարկի գումարը՝<br>▪ այդ հումքից պատրաստված ապրանքների արտահանման դեպքում վերադարձվում է օրենքով սահմանված կարգով և ժամկետներում,<br>▪ օրենքով սահմանված կարգով ու դեպքերում պակասեցվում է վճարման ենթակա ակցիզային հարկի գումարից, ապրանքների իրացմանը համամասնորեն:<br>Եթե ՀՀ-ում ձեռք բերված կամ ՀՀ ներմուծված ակցիզային հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակցիզային հարկի գումարը գերազանցում է այդ հումքից պատրաստված ապրանքների համար հաշվարկված ակցիզային հարկի գումարին, ապա գերազանցող մասը հաշվանցման կամ վերադարձման ենթակա չէ:<br>ՀՀ կառավարության սահմանած կարգով ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող դրոշմավորման ենթակա ապրանքների համար ակցիզային դրոշմանիշների ձեռքբերման համար վճարված գումարը համարվում է հաշվարկված ակցիզային հարկի կանխավճար և չի կարող հաշվանցվել այլ հարկային պարտավորությունների հաշվին, բացառությամբ դրոշմավորման կարգով նախատեսված դեպքերի:<br>Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձը ՀՀ կառավարության սահմանած ժամկետից ուշացնելու կամ վերադարձման համար օրենքով սահմանված պահանջները խախտելու դեպքերում չվերադարձված կամ հետ չընդունված ակցիզային դրոշմանիշերին համապատասխան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար օրենքով սահմանված կարգով վճարվում է ակցիզային հարկ՝ ակցիզային դրոշմանիշերի վերադարձման ժամկետը լրանալու կամ դրանք հետ չընդունվելու ամսվան հաջորդող ամսվա մինչև 15-ը:<br>Վնասված ակցիզային դրոշմանիշերը սահմանված կարգով վերադարձվելու (հետ ընդունվելու) դեպքերում վերադարձման ենթակա ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար նախկինում պետական բյուջե վճարված գումարը նվազեցվում է նույն ակցիզային դրոշմանիշերի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով:</td><td>900005003026</td><td>900005004024</td></tr>
<tr><td>խաղողի և այլ գինիներ</td><td>900005003166</td><td>900005004198</td></tr>
<tr><td>փրփրուն գինիներ, գինենյութ</td><td>900005003174</td><td>900005004206</td></tr>
<tr><td>վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ</td><td>900005003182</td><td>900005004214</td></tr>
<tr><td>խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիքներ)</td><td>900005003190</td><td>900005004222</td></tr>
<tr><td>էթիլային սպիրտ</td><td>900005003208</td><td>900005004230</td></tr>
<tr><td>սպիրտային խմիչքներ</td><td>900005003216</td><td>900005004248</td></tr>
<tr><td>խաղողի գինու թորումից ստացվող թրմեր, կոնյակ</td><td>900005003224</td><td>900005004255</td></tr>
<tr><td>օղի</td><td>900005003232</td><td>900005004263</td></tr>
<tr><td>լիկյորներ, մրգօղիներ</td><td>900005003240</td><td>900005004271</td></tr>
<tr><td>շամպայն</td><td>900005032819</td><td>900005042818</td></tr>
<tr><td>ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ</td><td>900005003257</td><td>900005004164</td></tr>
<tr><td>հում նավթ և նավթամթերքներ</td><td>900005003265</td><td>900005004172</td></tr>
<tr><td>նավթային գազեր և գազանման ածխաջրածիններ (բացառությամբ բնական գազի)</td><td>900005003273</td><td>900005004180</td></tr>
<tr><td>ծխախոտի ակցիզային դրոշմանիշներ</td><td>900005003075</td><td>900005004073</td></tr>
<tr><td>այլ ակցիզային ապրանքներ</td><td>900005003018</td><td>900005004016</td></tr>
</table>

| ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ | | |
|---|---|---|
| ՕՐԵՆՔՈՎ[30] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ |
| Շահութահարկ վճարող են համարվում ՀՀ ռեզիդենտները (ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները) և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները), բացառությամբ ՀՀ պետական կառավարչական հիմնարկների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների (բյուջետային հատկացումների և ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով): Շահութահարկի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները: | | |

Շահութահարկ վճարող ռեզիդենտները շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետում հարկային մարմնին գրավոր տեղեկացնում են իրենց ընտրած հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների սկզբունքների և կանոնների, ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին: Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով ներկայացնում են շահութահարկի հաշվարկ, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը: Ներկայացված շահութահարկի հաշվարկներում հարկատուի կողմից սխալներ հայտնաբերվելու դեպքում (որոնք չեն բխում հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից) հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Շահութահարկի հաշվարկ չեն լրացնում և չեն ներկայացնում՝

- գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկ վճարողները, եթե նրանց կողմից իրացումից ստացվող այլ եկամուտների (ոչ գյուղատնտեսական արտադրանքի մասով) տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում տասը տոկոսը.
- ոչ առևտրային կազմակերպությունները, եթե ստացված միջոցները բացառապես եկամուտ չհամարվող եկամուտներ են.
- միայն հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող և (կամ) միայն պարզեցված հարկ վճարողները:

Հարկային գործակալը պարտավոր է եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, սահմանված ձևով ներկայացնել ամփոփ հաշվարկ (հաշվետվություն) իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային տեսչություն՝ անցած եռամսյակում ոչ ռեզիդենտներին վճարված եկամուտների, պահված և բյուջե վճարված շահութահարկի գումարների մասին: Հարկային գործակալը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ամփոփ հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային տեսչության մարմիններ ներկայացնել ճշտված հաշվարկ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Ոչ ռեզիդենտը հաշվետու տարվան հաջորդող ապրիլի 15-ից ոչ ուշ հարկային մարմին է ներկայացնում տարեկան եկամուտների մասին հայտարարագիր, ինչպես նաև կամայական (իր կողմից որոշված) ձևով հաշվետվություն իր գործունեության մասին: Հայտարարագրի մեջ ներառվում են հայաստանյան աղբյուրներից ստացված բոլոր եկամուտները: Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հարկային մարմինը տալիս է համապատասխան տեղեկանք՝ Հայաստանում ոչ ռեզիդենտի վճարած հարկերի մասին: Ընդ որում, նշված տեղեկանքում շահութահարկի գումարի մեջ մտցվում է նաև այն գումարը, որը պետք է վճարված լիներ, սակայն չի վճարվել սահմանված հարկային արտոնություններից օգտվելու հետևանքով:

---

30 «Շահութահարկի մասին» 30.09.1997թ. ՀՕ-155 օրենք, ուժի մեջ է մտել 01.01.1998թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/27, 03.12.1997թ.

| | | |
|---|---|---|
| Շահութահարկ 1% դրույքաչափով (նվազագույն շահութահարկ) | Ռեզիդենտի հաշվետու տարվա համար հաշվարկած շահութահարկի վճարման վերջին ժամկետն է մինչև հաջորդող տարվա ապրիլի 25-ը:<br><br>Հաշվետու տարվա ընթացքում ռեզիդենտը պարտավոր է յուրաքանչյուր ամիս՝ տվյալ ամսվա 25-ից ոչ ուշ կատարել շահութահարկի ամսական վճարումներ՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված նվազագույն շահութահարկի և շահութահարկի կանխավճարի ամսական գումարներից առավելագույնի չափով:<br><br>***Նվազագույն շահութահարկի ամսական գումարը*** որոշվում է նախորդ ամսվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվարկված եկամտի (առանց այդ եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերի) և օրենքով սահմանված նվազեցումների տարբերության գումարի 1%-ի չափով: | 900005005104 |
| Շահութահարկ ոչ պետական կազմակերպություններից (բացի օտարերկրյա ներդրումներով և ֆինանսավարկային կազմակերպություններից) | ***Նվազագույն շահութահարկի ամսական գումարը*** որոշվում է նախորդ ամսվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվարկված եկամտի (առանց այդ եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերի) և օրենքով սահմանված նվազեցումների տարբերության գումարի 1%-ի չափով: Օրենքով սահմանված որոշ ոլորտներում գործունեություն իրականացնող ռեզիդենտների համար ՀՀ կառավարությունը կարող է սահմանել[31] նվազագույն շահութահարկի ամսական գումարի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ: Ընթացիկ տարում (կամ որևէ ամսում) նվազագույն շահութահարկի ամսական գումարները չի վճարում այն ռեզիդենտը, որը՝<br>■ որևէ ամսվա համար չի ունեցել հաշվարկման բազա,<br>■ ազատված է շահութահարկի վճարումից (կամ օգտվում է 100% արտոնությունից),<br>■ որևէ ամսում իրականացրել է միայն շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) պարզեցված հարկով հարկվող գործունեություն,<br>■ պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ մինչև շահութահարկով հարկվող եկամուտներ ստանալն ընկած ժամանակահատվածի համար:<br>Հաշվետու տարվա հաշվարկած շահութահարկի գումարի՝ նվազագույն շահութահարկի տարեկան գումարից գերազանցող մասը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ լուծարման դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ շահութահարկի ամսական վճարման գումարների): Այն հաշվանցվում է միայն ռեզիդենտի հետագա տարիների շահութահարկի գումարներից (հաշվարկած շահութահարկի գումարը նվազագույն շահութահարկի տարեկան գումարից գերազանցելու դեպքում):<br>***Շահութահարկի կանխավճարի ամսական գումարը*** որոշվում է նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-ի չափով: Հաշվետու տարում, մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հաշվարկումը, կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարվում են նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս, իսկ այդ գումարը հայտնի դառնալուց հետո շահութահարկի հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը կատարված կանխավճարների ճշտում: Շահութահարկի կանխավճարների ամսական գումարները չի վճարում այն ռեզիդենտը, որը՝<br>■ նոր է հիմնադրվել՝ մինչև պետական գրանցման տարվա համար շահութահարկի հաշվարկի ներկայացման օրը (բայց ոչ ուշ, քան այդ տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը),<br>■ նախորդ տարում հարկվող շահույթ չի ունեցել՝ նախորդ տարվա շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո,<br>■ նախորդ տարվա շահութահարկի գումարը չի գերազանցել 500 հազ. դրամը՝ նախորդ տարվա շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց հետո,<br>■ ընթացիկ տարում ազատվում է շահութահարկի վճարումից (կամ օգտվում է 100% արտոնությունից),<br>■ ընթացիկ տարում եկամուտներ չի նախատեսում (գործունեություն չի իրականացնելու)՝ այդ մասին նախօրոք (նախորդ տարվա շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետից ոչ ուշ) հարկային մարմնին գրավոր հայտնելուց հետո, | 900005005021 |
| Շահութահարկ օտարերկրյա ներդրումներով կազմակերպություններից | | 900005005039 |
| Շահութահարկ ֆինանսավարկային կազմակերպություններից | | 900005005047 |
| Շահութահարկ պետական կազմակերպություններից | | 900005005013 |
| Շահութահարկ այլ կազմակերպություններից | | 900005005054 |

31 ՀՀ կառավարության 14.04.2004թ. «Նվազագույն շահութահարկի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ սահմանելու մասին» N549-Ն որոշում, ուժի մեջ է մտել 15.05.2004թ., հրապարակված է ՀՀՊՏ2004/25(324), 05.05.2004թ.

| | | |
|---|---|---|
| | ▪ ընթացիկ տարվա որևէ ամսում իրականացրել է միայն շահութահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) պարզեցված հարկով հարկվող գործունեություն,<br>▪ պետական ոչ առևտրային կազմակերպությունները՝ մինչև շահութահարկով հարկվող եկամուտներ ստանալն ընկած ժամանակահատվածում:<br>Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու դեպքում ռեզիդենտը ամսական կանխավճարի մեծությունը կարող է որոշել ինքնուրույն՝ շահութահարկի հաշվարկների ներկայացման ժամկետից ոչ ուշ՝ այդ մասին գրավոր հայտնելով հարկային տեսչության մարմիններին: | |
| Շահութահարկ ոչ ռեզիդենտից՝ աղբյուրի մոտ չհարկվող | Ոչ ռեզիդենտները հաշվետու տարվա ընթացքում պարտավոր են նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի (եթե այն գերազանցում է 2 մլն դրամը) 1/4-ի չափով կատարել շահութահարկի կանխավճարներ յուրաքանչյուր կիսամյակ՝ հաշվետու տարվա համապատասխանաբար մինչև հուլիսի 1-ը և դեկտեմբերի 31-ը:<br>Ներկայացրած տարեկան եկամուտների մասին հայտարարագրի հիման վրա հարկային մարմնի կողմից հաշվարկված շահութահարկի վերջնական գումարի վերաբերյալ վճարման ծանուցագիրը ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում ոչ ռեզիդենտը պարտավոր է կատարել շահութահարկի վճարումը (լրավճարումը): | 900005005062 |
| Շահութահարկ ոչ ռեզիդենտից՝ աղբյուրի մոտ հարկվող | ՀՀ-ում ոչ ռեզիդենտի կողմից հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտների հարկումը յուրաքանչյուր վճարման դեպքում ոչ ռեզիդենտին վճարվող եկամտի ընդհանուր գումարից օրենքով սահմանված դրույքաչափերով կատարում է հարկային գործակալը եկամտի վճարման աղբյուրի մոտ՝ եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ պահված (գանձված) շահութահարկի գումարը վճարելով բյուջե:<br>Հարկային գործակալի պահած (գանձած) գումարները համարվում են ՀՀ-ում ոչ ռեզիդենտի վճարած շահութահարկի վերջնական գումար, բացառությամբ այն դեպքի, երբ ոչ ռեզիդենտը ՀՀ-ում գործունեություն է իրականացնում ստորաբաժանման միջոցով և այդ եկամուտը ստորաբաժանման կամ վայրի գործունեության արդյունք է:<br>Եթե ոչ ռեզիդենտին վճարվող եկամուտները ստորաբաժանման գործունեության արդյունք են, ապա ստորաբաժանումն ազատվում է աղբյուրի մոտ շահութահարկի պահումից (գանձումից), բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում շահաբաժինների վճարման համար աղբյուրի մոտ շահութահարկը պահելու: | 900005005070 |

| ԵԿԱՄՏԱՀԱՐԿ | | |
|---|---|---|
| **ՕՐԵՆՔՈՎ[32] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵԿԱՄՏԱՀԱՐԿ** | **ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ** |
| Եկամտահարկ վճարող են հանդիսանում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ռեզիդենտ է այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող 12-ամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է ՀՀ-ում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է ՀՀ-ում, ինչպես նաև ՀՀ պետական ծառայության մեջ գտնվող՝ ժամանակավորապես ՀՀ տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը: Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները: | | |

Հարկային գործակալները պարտավոր են եռամսյակը մեկ, հաջորդ եռամսյակի երկրորդ ամսի 1-ից ոչ ուշ իրենց գտնվելու վայրի հարկային մարմնին ներկայացնել հաշվարկ՝ անցած եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների, պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին: Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են ներկայացվել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով տալ հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների և պահված հարկի գումարների մասին տեղեկանքներ՝ հարկային մարմիններին ներկայացնելու, ինչպես նաև այլ հարկային գործակալներին տրամադրելու համար: Ռեզիդենտ ֆիզիկական անձը եկամտահարկի գումարի վերջնական հաշվարկը կատարում է ինքնուրույ-

[32] «Եկամտահարկի մասին» 27.12.1997թ. ՀՕ-183 օրենք, ուժի մեջ է մտել 31.12.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/33, 31.12.1997թ.

նաքար և սահմանված կարգով արտայոլում է տարեկան եկամուտների մասին հայտարարագրում[33]: Ֆիզիկական անձինք իրենց տարեկան եկամուտների մասին հայտարարագիր ներկայացնում են հաջորդ տարվա մարտի 1-ից[34] ոչ ուշ (մինչև հարկային տարին ավարտվելը գործունեությունը (եկամտի աղբյուրի) դադարեցնելու և Հայաստանից մեկնելու դեպքում ոչ ուշ, քան՝ մեկնելուց մեկ ամիս առաջ:): Հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են իրենց բնակության (հաշվառման) վայրի հարկային մարմնին ներկայացնել իրենց տարեկան եկամուտների մասին հայտարարագիր, բացառությամբ այն հարկատուների, որոնք հարկային տարվա ընթացքում ստացել են.

- բացառապես օրենքով սահմանված եկամուտ չհամարվող կամ նվազեցվող եկամուտներ,
- բացառապես այնպիսի եկամուտներ, որոնցից հարկը հաշվարկելու, պահելու (գանձելու) և բյուջե վճարելու պարտավորությունը դրված է հարկային գործակալի վրա՝ անկախ հարկային տարվա ընթացքում հարկվող եկամտի մեծությունից,
- հարկային տարվա ընթացքում 250,0 դրամը չգերազանցող համախառն եկամուտ, որից հարկային գործակալի կողմից հարկի պահում չի իրականացվել,

Հայտարարագիր չեն ներկայացնում նաև անհատ ձեռնարկատերերը, որոնք հարկային տարվա ընթացքում զբաղվել են բացառապես եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարների ձևով հարկվող գործունեության տեսակներով և (կամ) միայն պարզեցված հարկ վճարողները: Հայտարարագիր չներկայացնելը հարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորությունները կատարելուց: Հայտարարագիր ներկայացվում է բոլոր այն դեպքերում, երբ եկամուտները ստացվել են ՀՀ հարկային գործակալ չհանդիսացողներից: Ֆիզիկական անձինք հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում իրավունք ունեն ճշգրտումներ մտցնել դրանցում արտայոլված տվյալներում[35]:

Հայաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների հարկումը կատարվում է օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հայաստանյան աղբյուրներից պահված հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմինների կողմից տրվում է համապատասխան տեղեկանք:

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, իրենց գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին սահմանած ձևով գրավոր տեղեկություններ ներկայացնել անցած եռամսյակում ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների ու նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների մասին այն դեպքերում, երբ սահմանված չէ եկամտահարկի պահում վճարման աղբյուրի մոտ: Կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատերերի գործունեության դադարեցման դեպքում տեղեկությունները հարկային մարմին են ներկայացվում հարկային գործակալի կողմից լուծարման (գործունեության դադարեցման) մասին պետական գրանցում իրականացնող մարմնին դիմում տալու օրվանից 5-օրյա ժամկետում:

| | | |
|---|---|---|
| Ձեռնարկա-փիրական գործունեութ-յունից սփացված եկամուփներ | Հաշվեփու փարվա փասփասի եկամփահարկի վճարման վերջին ժամկեփն է մինչև հաջորդող փարվա մայիսի 1-ը: Հաշվեփու փարում ձեռնարկափիրական գործունեությունից եկամուփներ սփացող անհափ ձեռնարկափերը պարփավոր է յուրաքանչյուր եռամսյակ, եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ, կափարել եկամփահարկի եռամսյակային վճարումներ՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված եկամփահարկի կանխավճարի եռամսյակային և նվազագույն եկամփահարկի եռամսյակային գումարներից առավելագույնի չափով: ***Եկամփահարկի կանխավճարի եռամսյակային գումարը*** որոշվում է նախորդ փարվա ձեռնարկափիրական գործունեությունից հաշվարկված եկամփահարկի գումարի 1/6-ի չափով: Հաշվեփու փարում, մինչև նախորդ փարվա եկամփահարկի գումարի հաշվարկումը, կանխավճարները կափարվում են նախորդ փարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս, իսկ փարեկան եկամուփների հայփարարագրի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարի մուծման ժամանակ կափարվում է փարվա սկզբից կափարված կանխավճարների ճշփում: | 900005006029 |

[33] «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.07.2006թ. ՀՕ-165-Ն օրենքով (ուժի մեջ է մտնելու 01.01.2008թ., հրապարակված է ՀՀՊՏ2006/43(498),09.08.2006թ.) տարեկան եկամուտների հայտարարագիրը փոխարինվելու է տարեկան եկամուտների հաշվարկով.

[34] 2008 թվականի հունվարի 1-ից հետո հաշվարկները ներկայացվելու են ապրիլի 15-ից ոչ ուշ:

[35] 2008 թվականի հունվարի 1-ից նշված դրույթը ճանաչվում է ուժը կորցրած:

| | | |
|---|---|---|
| Եկամտահարկ 1% դրույքաչափով (նվազագույն եկամտահարկ) | Կանխավճարների եռամսյակային գումարները չի վճարում այն անհատ ձեռնարկատերը, որը՝<br>▪ նոր է սկսել ձեռնարկատիրական գործունեությունը՝ պետական գրանցման տարվա ընթացքում, ինչպես նաև դրան հաջորդող տարվա առաջին երկու եռամսյակի համար (մինչև այդ տարվա հունիսի 15-ը ներառյալ հարկային մարմնին գրավոր հայտնելուց հետո).<br>▪ նախորդ տարում ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամուտ չի ունեցել՝ նախորդ տարվա տարեկան եկամուտների հայտարարագիրը ներկայացնելուց հետո.<br>▪ նախորդ տարվա ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարը չի գերազանցել 50,0 հազ. դրամը՝ նախորդ տարվա եկամտահարկի հայտարարագիրը ներկայացնելուց հետո.<br>▪ ընթացիկ տարում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ չի նախատեսում (նման գործունեություն չի իրականացնելու)՝ այդ մասին նախօրոք հարկային մարմնին գրավոր հայտնելուց հետո.<br>▪ ընթացիկ տարվա որևէ եռամսյակում իրականացրել է միայն եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) պարզեցված հարկով հարկվող գործունեություն:<br>Նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա ձեռնարկատիրական գործունեության գծով հարկվող եկամուտը պակաս նախատեսելու դեպքում անհատ ձեռնարկատերը կարող է այդ մասին նախօրոք հարկային մարմնին հայտնելով եկամտահարկի եռամսյակային կանխավճարների գումարները որոշել ինքնուրույն՝ հավասարաչափ բաշխելով ըստ եռամսյակների:<br>***Նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարը*** որոշվում է նախորդ եռամսյակի ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվարկված եկամտի (առանց այդ եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերի) և օրենքով սահմանված նվազեցումների տարբերության գումարի 1%-ի չափով: Օրենքով սահմանված որոշ ոլորտներում գործունեություն իրականացնողների համար ՀՀ կառավարությունը կարող է սահմանել նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարի հաշվարկման բազայի այլ նվազեցումներ:<br>Ընթացիկ տարում (որևէ եռամսյակում) նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարները չի վճարում այն անհատ ձեռնարկատերը, որը՝<br>▪ որևէ եռամսյակի համար չունի հաշվարկման բազա,<br>▪ որևէ եռամսյակում իրականացրել է միայն եկամտահարկին փոխարինող հաստատագրված վճարով և (կամ) պարզեցված հարկով հարկվող գործունեություն:<br>Հաշվետու տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված եկամտահարկի գումար՝ նվազագույն եկամտահարկի տարեկան գումարից գերազանցող մասը ենթակա չէ վերադարձման (այդ թվում՝ գործունեության դադարեցման դեպքում) կամ հաշվանցման այլ հարկային պարտավորությունների հաշվին (այդ թվում՝ եկամտահարկի եռամսյակային վճարման գումարների): Այն հաշվանցվում է միայն անհատ ձեռնարկատիրոջ հետագա տարիների եկամտահարկի գումարներից (հաշվարկված եկամտահարկի գումարը նվազագույն եկամտահարկի տարեկան գումարից գերազանցելու դեպքում): | 900005061115 |

| | | |
|---|---|---|
| Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ | Հաշվետու տարվա փաստացի եկամտահարկի վճարման վերջին ժամկետն է մինչև հաջորդող տարվա մայիսի 1-ը:<br>Հաշվետու տարում ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտներ ստացող անհատ ձեռնարկատերը պարտավոր է յուրաքանչյուր եռամսյակ, եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ, կատարել եկամտահարկի եռամսյակային վճարումներ՝ օրենքով սահմանված կարգով հաշվարկված եկամտահարկի կանխավճարի եռամսյակային և նվազագույն եկամտահարկի եռամսյակային գումարներից առավելագույնի չափով:<br>Եկամտահարկի կանխավճարի եռամսյակային գումարը որոշվում է նախորդ տարվա ձեռնարկատիրական գործունեությունից հաշվարկված եկամտահարկի գումարի 1/6-ի չափով: Հաշվետու տարում, մինչև նախորդ տարվա եկամտահարկի գումարի հաշվարկումը, կանխավճարները կատարվում են նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս, իսկ տարեկան եկամուտների հայտարարագրի[36] ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարի մուծման ժամանակ կատարվում է տարվա սկզբից կատարված կանխավճարների ճշտում: | 900005006029 |

[36] «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 07.07.2006թ. ՀՕ-165-Ն օրենքով (ուժի մեջ է մտնելու 01.01.2008թ., հրապարակված է ՀՀՊՏ2006/43(498), 09.08.2006թ.) տարեկան եկամուտների հայտարարագիրը փոխարինվելու է տարեկան եկամուտների հաշվարկով.

| | | |
|---|---|---|
| Աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարներից ստացված եկամուտներ | Կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը որպես հարկային գործակալ ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս օրենքով սահմանված կարգով ու դրույքաչափերով իրականացնում են եկամտահարկի պահում (գանձում), որը պարտավոր են բյուջե վճարել ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ: Հարկային գործակալը ՀՀ քաղաքացիներին եկամուտներ վճարելիս եկամահարկ չի պահում, եթե՝<br>▪ վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության արդյունք են և սահմանված կարգով կնքված է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ օրենքով պահանջվող վավերապայմաններով.<br>▪ վճարվում են խաղատներում, շահումներով խաղերում շահումներ, մրցույթներից (մրցություններից) իրային մրցանակներ:<br>Հարկային գործակալը օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ վճարելիս եկամահարկ չի պահում, եթե՝<br>▪ վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության արդյունք են և սահմանված կարգով կնքված է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ օրենքով պահանջվող վավերապայմաններով.<br>▪ վճարված եկամուտները կապված են արտաքին տնտեսական գործունեության հետ | 900005006011 |
| Փայամասնակցությունից և ավանդներից ստացված եկամուտներ | | 900005006037 |
| Այլ աղբյուրներից ստացված եկամուտներ | | 900005006045 |
| Քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտներ | Եթե ՀՀ-ում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպություններից (այդ թվում՝ դիվանագիտական և միջազգային կազմակերպություններից) ստացված եկամուտներից վճարման աղբյուրի մոտ հարկի պահում (գանձում) նախատեսված չէ, ապա եկամուտներ ստացած անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք պարտավոր են յուրաքանչյուր ամիս կատարել եկամտահարկի վճարումներ՝ տվյալ ամսվա համախառն եկամտի (հաշվի առնելով միայն օրենքով սահմանված որոշ նվազեցումներ) 10%-ի չափով՝ յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 15-ից ոչ ուշ: Հաշվետու տարվա ավարտից հետո, ելնելով հաշվարկված հարկվող եկամտից, ֆիզիկական անձինք վերահաշվարկում են եկամտահարկի գումարը:<br>Հայաստանում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից հաշվարկված եկամտահարկի վճարումը տարեկան եկամուտների հայտարարագրի հիման վրա կատարում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով: | 900005006086 |
| Եկամտահարկ ոչ ռեզիդենտից աղբյուրի մոտ չհարկվող | | 900005006060 |
| Եկամտահարկ ոչ ռեզիդենտից աղբյուրի մոտ հարկվող | | 900005006078 |

| ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ | | | |
|---|---|---|---|
| **ՕՐԵՆՔՈՎ[37] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿ** | **ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ** | |
| | | **Կազմակերպություններ** | **Ֆիզիկական անձինք** |
| Գույքահարկ վճարող են համարվում ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց ՀՀ տարածքում պատկանում է օրենքով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ ՀՀ պետական մարմինների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:<br>Գույքահարկի գումարների վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են (օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձանցից կանխիկ գանձում են) տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ գույքահարկի հաշվարկման ճշտության նկատմամբ՝ ՀՀ հարկային մարմինները: | | | |

[37] «Գույքահարկի մասին» 26.12.2002թ. ՀՕ-491-Ն օրենք, ուժի մեջ է մտել 01.01.2003թ., հրապարակված է ՀՀՊՏ2003/2 (237) 08.01.2003թ.և «Հողի հարկի մասին» 27.04.1994թ. ՀՕ-101 օրենք, ուժի մեջ է մտել 08.05.1994թ., հրապարակված է ՀՀԳԽՏ1994/8, 29.04.1994թ.

| | | |
|---|---|---|
| ՀՀ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների համար գույքահարկի գումարները վճարվում են ՀՀ պետական բյուջե | 900005008017 | 900005008025 |
| Կազմակերպությունները գույքահարկի եռամսյակային գումարները վճարում են մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ, իսկ ֆիզիկական անձինք (այդ թվում` անհատ ձեռնարկատերերը) գույքահարկի տարեկան գումարները վճարում են մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը`<br>▪ համայնքի վարչական տարածքում գտնվող շինության համար` այդ համայնքի բյուջե,<br>▪ փոխադրամիջոցի համար` կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե,<br>▪ փոխադրամիջոցի համար` ֆիզիկական անձի (գրանցման) վայրի համայնքի բյուջե, հաշվառման (գրանցման) բացակայության հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե, իսկ եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը ՀՀ տարածքից դուրս է, ապա` փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:<br>Անկախ նշված ժամկետներից` ֆիզիկական անձինք փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորություններն ամբողջությամբ պարտավոր են կատարել մինչև փոխադրամիջոցը տարեկան տեխնիկական զննության ներկայացնելը: | համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի բյուջե | |

Գույքահարկ վճարող կազմակերպություններին հաշվառող մարմին են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինները: Կազմակերպությունների գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա եռամսյակը: Եռամսյակային հաշվարկները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ ներկայացվում են`

- համայնքի վարչական սահմաններում գտնվող շինությունների համար` դրանց գտնվելու վայրի հաշվառող մարմին.
- փոխադրամիջոցների համար` կազմակերպությունների պետական գրանցման (ըստ իրավաբանական հասցեի) վայրի տարածքի հաշվառող մարմին.
- համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների համար` կազմակերպության հաշվառման վայրի տարածքը սպասարկող հարկային մարմին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Ի տարբերություն «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթի` գույքահարկի հաշվարկների ներկայացումը սահմանված ժամկետներից երկու ամսից ավել ուշացնելու դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք` հաշվարկների ներկայացման օրենքով սահմանված ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար համապատասխան բյուջե չվճարված գույքահարկի գումարի հինգ տոկոսի չափով, բայց ոչ ավելի գույքահարկի ընդհանուր գումարից:**

**Ֆիզիկական անձանց (այդ թվում` անհատ ձեռնարկատերերին) գույքահարկի հաշվարկների ներկայացումը պարտադրված չէ, նրանք կարող են գույքահարկի հաշվարկները ներկայացնել մինչև հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը:**

| | | |
|---|---|---|
| Հողի հարկ վճարող են հանդիսանում հողի սեփականատեր կամ պետական սեփականություն հանդիսացող հողերի մշտական օգտագործող կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք (այդ թվում` անհատ ձեռնարկատերերը):<br>Հողի հարկի գումարների վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են (օրենսդրությամբ սահմանված դեպքերում ֆիզիկական անձանցից կանխիկ գանձում են) տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ հողի հարկի հաշվարկման ճշտության նկատմամբ` ՀՀ հարկային մարմինները: | | |
| Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար հողի հարկը վճարվում է համապատասխան համայնքի բյուջե: | | |
| Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասերի համար հողի հարկը վճարվում է ՀՀ պետական բյուջե: | գյուղատնտեսական նշանակության հողեր | ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր |
| | 900005010013 | 900005010021 |

Ֆիզիկական անձինք (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը) հողի հարկի տարեկան գումարը համապատասխան բյուջե են վճարում հավասար մասերով, ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը և մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը:

Կազմակերպությունները իրենց կողմից հաշվարկված հողի հարկի տարեկան գումարները եռամսյակային կտրվածքով համապատասխան բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Յուրաքանչյուր ընթացիկ հաշվետու տարվա առաջին երկու եռամսյակների համար հողի հարկի վճարման եռամսյակային գումարները որոշվում են նախորդ հաշվետու տարվա համար հաշվարկված հարկի գումարի 1/4-ի չափով: Ընթացիկ հաշվետու տարվա յուրաքանչյուր հաջորդ եռամսյակի համար վճարման ենթակա հողի հարկի գումարը հաշվարկվում (վերահաշվարկվում) է տվյալ տարվա համար հաշվառող մարմին ներկայացվող հողի հարկի տարեկան հաշվարկով ներկայացված հողի հարկի գումարի հիման վրա:

Կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը համայնքների վարչական սահմաններում գտնվող հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի հողի հարկի հաշվարկները ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի տարածքը սպասարկող հարկային տեսչություն: Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող՝ հարկվող օբյեկտ համարվող հողամասերի հողի հարկի հաշվարկները կազմակերպությունը ներկայացնում է իր գտնվելու (պետական գրանցման) վայրի հարկային տեսչություն: Լրացուցիչ (նոր) ձեռք բերված (հատկացված) հողամասի համար հողի հարկի հաշվարկները ներկայացվում են սեփականության կամ օգտագործման իրավունքի ծագման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**«Հողի հարկի մասին» ՀՀ գործող օրենքով ճշտված հաշվարկների ներկայացման դրույթներ սահմանված չեն:**

**Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) հողի հարկի հաշվարկների ներկայացումը պարտադրված չէ:**

<table>
<tr><th colspan="4">ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ</th></tr>
<tr><th rowspan="2">ՕՐԵՆՔՈՎ[38] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ</th><th rowspan="2">ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</th><th colspan="2">ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ</th></tr>
<tr><th>Իրավաբանա-կան անձ</th><th>Ֆիզիկական անձ</th></tr>
<tr><td colspan="4">Պարզեցված հարկ վճարող են համարվում իրենց հաշվառման վայրի հարկային մարմին օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հայտարարագիր ներկայացրած, օրենքով սահմանված պայմանները բավարարող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները: Պարզեցված հարկի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները:</td></tr>
<tr><td>Խանութների, կրպակների միջոցով առևտրային գործունեության համար</td><td rowspan="3">Պարզեցված հարկի գումարը վճարում են մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը: Հարկ վճարողները պարզեց-ված հարկով հարկվող գործունեության մասով շահութահարկի (եկամտահարկի) կանխավճարներ չեն կատարում:</td><td>900005031019</td><td>900005032017</td></tr>
<tr><td>Այլ գործունեության համար</td><td>900005031027</td><td>900005032025</td></tr>
<tr><td>Նոտարական գործունեություն իրականացնելու համար</td><td>900005031035</td><td>900005032033</td></tr>
</table>

Օրենքով սահմանված պայմաններին բավարարող (պարզեցված հարկ վճարող համարվելու հնարավորություն ունեցող) անձինք պարզեցված հարկ վճարող համարվելու համար իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում սահմանած ձևով հայտարարագիր: Տվյալ տարում հարկ վճարող համարվելու համար հայտարարագիրը հարկային մարմին է ներկայացվում հունվարի 1-ից 25-ը ներառյալ: Անկախ նշված ժամկետից, նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունները (բացառությամբ՝ վերակազմավորման դեպքերի) և անհատ ձեռնարկատերերը պետական գրանցում ստանալու օրվանից համարվում են պարզեցված հարկ վճարողներ, եթե նրանք պետական գրանցման օրվանից մեկամսյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան պետական գրանցման եռամսյակի վերջին օրը) իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում օրենքով նախատեսված գրավոր հայտարարագիրը:

[38] «Պարզեցված հարկի մասին» 05.06.2000թ. ՀՕ-61 օրենք, ուժի մեջ է մտել 01.07.2000թ., հրապարակված է ՀՀՊՏ2000/14(112), 23.06.2000թ.

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում սահմանած ձևի պարզեցված հարկի հաշվարկ:

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար պարզեցված հարկի ներկայացված հաշվարկներում հարկ վճարողի կողմից սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում հարկ վճարողը կարող է իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել ճշգրտված հաշվարկներ, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- **Պարզեցված հարկ վճարողներն իրենց կողմից դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում կատարելու դեպքում տվյալ եռամսյակի համար հարկը վճարելու ժամկետում բյուջե են վճարում հաշվարկային փաստաթղթերում առանձին նշված ԱԱՀ-ի գումարը, առանց այդ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման համար մատակարարներին վճարած ԱԱՀ-ի գումարների նվազեցման.**
- **Պարզեցված հարկ վճարողները հայտարարագրի մեջ իրացման շրջանառության նախատեսվող սահմանաչափի վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ սահմանաչափը գերազանցող մասի 20%-ի չափով.**
- **պարզեցված հարկ վճարող համարվելու համար չնախատեսված գործունեություն չիրականացնելու վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ 100.0 հազ. դրամի չափով,**
- **մաքսատուրքի զրոյական դրույքաչափով հարկվող ներմուծված և չիրացված ապրանքների վերաբերյալ ոչ ճիշտ տեղեկություններ ներառելու դեպքում վճարում են տուգանք՝ սահմանաչափի նկատմամբ ներմուծման փաստացի ծավալը գերազանցող մասի 50%-ի չափով:**

**Նշված խախտումները թույլ տված հարկ վճարողները պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված այլ պահանջները բավարարելու դեպքում շարունակում են մնալ պարզեցված հարկ վճարող՝ մինչև տվյալ տարվա վերջը:**

- **Հարկվող օբյեկտը (իրացման շրջանառությունը) թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում գանձվում է դրա արդյունքում պակաս հաշվարկված պարզեցված հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100%-ի չափով:**

## ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ

| ՕՐԵՆՔՈՎ[39] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ | |
|---|---|---|---|
| | | Իրավաբանական անձինք | Ֆիզիկական անձինք |
| Հաստատագրված վճար վճարողներ են համարվում օրենքով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց համար հաստատագրված վճարը փոխարինում է պետական բյուջե վճարվող ավելացված ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող պարտադիր եւ անհատույց վճար է: Հաստատագրված վճարների վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները: | | | |
| Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն | Վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ: | 900005012019 | 900005013017 |
| Առևտրի իրականացման վայրի (տոնավաճառ, շուկա և այլն) կազմակերպում | | 900005012027 | 900005013025 |
| Հանրային սննդի ոլորտում գործունեություն | Վճարողները հաստատագրված վճարներով հարկվող գործունեության տեսակների մասով շահութահարկի (կամ եկամտահարկի) կանխավճարներ չեն կատարում: | 900005012035 | 900005013033 |
| Ավտոտրանսպորտային գործունեություն | | 900005012043 | 900005013041 |
| Խաղատների կազմակերպում | | 900005012076 | 900005013074 |

[39] «Հաստատագրված վճարների մասին» 07.07.1998թ ՀՕ-236 օրենք, ուժի մեջ է մտել 01.08.1998թ., հրապարակված է ՀՀՊՏ1998/15(48), 27.07.1998թ.

| | | | |
|---|---|---|---|
| Դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործում | | 900005012084 | 900005013082 |
| Համակարգչային խաղերի կազմակերպում | | 900005012092 | 900005013090 |
| Տեսամագնիտոֆոնների և տեսաժապավենների վարձույթ | | 900005012100 | 900005013108 |
| Լուսանկարչական լաբորատորիաներ | | 900005012142 | 900005013140 |
| Ավտոտեխսպասարկման կայաններ (կետեր) | | 900005012159 | 900005013157 |
| Վարսավիրական ծառայություններ | | 900005012167 | 900005013165 |
| Ավտոկանգառների գործունեություն | | 900005012175 | 900005013173 |
| Արդյունագործական ձկնորսություն | | 900005012183 | 900005013181 |
| Բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառք | | 900005012191 | 900005013199 |
| Վիճակախաղերի կազմակերպում | | 900005012209 | 900005013207 |
| Տոտալիզատորի կազմակերպում | | 900005012266 | 900005013264 |
| Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն | | 900005012233 | 900005013231 |
| Բաղնիքների և լողավազանների կազմակերպում | | 900005012241 | 900005013249 |
| Բիլիարդ խաղ կազմակերպելու համար | | 900005012258 | 900005013256 |

Հաստատագրված վճար վճարողները մինչև գործունեություն իրականացնելը (սկսելը) իրենց գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմին են ներկայացնում սահմանված ձևի տեղեկություններ (հայտարարություն-հաշվարկ կամ հայտարարություն)՝ երկու օրինակից՝ հաստատագրված վճարի հաշվարկման համար անհրաժեշտ համապատասխան ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ: Հարկային մարմնի կողմից հաշվառվելուց և կնքվելուց հետո հայտարարության մեկ օրինակը վերադարձվում է վճարողին: Ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը վճարողների կողմից պարտադիր ներկայացվում է հունիս և դեկտեմբեր ամիսների ընթացքում՝ բացառությամբ՝

- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեության իրականացման դեպքում հայտարարությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամիս՝ մինչև այդ ամսվան նախորդող ամսվա վերջին օրը ներառյալ.
- ավտոտրանսպորտային գործունեության իրականացման դեպքում հայտարարությունը ներկայացվում է յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև այդ եռամսյակին նախորդող ամսվա վերջին օրը ներառյալ.
- վիճակախաղերի կազմակերպման դեպքում հայտարարությունը ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների (բացառությամբ գործունեության դադարեցման, ներառյալ՝ ժամանակավոր) դեպքում վճարողն այդ մասին գրավոր տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին՝ նոր հայտարարություն (2 օրինակից) ներկայացնելու միջոցով: Նախկին հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին: Գործունեության ժամանակավոր դադարեցման դեպքում վճարողն այդ մասին գրավոր դիմում-հայտարարություն տալու միջոցով նախապես տեղեկացնում է համապատասխան հարկային մարմնին՝ նշելով դադարեցման ժամանակահատվածը: Դիմում-հայտարարության մեջ գործունեության դադարեցման ժամանակահատվածը նշված չլինելու դեպքում գործունեությունը վերսկսելիս վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է համապատասխան հարկային մարմնին՝ ներկայացնելով ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ նոր հայտարարություն: Նախկին հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին: Գործունեության դադարեցման (կասեցման) դեպքում վճարողը գրավոր դիմումի միջոցով նախապես տեղեկացնում է համապատասխան հարկային մարմնին: Վճարողի մոտ առկա հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում վճարողի կողմից:

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության որոշ տեսակների համար օրենքով նախատեսված է նաև սահմանային չափերի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման պահանջ, մասնավորապես՝

- խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն իրականացնողների կողմից սահմանային չափերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ.
- հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողների կողմից սահմանային չափերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով՝ մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ.
- առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների կողմից սահմանային չափերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ,
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեության կազմակերպիչների կողմից սահմանային չափերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են յուրաքանչյուր ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ:

Օրենքով սահմանված դեպքերում, որոնք բերված են ստորև, հաստատագրված վճար վճարողների կողմից պետք է ներկայացվեն համամասնությունների վերաբերյալ սահմանված ձևի տեղեկություններ, մասնավորապես՝ սեփական արտադրության արտադրանքն ինքնուրույնաբար իրացնողները, դեղատները դեղանյութերի, դեղամիջոցների և բժշկական պարագաների վաճառքի մասով, գազի վաճառքի կետերը, ինչպես նաև դրանցում միաժամանակ շարժիչի յուղերի և քսայուղերի գծով առևտրական գործունեության մասով, մամուլի կրպակներում թերթերի, հանդեսների, փաստավավերագրերի, տեղեկագրերի, պարբերականների վաճառք իրականացնողները:

Սահմանված է նաև վճարողների կողմից հետևյալ տեղեկությունների ներկայացման պահանջ՝

- ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից տեղեկությունների ներկայացում՝ ամսվա ընթացքում իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ: Ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ.
- առևտրի իրականացման վայրի կազմակերպիչների կողմից սահմանված տեղեկությունների ներկայացում՝ առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ: Ներկայացվում է յուրաքանչյուր ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ.
- Հաստատագրված վճար վճարողները ՀՀ կառավարության սահմանած կարգով իրականացնում են հաշվապահական հաշվառում (օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) և օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ, հարկային հաշվարկներ, հայտարարագրեր, նախատեսված այլ փաստաթղթեր և տեղեկություններ:

Բացառապես «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործունեություն իրականացնելու և այլ տեսակի հարկվող օբյեկտներ չունենալու դեպքում վճարողները հարկային մարմին շահութահարկի և ավելացված արժեքի հարկի հաշվարկներ չեն ներկայացնում: Հաստատագրված վճարներով հարկման ենթակա գործունեության տեսակների (դրանցից յուրաքանչյուրի) գծով վճարողները վարում են առանձնացված հաշվառում (իրավաբանական անձանց համար՝ առանձնացված հաշվապահական հաշվառում): Առանձնացված հաշվառում վարելու արդյունքներն արտացոլվում են հարկային մարմին ներկայացվող հարկային հաշվարկներում և հայտարարագրերում:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- **առևտրի իրականացման վայրում յուրաքանչյուր առևտրական գործունեություն իրականացնողի վերաբերյալ տեղեկություն չներառելու կամ կեղծ տեղեկություն ներառելու դեպքում վճարողը վճարում է տուգանք՝ 100.0 հազ. դրամի չափով.**
- **առևտրի իրականացման վայրում առևտրական գործունեություն իրականացնողների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու դեպքում վճարողը վճարում է տուգանք՝ 500.0 հազ. դրամի չափով.**
- **ամսվա ընթացքում իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններ չներկայացնելու կամ ներկայացվող տեղեկություններում իրացման ծավալները թերհայտարարագրելու դեպքում վճարողը վճարում է տուգանք՝ 500,0 հազ. դրամի չափով.**
- **հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնողների մոտ հաստատագրված վճարի մեծությունը չհիմնավորված համարվելու (ներկայացված ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների մեծությունը ցածր է սահմանված կարգով հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների և (կամ) ուսումնասիրությունների արդյունքներից կամ վճարողի կողմից մինչև գործունեության փաստացի սկսելը (վերսկսելը), ինչպես նաև վիճակախաղ կազմակերպողների համար չի ներկայացվել ելակետային տվյալների և (կամ) ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարությունը) հարկային մարմնի կողմից կատարվում է հաստատագրված վճարի մեծության հաշվարկում (գնահատում): Խախտումների դեպքում վճարողից գանձվում է տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի 50%-ի չափով, իսկ խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում նույն գործունեության տեսակի գծով նույն խախտումն արձանագրելու դեպքում տուգանք՝ պակաս հաշվարկված կամ չհաշվարկված հաստատագրված վճարի գումարի չափով:**

| «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով[40] սահմանված հաստատագրված վճարներ | Ծխախոտի արտադրանքի ներմուծման մասով վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները, իսկ ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների մասով՝ՀՀ հարկային մարմինները: | | |
|---|---|---|---|
| ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար ավելացված արժեքի հարկի ու ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճար | Վճարվում է ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 25-ը: | 900005012126 | 900005013124 |
| ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի համար ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի միասնական հաստատագրված վճար | Վճարվում է ներմուծման օրվանից պաս օրվա ընթացքում: | 900005012118 | 900005013116 |

ՀՀ-ում արտադրվող ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը վճարողները ամսվա արդյունքներով՝ մինչև հաջորդ ամսվա 25-ը իրենց գրանցման վայրի հարկային մարմին են ներկայացնում սահմանված ձևի հաստատագրված վճարի հաշվարկ: Վճարողները, ինչպես նաև վճարող չհամարվող՝ հանրապետության տարածքում ծխախոտի արտադրանք իրացնող անձինք ՀՀ ներմուծված և հանրապետությունում արտադրված ծխախոտի արտադրանքի իրացման գծով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի մասին նշում չեն կատարում: Հարկի գումարի առանձնացման դեպքում պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ը հաշվարկվում և վճարվում է սահմանված ընդհանուր կարգով՝ անկախ հաստատագրված վճարների վճարումից:

| «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով[41] սահմանված հաստատագրված վճարներ | Բենզինի և դիզելային վառելիքի ներմուծման մասով վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները, իսկ բենզինի և դիզելային վառելիքի իրացման մասով՝ ՀՀ հարկային մարմինները: | | |
|---|---|---|---|
| ՀՀ ներմուծվող բենզինի համար ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճար | Վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում: | 900005012134 | 900005013132 |
| ՀՀ ներմուծվող դիզելային վառելիքի համար ավելացված արժեքի հարկի և ակցիզային հարկի միասնական հաստատագրված վճար | Վճարվում է ներմուծման օրվանից տասն օրվա ընթացքում. | 900005012225 | 900005013223 |
| ՀՀ ներմուծվող բենզինի համար շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճար | Վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ. | 900005005088 | 900005006094 |
| ՀՀ ներմուծվող դիզելային վառելիքի համար շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճար | Վճարվում է յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ. | 900005005096 | 900005006102 |

Բենզինի և դիզելային վառելիքի ներմուծման և իրացման մասով վճարողները իրենց հաշվառման վայրի հարկային մարմին յուրաքանչյուր ամսվա համար ներկայացնում են շահութահարկին (եկամտահարկին) փոխարինող հաստատագրված վճարի հաշվարկ (հաշվարկի ձևը և լրացման կարգը սահմանված է հարկային մարմնի կողմից)՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ: Արտադրական և այլ առևտրային նպատակներով բենզին կամ դիզելային վառելիք ձեռք բերելու (բացառությամբ՝ իրացման համար) դեպքում՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից օրենքով սահմանված կարգով կարող են հաշվանցել մատակարարի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշված գումարի (բենզինի կամ դիզելային վառելիքի ձեռքբերման արժեքի) 16.67 %-ը:

Արտադրական և այլ առևտրային նպատակներով բենզին կամ դիզելային վառելիք ձեռք բերողների պահանջով վճարողները դուրս են գրում հաշվարկային փաստաթղթեր: Առանց բենզին կամ դիզելային վառելիք մատակարարելու հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու դեպքերում հաշվարկային փաստաթղթերը

---

40 «Ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» 24.03.2000թ ՀՕ-40 օրենք, ուժի մեջ է մտել 01.04.2000թ., հրապարակված է ՀՀՊՏ2000/6(104), 05.04.2000թ.

41 «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին» 25.12.2003թ ՀՕ-67-Ն օրենք, ուժի մեջ է մտել 26.01.2004թ.., հրապարակված է ՀՀՊՏ2004/3(302), 16.01.2004թ.

հավասարեցվում են հարկային հաշիվներին, և դրանք դուրս գրելու կամ հաշվանցումներ կատարելու համար կիրառվում են առանց ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման հաշվարկային փաստաթուղթ դուրս գրելու կամ հաշվանցումներ կատարելու համար օրենքով սահմանված պատասխանատվության նորմերը:

Վճարողների կողմից բյուջե վճարման ենթակա հաստատագրված վճարի գումարները թաքցնելու կամ պակաս ցույց տալու համար վճարողներից գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հաստատագրված վճարի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 100%-ի չափով:

## ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

| ՕՐԵՆՔՈՎ[42] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐ | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ |
|---|---|

Սոցիալական վճարները օրենքով սահմանված կարգով և չափով ապահովադիրների կողմից պարտադիր սոցիալական ապահովագրության պետական ծրագրերի ֆինանսավորման նպատակով ապահովագրության բյուջե պարտադիր կարգով վճարվող միջոցներ են: Օրենքով սահմանված դեպքերում, կարգով ու չափերով սոցիալական վճարներ են կատարում[43] գործատուները, վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝

- Գործատուն (քաղաքացիական-իրավական հարաբերությունների սուբյեկտ, որն իրավունք ունի աշխատանք տրամադրել ֆիզիկական անձանց, այդ նպատակով պայմանագրեր կնքելու միջոցով նրանց ներգրավելու որոշակի աշխատանքների (ծառայությունների) կատարման՝ փաստացի օգտագործելով ֆիզիկական անձանց աշխատանքը (ծառայությունները)) յուրաքանչյուր ամսվա արդյունքներով, մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմին է ներկայացնում սոցիալական վճարների հաշվետվություն՝ ՀՀ կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով.
- Անհատ ձեռնարկատերերը, յուրաքանչյուր տարվա արդյունքներով՝ մինչև օրացուցային տարվան հաջորդող մարտի 1-ը, լիազորված մարմին է ներկայացնում տարեկան եկամուտների մասին հայտարարագիր.
- Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվետվություններում (հայտարարագրերում) սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմին ներկայացվել ճշտված հաշվետվություններ (հայտարարագրեր), որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ, եթե ճշտված հաշվետվությունները (հայտարարագրերը) չեն վերաբերվում հարկային մարմնի կողմից ստուգվող կամ ստուգված ժամանակաշրջաններին.
- Երբ սոցիալական վճարները հաշվարկելու և վճարելու պարտավորությունը դրված է վարձու աշխատողների (այլ ոչ գործատուների) վրա, ապա գործատուն պարտավոր է մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին տեղեկություններ հայտնել վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին: Այդ պահանջը խախտելու համար գործատուն վճարում է տուգանք՝ լիազորված մարմին չներկայացրած յուրաքանչյուր տեղեկության համար 25.0 հազ. դրամի չափով.
- Գործատուները յուրաքանչյուր ամիս օրենքով սահմանված կարգով հաշվարկած սոցիալական վճարների և դրանց հաշվին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին վճարած նպաստների (բայց ոչ ավել, քան տվյալ ամսվա համար հաշվարկած սոցիալական վճարը) տարբերությունը փոխանցում են մինչև այդ ամսվան հաջորդ ամսվա 20-ը ներառյալ.
- Անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամ, մինչև հաջորդ ամսվա 15-ը, իսկ տարվա համար հաշվարկված սոցիալական վճարների և նվազագույն սոցիալական վճարի տարբերությունը փոխանցում (վճարում) են հաջորդ տարվա մարտի 1-ից ոչ ուշ: Պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելու հաջորդ ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար: Անհատ ձեռնարկատերերը և նոտարները որպես գործատու սոցիալական վճարները կատարում են աշխատող (կամ վարձու աշխատող) ունենալու դեպքում՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Սոցիալական վճարների մասով հսկողությունը և ՀՀ պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջեի մուտքերն ապահովում են հարկային մարմինները՝

- Սոցիալական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար ապահովադրից գանձվում է տույժ՝ ապառքի 0,15%-ի չափով,

---

[42] «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» 26.12.1997թ. ՀՕ-179 օրենք, ուժի մեջ է մտել 31.12.1997թ., հրապարակված է ՀՀՊՏ1997/33, 31121997թ.

[43] ըստ ՀՀ ԿԱ ՀՊԾ հարկային տեսչությունների՝ սոցիալական ապահովագրության վճարների վճարման հաշվի համարների ցանկը բերվում է հաջորդիվ.

- Ապահովադիրները սուգմամբ հայտնաբերված թաքցված կամ պակաս ցույց տրված սոցիալական վճարի գումարը, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի ու ուգանքների գումարը վճարում են հարկային մարմնի կողմից համապատասխան ակտը ներկայացնելուց հետո 10-օրյա ժամկետում: Ավել վճարված կամ գանձված սոցիալական վճարների գումարները հաշվանցվում են հաշվարկված տույժերի, տուգանքների, առաջիկա սոցիալական վճարների դիմաց կամ վերադարձվում են վճարողին կենսաթոշակային սոցիալական ապահովագրություն իրականացնող լիազոր մարմնի կողմից՝ լիազորված մարմին դիմելու օրվանից 30 օրվա ընթացքում:
- Ապահովադիրների՝ լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունը (հայտարարագիրը) օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար ապահովադրից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված սոցիալական վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով, բայց ոչ ավելի, քան սոցիալական վճարի ընդհանուր գումարն է:

- Սոցիալական վճարների հաշվետվությունները (հայտարարագրերը) սխալ կազմելու համար ապահովադիրներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե չմուծված կամ պակաս մուծված սոցիալական վճարի գումարի 10%-ի չափով:
- Օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում սոցիալական վճարների գծով պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող 3 տարի հետո: Վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե ապահովադիրի, դրա պաշտոնատար անձանց բացակայության կամ խոչընդոտող այլ գործողությունների հետևանքով ստուգման կամ այլ կերպ սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման լիազոր մարմնի փորձը ձախողվել է՝ ձախողման փաստը լիազոր մարմնի համապատասխան պաշտոնատար անձի կողմից արձանագրելու պահից: Կասեցման հիմքերի դադարումից հետո վաղեմության ժամկետի ընթացքը շարունակվում է, եթե լիազոր մարմինը կամ դրա համապատասխան պաշտոնատար անձը գիտեր կամ կարող էր իմանալ կասեցման հիմքերի դադարման մասին:
- Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ (արձանագրման) ամսում հաշվարկում և վճարում է այդ (չձևակերպված) վարձու աշխատողի համար սոցիալական վճար՝ 60.0 հազ. դրամի չափով: Նշված դրույթը չի կիրառվում վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանը չվարելու կամ սահմանված կարգի խախտումով վարելու դեպքերում՝ այդ դեպքում սոցիալական վճարները հաշվարկվում (վերահաշվարկվում) են ընդհանուր սահմանված կարգով:

Սոցիալական վճարների վճարումը ուշացնելու դեպքում դեպքում հարկային մարմինն իրավունք ունի՝

- սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ ապահովադրի գույքի բռնագանձման համար,
- վճարման համար օրենքով սահմանված ժամկետին հաջորդող 183 օրվա ընթացքում ապահովադրին անվճարունակ ճանաչելու հայցով սահմանված կարգով դիմել դատարան (բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած դեպքերի) և այդ հայցից չի կարող հրաժարվել, քանի դեռ սոցիալական վճարի պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն,
- չկատարված սոցիալական վճարների պարտավորության չափը 500,0 հազ. և ավելի դրամ կազմելու դեպքում ապահովադրի պարտավորությանը համարժեք գույքի վրա սահմանված կարգով դնել արգելանք (առաջնահերթության կարգով նախ բանկային հաշիվների, ապա անշարժ գույքի, այնուհետև այլ ակտիվների նկատմամբ) մինչև դատարանի վճռի կայացումը (բացառությամբ օրենքով սահմանված այն գույքի, որի նկատմամբ բռնագանձում չի կարող տարածվել կամ որի պահպանման ժամկետը չի գերազանցում 30 օրը): Դատարանի վճռից հետո հարկային մարմինը սահմանված կարգով[44] ապահովում է բռնագանձված գույքի իրացումը, իսկ ապահովադրի գույքի արգելադրումից հետո 30-օրյա ժամկետում, դատարանի վճիռը չապահովելու դեպքում ապահովադրի գույքը համարվում է արգելանքից հանված,
- որպես սոցիալական վճարների պարտավորության կատարման ապահովման միջոց՝ հարկային մարմնի և ապահովադրի միջև կարող է կնքվել գրավի պայմանագիր՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

[44] հաստատված է ՀՀ կառավարության 11.05.2002թ N520 որոշմամբ (ուժի մեջ է մտել 11.05.2002թ., հրապարակված է ՀՀՊՏ2002/17(192), 05.06.2002 թ.)

## ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ԿԱ ՀՊԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Խոշոր հարկ վճարողների ՀՏ | 900009900029 | Աշտարակի ՏՀՏ | 900009904419 | Կոտայքի ՏՀՏ | 900009901019 |
| Ակցիզային հարկ վճարողների ՀՏ | 900009900011 | Ախուրյանի ՏՀՏ | 900009902132 | Հրազդանի ՏՀՏ | 900009901217 |
| Բանկերի և վարկային կազմակերպությունների ՀՏ | 900009900037 | Անիի ՏՀՏ | 900009902116 | Մասիսի ՏՀՏ | 900009904310 |
| Հանքարտադրողների ոլորտային ՀՏ | 900009900045 | Ապարանի ՏՀՏ | 900009904518 | Մարտունու ՏՀՏ | 900009901415 |
| Արաբկիրի ՀՏ | 900009900318 | Արարատի ՏՀՏ | 900009904211 | Մեղրու ՏՀՏ | 900009903015 |
| Արաբկիրի 1 ՀՏ | 900009900359 | Արթիկի ՏՀՏ | 900009902017 | Նաիրիի ՏՀՏ | 900009901118 |
| Էրեբունու ՀՏ | 900009900219 | Արմավիրի ՏՀՏ | 900009903312 | Նոյեմբերյանի ՏՀՏ | 900009903916 |
| Խորհրդայինի ՀՏ | 900009900334 | Արտաշատի ՏՀՏ | 900009904112 | Չարենցավանի ՏՀՏ | 900009901316 |
| Մաշտոցի ՀՏ | 900009900524 | Գավառի ՏՀՏ | 900009901712 | Սպիտակի ՏՀՏ | 900009902413 |
| Սպանդարյանի ՀՏ | 900009900128 | Գյումրու ՀՏ | 900009902124 | Ստեփանավանի ՏՀՏ | 900009902512 |
| Սպանդարյանի 1ՀՏ | 900009900136 | Գորիսի ՏՀՏ | 900009902819 | Սիսիանի ՏՀՏ | 900009902918 |
| Մյասնիկյանի ՀՏ | 900009900110 | Դիլիջանի ՏՀՏ | 900009904013 | Սևանի ՏՀՏ | 900009901613 |
| Շահումյանի ՀՏ | 900009900532 | Եղեգնաձորի ՏՀՏ | 900009903510 | Վայքի ՏՀՏ | 900009903411 |
| Շենգավիթի ՀՏ | 900009900227 | Էջմիածնի ՏՀՏ | 900009903213 | Վանաձորի ՀՏ | 900009902314 |
| Քանաքեռ-Զեյթունի ՀՏ | 900009900326 | Թալինի ՏՀՏ | 900009904617 | Վարդենիսի ՏՀՏ | 900009901514 |
| Ավանի ՀՏ | 900009900342 | Թումանյանի ՏՀՏ | 900009902611 | Տաշիրի ՏՀՏ | 900009902710 |
| Դավթաշենի ՀՏ | 900009900516 | Իջևանի ՏՀՏ | 900009903718 | Տավուշի ՏՀՏ | 900009903817 |
| Նորք-Մարաշի ՀՏ | 900009900144 | Կապանի ՏՀՏ | 900009903114 | | |

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

| ՕՐԵՆՔՈՎ[45] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՎՃԱՐԱՏԵՍԱԿ | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԳԱՆՁԱ-ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ |
|---|---|---|

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ վճարողներ են համարվում ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնք իրականացնում են օրենքով սահմանված գործառույթներ: Վճարների հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով[46]:

- Վճարողների կողմից վճարների եռամսյակային հաշվարկ-հաշվետվությունները երկու օրինակից ներկայացվում են համապատասխան լիազոր մարմին գրանցման մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը, իսկ տարեկան հաշվետվությունները՝ մինչև հաջորդ տարվա փետրվարի 25-ը: Գրանցված հաշվարկ-հաշվետվությունների երկրորդ օրինակները վճարողները սույն կետով սահմանված ժամկետներին հաջորդող 5 օրվա ընթացքում ներկայացնում են համապատասխան հարկային մարմին.
- Վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունները օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում հաջորդ յուրաքանչյուր 15 օրվա համար գանձվում է տուգանք՝ վճարման ենթակա վճարի ընդհանուր գումարի 5 տոկոսի չափով, բայց ոչ ավելի այդ վճարի ընդհանուր գումարից.
- Վճարը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու (հաշվարկ-հաշվետվություններում վճարի գումարը ցույց չտալու, պակաս ցույց տալու կամ գործունեություն չիրականացնելու մասին կեղծ տվյալներ ներկայացնելու) դեպքում գանձվում է օրենքին համապատասխան հաշվարկված՝ թաքցված կամ պակաս ցույց տրված վճարի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 տոկոսի չափով, իսկ խախտումն արձանագրվելուց հետո մեկ տարվա ընթացքում վճարը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում նաև տուգանք՝ վճարի ամբողջ գումարի չափով.
- Վճարումներն ուշացնելու համար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0,2 տոկոսի չափով: Տույժը կիրառվում է ժամանակին չվճարված վճարի գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) վճարման օբյեկտի գծով վճարի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար.
- Թաքցված կամ պակաս ցույց տրված վճարը, ինչպես նաև օրենքով սահմանված տույժերն ու տուգանքները պետական բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում: Վճարման պարտավորությունների գծով գումարի մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինն իրավունք ունի սահմանված կարգով դիմել դատարան՝ վճարի բռնագանձման կամ գույքի վրա արգելանք դնելու պահանջով.
- Սահմանված կարգով հաշվարկվածից ավելի վճարված գումարները վճարողի դիմումի համաձայն հաշվանցվում են առաջիկա վճարումների հաշվին կամ վերադարձվում են՝ դիմումն ստանալու օրվանից երեսունօրյա ժամկետում.

<table>
<tr><th>ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ</th><th colspan="2">Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները</th></tr>
<tr><td>Ջրօգտագործման համար</td><td rowspan="7">Հարկային մարմին ներկայացված բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններին համապատասխան<br>եռամսյակային վճարները վճարվում են մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ, իսկ տարեկան (հաշվետու տարվա 4-րդ եռամսյակի) վճարները՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող երրորդ ամսվա 1-ը.</td><td>900005017018</td></tr>
<tr><td>Օգտակար հանածոների արդյունահանման համար</td><td>900005017026</td></tr>
<tr><td>Կենսապաշարների օգտագործման համար</td><td>900005170981</td></tr>
<tr><td>ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ</td><td></td></tr>
<tr><td>Ամրակայված աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար</td><td>900005017042</td></tr>
<tr><td>Ջրային ավազան վնասակար նյութերի արտանետման համար</td><td>900005017067</td></tr>
<tr><td>Աղբյուսներում թափոնների տեղադրման համար</td><td>900005017075</td></tr>
</table>

[45] «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 28.12.199թ. ՀՕ-270 օրենք, ուժի մեջ է մտել 01.01.1999թ., հրապարակված է ՀՀՊՏ1998/33(66), 31.12.1998թ.

[46] ՀՀ կառավարության 17.10.2001թ. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N986 որոշում, ուժի մեջ է մտել 17.10.2001թ., հրապարակված է ՀՀՊՏ2001/33(165), 31.10.2001թ.

| | | |
|---|---|---|
| ՀՀ-ում արտադրվող և իրացվող, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար | | 900005170973 |

| | | |
|---|---|---|
| ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները | |
| | Վճարվում է մինչև դրանց մաքսային ձևակերպումը կամ մաքսային ձևակերպման ժամանակ | 900005017109 |
| Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար | Վճարվում է ՀՀ տարածք դրանց մուտք գործելու պահին | 900005017091 |

| | | |
|---|---|---|
| Վճարողներին պատկանող, ՀՀ-ում գրանցված և շահագործվող ավտոմեքենաներից վնասակար նյութերի արտանետման համար | Վճարապետական վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանությունը դրանց տարեկան տեխնիկական զննության ժամանակ. | |
| Իրավաբանական անձանցից | Վճարումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև մեխանիզմների տարեկան տեխնիկական զննությունը | 900005170940 |
| Ֆիզիկական անձանցից | | 900005170916 |

| | | |
|---|---|---|
| Վճարողներին պատկանող, ՀՀ-ում գրանցված և շահագործվող մեխանիզմներից (գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաներ) օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար | Վճարապետական վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը՝ դրանց տարեկան տեխնիկական զննության ժամանակ. | |
| Իրավաբանական անձանցից | Վճարումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև մեխանիզմների տարեկան տեխնիկական զննությունը | 900005170957 |
| Ֆիզիկական անձանցից | | 900005170924 |

| | | |
|---|---|---|
| Վճարողներին պատկանող, ՀՀ-ում գրանցված և շահագործվող շարժիչավոր լողամիջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար | Վճարի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ բնապահպանական մարմինները՝ դրանց տարեկան տեխնիկական զննության ժամանակ. | |
| Իրավաբանական անձանցից | Վճարումը կատարվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև լողամիջոցների տարեկան տեխնիկական զննությունը | 900005170965 |
| Ֆիզիկական անձանցից | | 900005170932 |

## ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐ

| ՕՐԵՆՔՈՎ[47] ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐ | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԳԱՆՁԱ-ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ |
|---|---|---|

Ճանապարհային վճար վճարողներ են համարվում տրանսպորտային միջոցների սեփականատերերը, իրենց պատկանող տրանսպորտային միջոցներով կամ օրենքով սահմանված գործունեությամբ զբաղվելու նպատակով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք: Ճանապարհային վճարի հաշվարկման և վճարման նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով[48]:

Վճարի վճարումն ուշացնելու համար վճար վճարողներից գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված վճարի գումարի 0,25%-ի չափով, սակայն ոչ ավելի, քան պակաս մուծված վճարի գումարը:

Սահմանված կարգով հաշվարկվածից ավել վճարված գումարները հաշվանցվում են վճարողի առաջիկա վճարումների հաշվին կամ վճարողի դիմումի համաձայն վերադարձվում են նրան՝ դիմումը ստանալու օրվանից 15-օրյա ժամկետում:

---

[47] «Ճանապարհային վճարների մասին» 03.03.1998թ. ՀՕ-203 օրենք, ուժի մեջ է մտել 28.03.1998թ., հրապարակված է ՀՀՊՏ1998/7(40), 28.03.1998թ.

[48] ՀՀ կառավարության 03.06.1998թ. «Ճանապարհային վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N338 որոշում, ուժի մեջ է մտել 25.06.1998թ., հրապարակված է ՀՀՊՏ1998/12(45), 15.06..1998թ.

| | | |
|---|---|---|
| Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար<br>▪ ՀՀ յուրաքանչյուր մուտքի համար հաշվարկվում է օրենքով սահմանված 15-օրյա դրույքաչափերով,<br>▪ ՀՀ տարածքում 15-ից ավելի օր գտնվելու դեպքում հաշվարկվում է յուրաքանչյուր հաջորդ 15 օրվա կամ ավելի պակաս ժամկետի համար: | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները | |
| | Վճարվում է ՀՀ տարածք մուտք գործելիս կամ գտնվելու ժամկետը լրանալուց հետո` 5 օրվա ընթացքում (լրավճարումը կատարվում է մաքսային ձևակերպումների ժամանակ): | 900005027033 |
| Այլ պետություններում գրանցված ծանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները | |
| | Վճարվում է ՀՀ տարածք մուտք գործելիս ինչպես նաև մինչև ՀՀ-ից դուրս փոխադրումների իրականացումը (մաքսային ձևակերպումների ժամանակ): | 900005027058 |
| Այլ պետություններում գրանցված մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար | | 900005027066 |
| ՀՀ-ում գրանցված մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար | Վճարվում է մինչև ներհանրապետական փոխադրումների իրականացումը (երթուղի դուրս գալը): | 900005027025 |
| Ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու համար վճարվում է օրենքով սահմանված տարեկան դրույքաչափերի 1/4-ի չափով | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը | |
| | Վճարվում է յուրաքանչյուր եռամսյակ` մինչև այդ եռամսյակի առաջին ամսվա 20-ը: | 900005027041 |

| | | |
|---|---|---|
| ՀՀ-ում գրանցված (20 և ավելի տոննա բեռնատարողությամբ) բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար<br>ՀՀ տարածքում իրականացվող, ՀՀ տարածքից դուրս եկող կամ ՀՀ մուտք գործող բեռնափոխադրում (բեռնափոխադրումներ) իրականացնելու յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկվում է յուրաքանչյուր բեռնատար ավտոմեքենայի բեռնատարողության հիման վրա` օրենքով սահմանված ամսական դրույքաչափերով. | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները | |
| | Յուրաքանչյուր ամսվա համար վճարվում է մինչև տվյալ ամսում առաջին բեռնափոխադրում իրականացնելու օրը: | 900005270716 |
| | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները | |
| | ՀՀ տարածքից դուրս եկող կամ ՀՀ մուտք գործող բեռնափոխադրման ժամանակ տվյալ ամսվա համար վճարումը հավաստող տեղեկանքի բացակայության դեպքում վճարվում է մաքսային ձևակերպումների ժամանակ: | 900005270815 |

Վճարողները բեռնափոխադրումներ իրականացնելու ամսվա (ամիսների) համար յուրաքանչյուր ավտոմեքենայի մասով հարկային մարմին են ներկայացնում հաշվարկված և վճարված վճարների մասին հայտ` (կցելով ավտոմեքենայի բեռնատարողությունը և վճարումը հավաստող փաստաթղթերի պատճենները): Հայտը հարկային մարմին մուտքագրվելուց հետո 1-օրյա ժամկետում, իսկ հայտում կատարված հաշվարկներն և վճարումներն օրենքին անհամապատասխանության դեպքում վճարողի կողմից հաշվարկները ճշտելուց և դրա արդյունքում լրավճարման անհրաժեշտության դեպքում` լրավճարումը կատարելուց հետո 2-օրյա ժամկետում հարկային մարմինը տրամադրում է վճարի վճարումը հաստատող տեղեկանք:
ՀՀ տարածքից դուրս եկող կամ ՀՀ տարածք մուտք գործող բեռնափոխադրումների ժամանակ տվյալ ամսվա համար վճարի վճարումը հավաստող տեղեկանքի բացակայության դեպքում վճարի գանձումը մաքսային ձևակերպումների ժամանակ կատարվում է ՀՀ մաքսային մարմինների կողմից և վճարողին տրամադրվում է տվյալ ամսվա վճարի վճարումը հաստատող տեղեկանք:

# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

| ՕՐԵՆՔՈՎ[49] ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐ | ՊԱՀԱՆՋՎՈՂ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ |
|---|---|---|

Վճարողներ են համարվում հանրային ծառայությունների ոլորտում (էներգետիկայի (էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգեր) բնագավառ, ջրային համակարգ (խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարում, ջրահեռացում և կեղտաջրերի մաքրում) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառ) կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը սահմանում է կարգավորվող սակագներ: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը[50] յուրաքանչյուր տարվա համար հաստատում է վճարողների անվանական կազմը, իրականացնում նրանց հաշվառումը, հաշվարկում և հաստատում է վճարների տարեկան դրույքաչափերը.

| | | |
|---|---|---|
| հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի 1/4-ի չափով եռամսյակային գումարներ | Վճարման նկատմամբ հսկողությունն իրականացնում են ՀՀ հարկային մարմինները.<br>յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա 30-ից ոչ ուշ: | 900005330114 |

Վճարման պարտավորությունը դադարում է այդ պարտականության կատարումով, օրենքով վճարումից ազատումով, լիցենզիայի կամ թույլտվության գործողության դադարումով կամ օրենքով սահմանված այլ հիմքերով:

Վճարի գումարից ավելի վճարված գումարները, վճարողի դիմումի համաձայն, հարկային մարմնի կողմից հաշվանցվում են վճարողի կարգավորման պարտադիր վճարների առաջիկա վճարումների հաշվին կամ ՀՀ կառավարության լիազորած մարմնի սահմանած կարգով վերադարձվում են դիմումն ստանալու օրվանից հետո՝ 30-օրյա ժամկետում:Վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված վճարի գումարի 0.15%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Վճարողները մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը կարգավորման պարտադիր վճարների հաշվետվությունները ներկայացնում են հարկային մարմին: Վճարողները պակաս ցույց տրված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները ՀՀ պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Օրենքով սահմանված կարգով չվճարված կարգավորման պարտադիր վճարի գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ հարկային մարմինների ներկայացրած հայցի հիման վրա:

# ՏԱՐԵԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով[51] տարեկան պետական տուրք վճարող են հանդիսանում ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնց մատուցված ծառայությունների կամ կատարված գործողությունների (պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված լիցենզիաների, թույլտվությունների կամ արտոնագրերի տրամադրման) մասով օրենքով սահմանված են պետական տուրքի տարեկան դրույքաչափեր:

Վճարման նկատմամբ ընթացիկ հսկողությունն իրականացնում են լիցենզիա տրամադրող լիազոր մարմինները, իսկ գանձման (վճարման) նկատմամբ վերահսկողությունը՝ ՀՀ հարկային մարմինները:

Տարեկան հերթական պետական տուրքի վճարումը յուրաքանչյուր առաջիկա տարվա համար կատարվում է մինչև այդ (առաջիկա) տարին սկսելը, լիազոր մարմնի կողմից իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի և լիցենզիաների վրա նշված՝ այդ փաստաթղթերի տրման ամսաթվից ոչ ուշ: Արտոնագրի, թույլտվության կամ լիցենզիայի գործողությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցվելու դեպքում (բացառությամբ կասեցված լինելու ժամանակահատվածում դիմումի համաձայն դրանց ուժը կորցրած ճանաչվելու դեպքերի) հերթական տարեկան պետական տուրքերի գումարները ենթակա են վճարման՝ անկախ կասեցման հիմքերից ու ժամկետներից:

Վճարումը չկատարելու դեպքում չվճարված պետական տուրքի գումարները վճարողից ենթակա են բռնագանձման ՀՀ պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.5%-ի չափով հաշվարկված տույժի հետ միասին (առանց տույժերի հաշվարկման ժամկետի սահմանափակման): Չվճարված գումարների, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժերի գանձումը կատարվում է դատական կարգով:

---

[49] «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» 11.11.2005թ. ՀՕ-225-Ն օրենք, ուժի մեջ է մտել 24.12.2005թ., հրապարակված է ՀՀՊՏ2005/78(450), 14.12.2005թ.

[50] Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2006 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաստատված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 28.12.2005թ. N222-Ն որոշմամբ, ուժի մեջ է մտել 26.01.2006թ., հրապարակված է ՀՀԳՆԱՏ2006/3(212), 16.01.2006թ.

[51] «Պետական տուրքի մասին» 27.12.1997թ. ՀՕ-186-Ն օրենք, ուժի մեջ է մտել 11.01.1998թ, հրապարակված է ՀՀՊՏ1998/1, 11.01.1998թ.

Տարեկան պետական տուրքը վճարվում է հայկական դրամով, վճարված է համարվում ՀՀ բյուջեի համապատասխան հաշվին հաշվեգրվելու օրվանից: Պարտավորությունները մարվում են տարեկան պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթղթում նշված վճարման նպատակին (լիցենզիայի համար և պարտավորության ժամանակահատված) համապատասխան`

- վճարման նպատակը նշված չլինելու դեպքում վճարողին օրենքով տրվում է մեկանգամյա բացառիկ հնարավորություն` վճարումից հետո 30-օրյա ժամկետում վճարման նպատակի վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնելու լիազոր (հարկային) մարմին: Այս դեպքում պարտավորությունները մարվում են հայտարարությամբ նշված նպատակին համապատասխան: Նշված ժամկետում գրավոր հայտարարություն չներկայացնելու կամ ներկայացված հայտարարությունում նշված վճարման նպատակը նոր հայտարարությամբ փոփոխելու դեպքում պարտավորությունները վերահաշվարկման ենթակա չեն,
- վճարման նպատակը նշված չլինելու և վերոնշյալ ժամկետում գրավոր հայտարարություն չներկայացնելու դեպքում վճարված տարեկան պետական տուրքի գումարների հաշվին առաջին հերթին մարվում են տույժերի, ապա` հերթական տարեկան պետական տուրքի գումարները (ըստ դրանց վճարման համար սահմանված ժամկետի վաղեմության):

Պետական տուրքը վերադարձվում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում, եթե`

- այն ներկայացվել է ֆինանսական մարմին` պետական տուրքի կամ նրա մի մասը վերադարձնելու իրավունքի առաջացման օրվանից 3 տարուց ոչ ուշ ժամկետում: Ֆինանսական մարմին դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի ընթացքը,
- կցված են պետական տուրք գանձող մարմինների տեղեկանքները` պետական տուրքը մասնակի կամ լրիվ վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին ինչպես նաև պետական տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

Վճարման պարտավորությունը դադարում է.

- հերթական տարեկան պետական տուրքի և տույժերի գումարների վճարմամբ,
- տարեկան պետական տուրքի վճարումից ազատումով, օրենքով տարեկան պետական տուրքի վերացմամբ, ինչպես նաև ֆիզիկական անձի մահվան դեպքում,
- մինչև առաջիկա տարվա վճարման ժամկետի վերջին օրը լիազոր մարմնի կողմից իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի և լիցենզիաների գործողության դադարեցման (ուժը կորցրած ճանաչելու) դեպքում առաջիկա տարվա տուրքի մասով,
- մինչև առաջիկա տարվա վճարման ժամկետի վերջին օրը իրավունքների, թույլտվությունների, արտոնագրերի, լիցենզիաների գործողության դադարեցման համար լիազոր մարմին դիմում ներկայացվելու և դիմումի հետագա բավարարման դեպքում (անկախ ժամկետներից) առաջիկա տարվա տուրքի մասով: Եթե դիմումը լիազոր մարմին ներկայացվում է հերթական (արդեն փվյալ տարվա) վճարման համար ժամկետի վերջին օրվանից հետո, ապա դիմումի բավարարման դեպքում միայն տվյալ տարվա տուրքի վճարման պարտավորություն չի առաջանում և վճարման ժամկետի վերջին օրվանից սկսած հաշվարկվում է միայն տույժ` մինչև դիմումի ներկայացման օրը: Եթե դիմումում նշված է դադարեցման ավելի ուշ ժամկետ, քան դիմումի ներկայացման օրն է, ապա տույժերը հաշվարկվում են մինչև դիմումում նշված ժամկետը, իսկ եթե դիմումում նշված է դադարեցման ավելի վաղ ժամկետ, ապա տույժը նորից հաշվարկվում է մինչև դիմումի ներկայացման օրը.
- արտոնագրման, թույլտվության կամ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակն օրենքով այդպիսին չհամարվելու դեպքում այդ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից` հերթական (առաջիկա տարվա) տարեկան պետական տուրքի մասով:

Եթե լիցենզավորված անձը պարտավոր է լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում[52] և յուրաքանչյուր վայրի համար ստանում է առանձին լիցենզիա, մեկից ավելի յուրաքանչյուր վայրում նս լիցենզավորման ենթակա նույն գործունեությամբ զբաղվելու համար տարեկան պետական տուրքի վճարման համար սահմանված են հետևյալ առանձնահատկությունները.

- այն ենթակա է վճարման տվյալ լիցենզիայի տրման համար սահմանված պետական տուրքի դրույքաչափի 50%-ի չափով, բացառությամբ գործունեության այն տեսակների, որոնց տարեկան պետական տուրքի դրույքաչափը սահմանված է յուրաքանչյուր վայրի համար (այս դեպքում յուրաքանչյուր վայրի լիցենզիայի համար վճարվում է տարեկան պետական տուրքի դրույքաչափի 100%-ի չափով),
- մեկից ավելի վայրերում գործունեության իրականացման լիցենզիաներ ստանալու համար հայտերը միաժամանակ ներկայացնելու դեպքում հայտատուն կարող է ինքնուրույն ընտրել այն լիցենզիան (հիմնական լիցենզիա), որի համար տարեկան պետական տուրքը ենթակա է գանձման (վճարման) օրենքով սահմանված դրույքաչափերի 100%-ով,
- եթե լիցենզավորված անձն ունի հիմնական և ածանցյալ լիցենզիա (լիցենզիաներ), հիմնական լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու կամ դրա տրման համար սահմանված տարեկան հերթական պետական տուրքը սահմանված ժամկետում չվճարելու հիմքով կասեցված համարվելու օրվանից հետո 3-օրյա ժամկետում լիցենզավորված անձը պարտավոր է ածանցյալ լիցենզիայի (կամ դրանցից որևէ մեկի) համար կատարել լիցենզիայի տրման համար սահմանված տարեկան պետական տուրքի դրույքաչափի 50%-ի չափով լրավճարում` ածանցյալ լիցենզիան (կամ դրանցից որևէ մեկը) հիմնական համարվելու և հետագայում դրա համար տարեկան պետական տուրքի դրույքաչափի 100%-ով վճարումներ կատարելու համար: Լրավճարումը չկատարելու դեպքում լիցենզավորված անձի ածանցյալ լիցենզիան (լիցենզիաները) համարվում է (են) կասեցված 3-օրյա ժամկետին հաջորդող օրվանից:

---

[52] «Լիցենզավորման մասին» 30.05.2001թ. ՀՕ-193 օրենքի (ուժի մեջ է մտել 08.08.2001թ, հրապարակված է ՀՀՊՏ2001/26(158), 08.08.2001թ.) 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 10-րդ սյունակում նշված է «Վ» տառը.

<table>
<tr><th colspan="2">ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ[53]</th><th rowspan="2">ԼԻՑԵՆԶԻԱ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏՈՆԱԳԻՐ</th></tr>
<tr><th>ֆիզիկական անձ</th><th>իրավաբանական անձ</th></tr>
<tr><td colspan="3">ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td colspan="2">900005016598</td><td>արժեթղթերի ձևաթղթերի արտադրություն</td></tr>
<tr><td colspan="2">900005166013</td><td>արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն</td></tr>
<tr><td colspan="3">ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td colspan="2">900005016630</td><td>դեղերի արտադրություն</td></tr>
<tr><td>900005165650</td><td>900005169033</td><td>դեղերի առևտուր</td></tr>
<tr><td>900005165668</td><td>900005169041</td><td>դեղաբույսերի առևտուր</td></tr>
<tr><td colspan="2">900005016614</td><td>կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնություն և սպասարկում</td></tr>
<tr><td colspan="2">900005016960</td><td>գենետիկ ինժեներիայի գործունեություն</td></tr>
<tr><td colspan="2">900005016648</td><td>դեղատնային գործունեություն</td></tr>
<tr><td colspan="2">900005016622</td><td>բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրի իրականացում</td></tr>
<tr><td colspan="3">ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊ</td></tr>
<tr><td colspan="2">900005164513</td><td>Փոստային կապի ծառայություններ՝ բացառությամբ դրամական միջոցների փոստային փոխադրումների</td></tr>
<tr><td colspan="3">ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ</td></tr>
<tr><td colspan="2">900005016655</td><td>արտարժույթի առքուվաճառք</td></tr>
<tr><td colspan="2">900005162319</td><td>արժույթի դիլերային առքուվաճառք</td></tr>
<tr><td colspan="2">900005016663</td><td>արտարժույթի առքուվաճառքի սակարկությունների կազմակերպում</td></tr>
<tr><td colspan="3">ԱՌԵՎՏՈՒՐ</td></tr>
<tr><td>900005166377</td><td>900005166476</td><td>«ԱՏԳ ԱԱ դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող բնական՝ մշակ-ված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված ալմաստների առուվաճառք, ներմուծում, արտահանում, փոխադրում</td></tr>
</table>

<table>
<tr><th colspan="2">ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐԸ</th><th rowspan="2">ԼԻՑԵՆԶԻԱ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏՈՆԱԳԻՐ</th></tr>
<tr><th>ֆիզիկական անձ</th><th>իրավաբանական անձ</th></tr>
<tr><td colspan="3">ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td>900005165684</td><td>900005169066</td><td>անասնաբուժություն</td></tr>
<tr><td colspan="2">900005016283</td><td>տոհմային անասնաբուծություն</td></tr>
<tr><td colspan="3">ԷՆԵՐԳԵՏԻԿԱ</td></tr>
<tr><td colspan="2">900005016697</td><td>բնական գազի ներկրում, փոխադրում, բաշխում և արտահանում</td></tr>
<tr><td colspan="2">900005016705</td><td>էլեկտրական էներգիայի արտադրություն ներկրում, հաղորդում, բաշխում և արտահանում</td></tr>
<tr><td colspan="2">900005016713</td><td>ջերմային էներգիայի արտադրություն, փոխադրում և բաշխում</td></tr>
<tr><td colspan="2">900005016739</td><td>էներգետիկ շուկային մատուցվող ծառայություններ</td></tr>
<tr><td colspan="2">900005016721</td><td>էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայություններ</td></tr>
<tr><td colspan="2">900005016747</td><td>էլեկտրական ու ջերմային էներգիայի և բնական գազի համակարգերում նոր արտադրական հզորությունների կառուցում</td></tr>
<tr><td colspan="3">ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ</td></tr>
<tr><td colspan="2">900005164547</td><td>ՀԵՀՑ (հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի) շահագործում Երևանում և միաժամանակ մեկ կամ մի քանի մարզերում</td></tr>
<tr><td colspan="2">900005164554</td><td>ՀԵՀՑ շահագործում Երևանի տարածքում</td></tr>
<tr><td colspan="2">900005164562</td><td>ՀԵՀՑ շահագործում Երևան քաղաքը չներառող՝ մեկից ավելի մարզերի տարածքում</td></tr>
<tr><td colspan="2">900005164570</td><td>ՀԵՀՑ շահագործում մեկ մարզի տարածքում</td></tr>
<tr><td colspan="2">900005164521</td><td>ձայնային ծառայությունների մատուցում</td></tr>
<tr><td colspan="2">900005164539</td><td>շարժական կապի ծառայությունների մատուցում</td></tr>
<tr><td>900005166351</td><td>900005166450</td><td>տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ</td></tr>
<tr><td colspan="2">900005016861</td><td>Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում</td></tr>
</table>

[53] Նշված գանձապետական հաշիվներին են կատարվում ինչպես լիցենզիան տրամադրելու, այնպես էլ մասնավորապես՝ լիցենզիայի կրկնօրինակի տրամադրման, վերաձևակերպման, գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիաների գրանցամատյանից տեղեկությունների տրամադրման համար սահմանված պետական տուրքի գումարները.

## ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐ ԵՎ ՇԱՀՈՒՄՆԵՐՈՎ ԽԱՂԵՐ

| | |
|---|---|
| 900005162137 | վիճակախաղերի կազմակերպում |
| 900005016267 | շահումով խաղերի կազմակերպում |
| 900005016259 | խաղատան կազմակերպում |

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 900005016788 | միջին մասնագիտական կրթական (բացառությամբ բժշկական) ծրագրի իրականացում |
| 900005016796 | բարձրագույն մասնագիտական կրթական (բացառությամբ բժշկական) ծրագրի իրականացում |
| 900005160412 | նախադպրոցական կրթական ծրագրի իրականացում |

## ԲԱՆԿԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 900005016234 | | բանկային գործունեություն |
| 900005162327 | | վարկային գործունեություն |
| 900005162335 | | դրամական (փողային) փոխանցումներ |
| 900005162343 | | վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում |
| 900005016606 | | ինվեստիցիոն ընկերությունների, ինվեստիցիոն հիմնադրամների գործունեություն |
| 900005016242 | | ապահովագրական գործունեություն |
| 900005016671 | | ապահովագրական բրոքերային գործունեություն |
| 900005165510 | | գրավատների կազմակերպման համար |
| 900005165676 | 900005169058 | ինկասացիոն ծառայություններ |
| 900005169306 | 900005016689 | աուդիտորական ծառայություններ |

## ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 900005169249 | Կապիտալ շինարարություն |
| 900005169231 | Կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակում |

## ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

| | | |
|---|---|---|
| 900005016929 | 900005016952 | անվտանգության բնագավառում գործունեություն |
| 900005162988 | 900005016572 | պայթեցման աշխատանքներ |
| 900005160313 | | Հատուկ պաշտպանվածություն պահանջող պետական նշանակության փաստաթղթերի տպագրում |
| 900005160321 | | Դրամահատում, պետական մեդալների, շքանշանների, կնիքների, դրոշմակնիքների պատրաստում կամ արտադրություն |
| 900005165643 | 900005169025 | Հրագործական ապրանքերի արտադրություն, ներմուծում կամ առևտուր |
| 900005160339 | | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի արտադրություն, առևտուր, արտահանում կամ ներմուծում |
| 900005162939 | 900005016564 | Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր |

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

| | | |
|---|---|---|
| 900005167151 | 900005167144 | վտանգավոր թափոնների վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում |
| 900005016994 | | Շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործունեություն իրականացնելու համար |

## ՈՐԱԿԻ, ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ, ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ, ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

| | |
|---|---|
| 900005169108 | Չափման միջոցների արտադրության,նորոգման գործունեության համար |

## ՏՐԱՆՍՊՈՐՏ

| | |
|---|---|
| 900005169116 | Չվացուցակի ենթակա օդային տրանսպորտի գործունեություն |
| 900005169124 | Չվացուցակի չենթարկվող օդային տրանսպորտի գործունեություն |
| 900005169132 | Երկաթուղային տրանսպորտի գործունեություն |

## ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| 900005163259 | զբոսավարի գործունեություն |

| | | |
|---|---|---|
| **ՄԱՔՍԱՅԻՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | |
| 900005016887 | | Մաքսային պահեստում, մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանություն |
| 900005016895 | | Անմաքս առևտրի խանութներում մաքսային հսկողության ներքո ապրանքների իրացում |
| 900005016903 | | Ազատ մաքսային պահեստում ապրանքների պահպանություն |
| 900005165692 | 900005169074 | մաքսային միջնորդական գործունեություն |
| 900005016911 | | Մաքսային փոխադրողի գործունեություն |
| **ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ** | | |
| 900005166310 | 900005166419 | Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ ԱՏԳ ԱԱ դասակարգչին դասվող լիկյորների և 22090 ծածկագրին դասվող, մինչև 9% սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն |
| 900005166328 | 900005166427 | ԱՏԳ ԱԱ դասակարգ-չին դասվող լիկյորների և 22090 ծածկագրին դասվող, մինչև 9% սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների րտադրություն |
| 900005166336 | 900005166435 | Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն |
| 900005166344 | 900005166443 | Խմորման նյութերից այլ չթորած խմիչքների արտադրություն |
| 900005169017 | 900005169090 | Այլ սննդամթերքի արտադրություն |
| 900005166369 | 900005166468 | Գարեջրի արտադրություն |
| 900005169207 | | Տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքներ |

| | | |
|---|---|---|
| 900005163382 | | ուղեկցողի գործունեության |
| **ԸՆԴԵՐՔԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ** | | |
| 900005169173 | | Գունագեղ քարերի հանքավայրի շահագործում |
| 900005169199 | | Հանքային ջրերի հանքավայրի կամ հանքահորի շահագործում |
| 900005169140 | | Ազնիվ, գունավոր, հազվագյուտ մետաղների հանքավայրի շահագործում |
| 900005169157 | | Վառելիքաէներգետիկ հումքի հանքավայրի օգտագործում |
| 900005169165 | | Շինանյութերի արտադրության հումքի հանքավայրի շահագործում |
| 900005169181 | | Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի հանքավայրի շահագործելում |
| 900005167136 | | հանքավայրի ուսումնասիրության լիցենզիա կամ հատուկ ուսումնասիրության լիցենզիա |
| 900005167128 | 900005167110 | ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրվող այլ լիցենզիաներ և թույլտվություններ |
| **ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ** | | |
| 900005016978 | | Միջուկային էներգետիկայի [54]բնագավառում գործունեություն |
| 900005016986 | | Ատոմային էներգետիկայի բնագավառում գործունեություն |
| 900005169215 | | Անշարժ գույքի գնահատման |
| 900005169223 | | Ռիելտորական գործունեություն |
| 900005166815 | | Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ օրենքով նախա-տեսված փորձաքննությունների իրակա-նացում |
| 900005165593 | 900005169082 | Օրենքների և նորմատիվ իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակում, բազմացում կամ պաշտոնական վերահրապարակում |
| 900005166914 | | Անվճարունակ կազմակերպությունների անվճարունակության գործերով կառավարչի գործունեություն |

[54] Միջուկային և ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում գործունեության մանրամասնեցված տեսակների համար գործում են առանձին գանձապետական հաշիվներ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 900005016358 | «Հայ», «Հայաստան», «հայկական», «Հանրապետություն», «հանրապետական» բառերը և դրանց թարգմանությունները ֆիրմային անվանման մեջ օգտագործում | 900005165585 | 900005166021 | պետական կառավարման մարմինների կողմից տրվող այլ լիցենզիաներ |
| **ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ[55] ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՀԱՄԱՐՆԵՐ** | | | | |
| 900005240487 | վարչական իրավախախտումների համար կիրառվող տուգանքներ և պատժամիջոցներ | 900005241022 | «Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար կիրառվող տուգանքներ և պատժամիջոցներ | |
| 900005024105 | պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով իրավախախտումների համար կիրառվող տուգանքներ և պատժամիջոցներ | 900005241014 | «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար կիրառվող տուգանքներ և պատժամիջոցներ | |

[55] «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի զարգացման ֆոնդին կատարվող մասնահումների համապատասխան գանձապետական հաշիվները լրացվում են հարկ վճարողին ներկայացված ստուգման ակտով.

# ԻՆՉՊԵՍ ՏԵՂԵԿԱՆԱԼ

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

*ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված*

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

*ՀՀ Սահմանադրության $27^1$-րդ հոդված*

Բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում`

- ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն իրականացնելու և պաշտպանելու պայմանները և կարգը.
- ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը.
- իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում` ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը.
- իրավաբանական անձինք ստեղծելու, դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու կարգը և պայմանները.
- ֆիզիկական անձանց անձնական և ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց` առևտրային գաղտնիք չհամարվող տեղեկությունների ցանկը.
- քրեական, վարչական, տնտեսական (գույքային), կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը, կարգը, պայմանները, քրեական պատիժների իրականացման կարգը, դատական և վարչական ակտերի հարկադիր կատարման կարգը, փաստաբանների կարգավիճակը և լիազորությունները:

*ՀՀ Սահմանադրության $83^5$-րդ հոդված*

Ձեռնարկատիրական գործունեություն նախատեսելիս կամ դրա իրականացման ժամանակ անհրաժեշտություն է հանդիսանում հարկերի ու պարտադիր վճարների հետ կապված իրավունքների ու պարտականությունների, դրանց հաշվարկման, հաշվետվական ձևերի կազմման, ներկայացման ու վճարման կարգերի ու ժամկետների (այդ թվում` փոփոխությունների) վերաբերյալ մշտապես տեղեկացված լինելը: Այդ առումով առաջին հերթին անհրաժեշտ է ապավինել հրապարակված իրավական ակտերին:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

***Իրավական ակտը***[56] ՀՀ ժողովրդի, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների` օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր փաստաթուղթ է, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ (վարքագծի կանոններ)`

- ***Նորմատիվ իրավական ակտն*** օրենքով նախատեսված լիազոր մարմինների կողմից իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը և պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ: Իրավական նորմն օրենքով սահմանված դեպքերում և կարգով լիազոր մարմինների` իրենց լիազորությունների շրջանակում ընդունած վարքագծի պարտադիր կանոնն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ

[56] «Իրավական ակտերի մասին» 03.04.2002թ. ՀՕ-320 օրենք, ուժի մեջ է մտել 31.05.2002թ., հրապարակված է ՀՀՊՏ2002/15(190), 21.05.2002թ.

բազմակի կիրառման համար և պարտադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար.

- ***Անհատական իրավական ակտն*** օրենքով սահմանված դեպքերում ու կարգով լիազորված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար: Անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում.
- ***Ներքին իրավական ակտը*** պետական մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի՝ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում իրենց իրավասության շրջանակում ընդունած ակտն է, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար և սահմանում է վարքագծի կանոններ, որոնք տարածվում են միայն անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) այն անձանց վրա, ովքեր գտնվում են դա ընդունող մարմնի հետ աշխատանքային, վարչական կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ, կամ օգտվում են ընդունող մարմնի ծառայություններից կամ աշխատանքներից, կամ ընդունող իրավաբանական անձի հիմնադիրներ (մասնակիցներ, անդամներ, փայատերեր և այլն) են: Ներքին իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում: Ներքին իրավական ակտում առկա այն դրույթները, որոնք պարունակում են վերը նշված անձանցից բացի այլ անձանց վրա տարածվող իրավական նորմեր՝ իրավաբանական ուժ չունեն:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

- Նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում նախատեսված ժամկետներում, ոչ շուտ, քան սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ: Նորմատիվ իրավական այն ակտը, որում ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսված չէ, ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:
- Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող և փոփոխող կամ պարտականությունների կատարման կարգ սահմանող կամ փոփոխող, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող, ինչպես նաև դրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, եթե այդ նորմատիվ իրավական ակտերով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ կամ եթե «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն այլ բան նախատեսված չէ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Օրենքով սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն (իրավական հետևանքներ չեն առաջացնում և իրավահարաբերությունների կարգավորման համար իրավական հիմք չեն):**

**Անձը պարտավոր չէ կատարել սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջները: Անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել սահմանված կարգով չհրապարակված կամ ուժի մեջ չմտած իրավական ակտի պահանջների խախտման համար:**

«Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ հարկի դրույքաչափի փոփոխությունը, հարկի սահմանումը կամ վերացումը կատարվում է միայն ֆինանսական տարվա սկզբից (հաշվետու ֆինանսական տարվա ընթացքում պետական բյուջեի հաստատման դեպքում՝ հաստատման պահից), եթե առանձին հարկատեսակի մասին օրենքով այլ բան սահմանված չէ: Հարկի դրույքաչափի փոփոխություն, նոր հարկատեսակի սահմանում նախատեսող օրենքները, եթե դրանք պարունակում են հարկ վճարողի գործելու պայմանները խստացնող դրույթներ, ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակումից ոչ շուտ, քան 30 օր հետո:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ, ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ

Իրավական ակտերի պաշտոնական կամ ոչ պաշտոնական հրատարակումն իրականացվում է այդ իրավական ակտերը կամ դրանց քաղվածքները թղթի վրա, էլեկտրոնային կամ այլ կրիչների վրա տպագրման կամ բազմացման, ինչպես նաև էլեկտրոնային կամ այլ ցանցերով դրանց տարածման միջոցով:

- Օրենսդրական, գերատեսչական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի պաշտոնական հրատարակումն իրականացվում է այն տեսքով, ինչ տեսքով դրանք ուղարկվել են հրապարակման.
  - ՀՀ օրենքները, ՀՀ Ազգային ժողովի և սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ կառավարության՝ օրենքի ուժ ունեցող որոշումները, ՀՀ Նախագահի հրամանագրերն ու կարգադրությունները, ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումները դրանք ստանալու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում».
  - Գերատեսչական նորմատիվ ակտերը դրանք ստանալու օրվան հաջորդող 10 օրվա ընթացքում, պաշտոնապես հրապարակվում են «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում».
  - Օրենքների և իրավական այլ ակտերի պաշտոնական հրապարակման օր համարվում է դրանց ամբողջական տեքստը «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» կամ «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրում« առաջին անգամ հրատարակման (լույսընծայման) օրը.
  - «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» և «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» հրատարակման օր է համարվում տվյալ համարի համար նախատեսված տպաքանակի ութսուն տոկոսի՝ իրացման համար առաքման օրը, որը նշվում է տեղեկագրի շապիկի առաջին էջի վրա.
  - «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիրը» հրատարակվում է յուրաքանչյուր չորեքշաբթի օրը, իսկ «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիրը»՝ յուրաքանչյուր ամսվա 1-ին և 15-ին: Եթե տեղեկագրերի հրատարակման օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա տեղեկագրերը հրատարակվում են դրան հաջորդող աշխատանքային օրը: Անհրաժեշտության դեպքում կարող են հրատարակվել տեղեկագրի արտահերթ համարներ.
  - Եթե նորմատիվ իրավական ակտը չի հրապարակվել այնտեղ նշված իրավական ակտն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ, ապա իրավական ակտն ուժի մեջ մտնելու օր է համարվում դրա հրապարակմանը հաջորդող օրը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
  - Եթե նորմատիվ իրավական ակտի շապիկի առաջին էջում զետեղված պաշտոնական հրապարակման օրվա նշումը չի համապատասխանում տեղեկագրերի փաստացի հրատարակման օրվան, ապա իրավական ակտի պաշտոնական հրապարակման օր է համարվում տեղեկագրերի փաստացի հրատարակման օրը, որի մասին տեղեկագրերը հրատարակող մարմինը՝ այդ տեղեկագրի հրատարակման օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, պարտավոր է տեղեկագրի հաջորդ համարում տալ պաշտոնական հաղորդագրություն.
  - «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» և «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» հրատարակումն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին.
  - «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիրը» և «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիրը» ենթակա են ազատ իրացման և բաժանորդագրության:
- Նորմատիվ իրավական այն ակտը, որում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ կամ լրացումներ, համապատասխան ակտն ընդունած իրավասու կամ նորմատիվ ակտը հրատարակող մարմինը կարող է պաշտոնապես վերահրատարակել օրենքով նախատեսված համապատասխան տեղեկագրերում:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Օրենսդրական, գերատեսչական, դատական, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի պաշտոնական վերահրատարակման իրավունք ունեն ՀՀ արդարադատության նախարարությունը կամ օրենքով նախատեսված այլ անձինք:**

- Օրենսդրական, գերատեսչական, դատական ակտերի, տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերի ոչ պաշտոնական հրատարակումն իրականացվում է օրենքով և ՀՀ կառավարության սահմանած կարգով: Իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակումներ իրականացնողներն իրավունք ունեն ինքնուրույն մշակել դրանք, ինչպես նաև իրականացնել իրավական ակտերի ոչ պաշտոնական ինկորպորացիա (դրանցում կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները ներառված)՝ չփոխելով իրավական ակտի իմաստը: Իրավական ակտերի ոչ պաշտոնական հրատարակման մենաշնորհ տալն արգելվում է:
- Իրավական ակտերի պաշտոնական վերահրատարակումը կամ ոչ պաշտոնական հրատարակումը կարող է իրականացվել միայն իրավական ակտերի պաշտոնական հրապարակման կամ իրավասու մարմիններից կամ ՀՀ արդարադատության նախարարությունից պաշտոնապես ստացված իրավական ակտերի հիման վրա՝ նշելով հրապարակման կամ ստացման աղբյուրը.
  - Եթե մինչև իրավական ակտի պաշտոնական վերահրատարակման կամ ոչ պաշտոնական հրատարակման օրը դրանում կատարվել են փոփոխություններ կամ լրացումներ, ապա դրանք պետք է հրատարակվեն իրավական ակտերի հետ միասին, կամ այդ իրավական ակտերը պետք է հրատարակվեն դրանցում կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները ներառված (ինկորպորացիա)՝ նշելով, թե որ օրվա դրությամբ կատարված փոփոխություններով կամ լրացումներով համադրված է դա հրատարակվում.
  - օրենսդրական, գերատեսչական կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիան իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունը, որը կազմում է պաշտոնական ինկորպորացիայի ենթարկված նորմատիվ իրավական ակտերի էլեկտրոնային ժողովածու, որն անվճար տրամադրվում է միայն պետական մարմիններին:
- Օրենսդրական, գերատեսչական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտեր չհամարվող այլ իրավական ակտերը կարող են հրապարակել դրանք ընդունող մարմինները կամ այլ անձինք, բացառությամբ պետական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք համարվող իրավական ակտերի կամ նման գաղտնիք պարունակող իրավական ակտերի մասերի:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Օրենքի և իրավական այլ ակտերի պահանջների խախտմամբ հրատարակված իրավական ակտերը համարվում են անվավեր, և դրանց իրացումը, բազմացումը կամ տարածումն արգելվում է:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Հարկերի ու պարտադիր այլ վճարների հարաբերությունները կարգավորող ամբողջ օրենսդրության (օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ, գերատեսչական նորմատիվ ակտեր), այդ թվում՝ դրանում կատարվող փոփոխությունների ոչ պաշտոնական հրատարակությունները Դուք կարող եք գտնել «Հարկային և մաքսային տեղեկատու» ՓԲԸ կողմից պարբերաբար հրատարակվող գրքույկներում և ժողովածուներում:**

**Հասցե. ք. Երևան, Մ.Խորենացու 7շ. ☎539089, 231062**

## ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ

Իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով: Ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

- տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին.
- կես տարով որոշված ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվարկվող ժամկետների կանոնները.
- տարվա եռամսյակներով հաշվարկվող ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվարկվող ժամկետի կանոնները: Եռամսյակը համարվում է երեք ամսին հավասար, իսկ եռամսյակների հաշվարկը կատարվում է տարվա սկզբից.
- ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվարկվող ժամկետը լրանում է այն ամսին, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը.
- կես ամսով որոշվող ժամկետը դիտվում է որպես օրերով հաշվարկվող ժամկետ և հավասար է տասնհինգ օրվա.
- շաբաթներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին շաբաթվա համապատասխան օրը.

- եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը.
- եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը, սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի հիմնարկում կամ կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ կազմակերպությունում կամ հիմնարկում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները: Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը կապի կազմակերպությանը տրված փաստաթղթերը համարվում են ժամկետին տրված:

Եթե օրենքով կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ օրենքով կամ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Իրավական ակտերը կիրառող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են այդ մասին ՀՀ կառավարության սահմանած կարգով իրազեկել շահագրգիռ իրավաբանական և ֆիզիկական անձանց՝

- իրավաբանական կամ ֆիզիկական անձանց իրավունքները կամ ազատությունները սահմանափակող,
- դրանց իրականացման կարգը փոփոխող.
- պատասխանատվություն սահմանող
- պատասխանատվությունը խստացնող.
- պարտականություններ սահմանող և փոփոխող.
- պարտականությունների կատարման կարգ սահմանող և փոփոխող,
- իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ փոփոխող,
- նրանց վիճակն այլ կերպ վատթարացնող նորմատիվ իրավական ակտեր:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց լիազորությունների շրջանակում աջակցել անձանց նրանց իրավունքներն իրականացնելիս կամ պարտականությունները կատարելիս, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրանց խախտված իրավունքների վերականգնման համար, ինչպես նաև վերացնել անձանց իրավունքների կամ պարտականությունների իրականացմանը խոչընդոտող հանգամանքները, եթե այդ իրավունքների իրականացումը կամ պարտականությունների կատարումը չի հակասում պետական և հասարակական անվտանգության շահերին, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, կամ դրա հետևանքով չեն խախտվի այլոց իրավունքներն ու ազատությունները, պատիվը և բարի համբավը:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական, ֆիզիկական և պաշտոնատար անձինք պարտավոր են կատարել օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած իրավական ակտերի պահանջները՝ անկախ այն հանգամանքից, թե այդ իրավական ակտերը նրանք պաշտոնապես կամ ընդհանուր կարգով են ստացել, ինչպես նաև դրանց ընդունման կամ ուժի մեջ մտնելու մասին նրանք իրազեկվել կամ տեղյակ են եղել, թե ոչ, եթե օրենքով կամ տվյալ իրավական ակտով այլ բան նախատեսված չէ:**

**Սակայն նշվածը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և պաշտոնատար անձանց չի ազատում իրավական ակտերի մասին հասարակությանն իրազեկելու կամ տեղյակ պահելու՝ իրավական ակտերով նախատեսված իրենց պարտականությունների կատարումից:**

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

Իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում, իրավական ակտի ուժի մեջ մտնելու ժամկետի որոշման, իրավաբանական ուժ ունենալու հարցերի պարզաբանման, ինչպես նաև իրավական ակտի կիրառման բնագավառում ծագած այլ հարցերի ճշտման նպատակով տրվում է իրավական ակտի պարզաբանում: Իրավական ակտերի պաշտոնական պարզաբանումներ (տրվում է համապատասխան մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած անձանց ստորագրությամբ) կարող են տալ՝

- ՀՀ կառավարության լիազորած իրավական ակտը կիրառող գործադիր իշխանության մարմինը (ընդ որում, մեկ բնագավառի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավունք ունի միայն մեկ մարմին).
- ՀՀ կենտրոնական բանկը՝ իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ.

- կարգավորող հանձնաժողովները՝ իրենց կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ.
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ.
- համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու և իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ:

ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերում («Հարկերի մասին» ՀՀ օրենք, առանձին հարկատեսակների մասին օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ՝ հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում և սահմաններում, ՀՀ հարկային մարմնի և օրենքով սահմանված դեպքերում պետական կառավարման այլ մարմինների կողմից ընդունված ակտեր՝ հարկային օրենսդրությամբ կամ ՀՀ կառավարության որոշումներով սահմանված դեպքերում և սահմաններում) հակասության, երկիմաստության կամ տարընթերցման դեպքում դրա վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու նպատակով հարկ վճարողը կարող է նաև սահմանված կարգով դիմել հարկային, մաքսային, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ:

Եթե ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված դրույթները պարունակում են հակասություններ, երկիմաստություններ կամ տարընթերցումներ, ապա հարկման նպատակով այդ դրույթները մեկնաբանվում են, ինչպես նաև հարկային և (կամ) մաքսային մարմինների կողմից (գույքահարկի և հողի հարկի դեպքում՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից) կիրառվում են հարկ վճարողի օգտին:

Իրավական ակտի պաշտոնական պարզաբանումը տրվում է իրավական ակտի պաշտոնական մեկնաբանման համար նախատեսված կանոններով՝ դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Պաշտոնական պարզաբանում ստանալու համար ֆիզիկական կամ իրավաբանական անձն իր դիմումում պարտավոր է.

- նշել իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության կամ այլ հարցերով պարզաբանում ստանալու անհրաժեշտության մասին՝ նշելով առաջադրված հարցերի իրավական հիմքերը.
- ներկայացնել հարցերի պարզաբանման միայն մեկ տարբերակ:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Նշված պահանջներից չբխող դիմումները համարվում են խորհրդատվություն ստանալու նպատակ հետապնդող, դրանց վերաբերյալ տրվում են միայն օրենքով նախատեսված պատասխաններ:**

Պաշտոնական պարզաբանումները տրվում են դիմումն ստանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում: Նշված ժամկետում պաշտոնական պարզաբանումը չստանալու դեպքում դիմող անձն իրավասու է իրավական ակտի պահանջներն իրականացնելիս առաջնորդվել իր ներկայացրած պարզաբանման տարբերակով: Սակայն վերջինս պետք է ուղղակիորեն բխի իրավական ակտի պահանջներից, չպետք է փոփոխի դրա իմաստը, պետք է պարզաբանվի օրենքի պահանջների պահպանմամբ և դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ: Եթե դիմողն առաջնորդվել է օրենքի պահանջների պահպանմամբ տրված պարզաբանումով, ապա այդ պարզաբանման և իրավասու մարմնի հետագայում տված պարզաբանման կամ եզրակացության միջև հակասություն առաջանալու դեպքում դիմող անձն ազատվում է ոչ ճիշտ պարզաբանման հետևանքով թույլ տրված սխալների համար նախատեսված պատասխանատվությունից:

Պաշտոնական պարզաբանումների մեկ օրինակը, դրանց ստորագրման օրվան հաջորդող երրորդ օրը, ուղարկվում է ՀՀ արդարադատության նախարարություն, որը պարտավոր է «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» առաջիկա համարում հրապարակել դա: Պաշտոնական պարզաբանումների 1 օրինակը նշված ժամկետում չուղարկելն առաջացնում է վարչական պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Պաշտոնական պարզաբանումները պարտադիր բնույթ չունեն, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվել պաշտոնական պարզաբանումներով:**
>
> **Հրապարակայնորեն իրավական ակտի պաշտոնական պարզաբանումներ տվող պետական մարմինը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր տված ակնհայտ սխալ պարզաբանման հետևանքով պատճառված վնասի համար:**

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լիազոր մարմինը՝ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը վարում է հանքային իրավունքների կենտրոնացված գրանցամատյան, որտեղ պահվում են այդ իրավունքներին առնչվող ողջ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ իրավունքների փոփոխությունները, փոխանցումները, գրավադրումը և դադարեցումը: Գրանցամատյանը բաց է հասարակության համար և դրանից կարելի է օգտվել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով տուրք վճարելով:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լիցենզավորող մարմինները յուրաքանչյուր լիցենզավորված անձի համար կազմում են անհատական գործ և սահմանված կարգով վարում են լիցենզիաների գրանցամատյաններ: Գրանցամատյաններում պարունակվող տեղեկատվությունը բաց է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Լիցենզավորող մարմինները պարտավոր են՝

- լիցենզիաների գրանցամատյաններից այլ անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրել նրանց դիմումն ստանալու օրվանից 3 օրվա ընթացքում, որի համար գանձվում է պետական տուրք,
- լիցենզիաների գրանցամատյաններից իրենց վերաբերյալ տեղեկատվությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրել նրանց դիմումն ստանալու օրվանից 3 օրվա ընթացքում՝ անվճար,
- լիցենզիա տալու, դրա գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման, գործողության կասեցման, դադարեցման կամ վերականգնման մասին իրենց որոշումների պատճենները դրանք ընդունելու օրվանից 3 օրվա ընթացքում հրապարակման համար ուղարկել գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմին,
- լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռների պատճենները դրանք ուժի մեջ մտնելուց հետո 3 օրվա ընթացքում հրապարակման համար ուղարկել գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը հրապարակող մարմին,

Լիցենզիա տալու, դրա գործողության ժամկետի երկարաձգման, վերաձևակերպման կամ գործողության կասեցման կամ վերականգնման, ինչպես նաև գործողության դադարեցման մասին որոշումները կամ վճիռները հրապարակվում են «Գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» հատուկ բաժնում՝ դրանց ստացման օրվանից՝ 10 օրվա ընթացքում:

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանը կազմավորվում է պետական գրանցամատյաններից, պարունակում է տեղեկություններ Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր իրավաբանական անձանց (բացառությամբ բանկերի և ֆոնդային բորսաների), անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների մասին: Պետական միասնական գրանցամատյանի և պետական գրանցամատյանների տեղեկությունները բաց են հանրընդհանուր ծանոթացման համար, այդ տեղեկություններից կարող են օգտվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական ու ֆիզիկական անձինք անմիջականորեն կամ փոստով, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով տուրք վճարելով:

Պետական միասնական գրանցամատյանի և պետական գրանցամատյանների տեղեկություններն ստանալու համար անհրաժեշտ է պետական ռեգիստրի կենտրոնական մարմին կամ համապատասխան տարածքային ստորաբաժանում ներկայացնել գրավոր դիմում՝ պարտադիր նշելով պահանջվող տեղեկությունների ցանկը: Պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը տեղեկություններ է տրամադրում միայն տվյալ տարածքային բաժնում գրանցված սուբյեկտների մասին: Պետական ռեգիստրը պարտավոր է 5-օրյա ժամկետում գրավոր պատասխանել դիմողին: Պետական միասնական գրանցամատյանից տեղեկություններ տրամադրելիս պետական ռեգիստրի կենտրոնական մարմինը պարտավոր է նշել պետական միասնական գրանցամատյանից տրամադրվող տեղեկությունների արդիականացման վերջին ամսաթիվը:

Պետական ռեգիստրի տեղեկությունները, պատվիրատուի խնդրանքով, կարող են ուղարկվել փոստով, որի ծախսերը փոխհատուցում է պատվիրատուն:

## ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

- Հարկային մարմինը նախորդ հաշվետու տարվա արդյունքներով ՀՀ կառավարության սահմանած կարգով մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը, հրապարակում է հետևյալ տեղեկատվությունը՝
  - հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ կուտակած հարկ վճարողների վերաբերյալ,

- 50,0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարողների, այդ թվում՝ 1 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած բանկերի ու նրանց կողմից վճարված շահութահարկի մեծության վերաբերյալ,
- 3,0 մլն դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկային գործակալների վերաբերյալ:

■ Հարկային մարմինը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը հրապարակում է տեղեկատվություն առաջին 300 խոշոր հարկ վճարողների և տարվա սկզբից աճողական կարգով նրանց վճարած հարկերի գումարների վերաբերյալ, իսկ առաջին 1000 խոշոր հարկ վճարողների ցանկերը և տարվա սկզբից աճողական կարգով նրանց վճարած հարկերի գումարների տվյալները տեղադրվում են ՀՀ ԿԱ ՀՊԾ պաշտոնական ինտերնետային կայքում (www.taxservice.am):

■ Հարկային մարմինը ՀՀ կառավարության սահմանած կարգով[57] մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը հրապարակում է տեղեկատվություն նախորդ տարվա արդյունքներով սոցիալական վճարների պարտավորություններ կուտակած ապահովադիրների վերաբերյալ, իսկ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ 3.0 մլն դրամ և ավելի սոցիալական վճար վճարած ապահովադիրների ու նրանց կողմից տարվա սկզբից վճարված սոցիալական վճարների մեծության, ինչպես նաև 100 և ավելի աշխատողների միջին ցուցակային թիվ հայտարարագրած ապահովադիր առևտրային կազմակերպությունների վերաբերյալ:

**Հարկերի ու պարտադիր վճարների մասին օրենսդրության, ինչպես նաև ձեռնարկատիրական գործունեության հետ կապված հարակից օգտակար տեղեկատվություն կարելի է ստանալ մասնավորապես՝ հետևյալ ինտերնետային կայքերից**



**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.parliament.am/

ՀՀ օրենսդրությունն ըստ այբենական ցանկի և ոլորտային դասակարգման, ԱԺ նիստերի օրակարգեր, ԱԺ կողմից ընդունված և ընդունման փուլում գտնվող օրենքների նախագծեր, գրադարան, էլեկտրոնային բազա:



**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.gov.am/

ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներ, կառավարության կառուցվածքը, նախարարությունների, տարածքային կառավարման մարմինների, առընթեր մարմինների համառոտ նկարագրություն և տեղեկատվություն:



**ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.cba.am/,

http:// www.sca.am/

ԿԲ դրամավարկային քաղաքականությունը, բանկային համակարգ և վերահսկողություն, վարկային ռեգիստր, ֆինանսական գործառնություններ, վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հրապարակումներ, իրավական դաշտ:



**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.concourt.am/

Սահմանադրական դատարանի բոլոր որոշումները, սահմանադրական իրավունքի էլեկտրոնային գրադարան և այլ օգտակար տեղեկատվություն:



**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.justice.am/

դատաիրավական բարեփոխումներ, իրավական ակտեր և դրանց նախագծեր, տեղեկատվություն, իրավական դաշտ:



**ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.armenian-judiciary.am,

http://www.court.am/

ՀՀ դատական համակարգի (բոլոր ատյանների և վճռաբեկ) կառուցվածքը, դատարան դիմելու և դատական որոշումները բողոքարկելու կարգը, իրավական դաշտ, ՀՀ դատական ակտերի՝ վճիռների և որոշումների տեղեկատու:



**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.economic-court.am

դատարանի կառուցվածքն ու գործառույթները, աշխատակարգը, դատարան դիմելու կարգը և անհրաժեշտ ձևաթղթերը, իրավական դաշտը, դատական ակտերի՝ վճիռների և որոշումների տեղեկատու, պարտապանի գույքի վաճառքի տեղեկատվություն:



**ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ**

http://www.stateregistry.am

օգտակար և մանրամասն տեղեկատվություն իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման բոլոր հարցերի ու ընթացակարգերի վերաբերյալ, իրավական դաշտ:

---

[57] հաստատված է ՀՀ կառավարության 27.04.2006թ N582-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 01.01.2006թ., հրապարակված է ՀՀՊՏ2006/29(484) 31.05.2006թ.)




### ՀԵՏՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.tvradio.am

հանձնաժողովի գործունեությունը, որորտը կարգավորող իրավական ակտերը, հանձնաժողովի նիստերն ու որոշումները, հեռուստառադիոհաճախականություններ, հեռուստառադիոհեռարձակում իրականացնող ընկերություններ, դրանց վերաբերյալ օգտակար տեղեկատվություն:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://cmpt.edram.am

հանձնաժողովի գործունեությունը, որորտը կարգավորող իրավական դաշտ, հանձնաժողով ներկայացված դիմումները, բողոքները, հաշվետվությունները, դրանց հետագա վիճակը, հանձնաժողովի պաշտոնական տեղեկագրերը:



### ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.psrc.am

հանձնաժողովի բոլոր որոշումները, հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական դաշտ, սակագներ, հանձնաժողովի տրամադրած բոլոր լիցենզիաներն ու արտոնագրերը, տեխնիկատնտեսական տեղեկատվություն և մոնիտորինգի արդյունքներ:

### ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.mfe.gov.am

ընդհանուր և պաշտոնական տեղեկատվություն, պետական գանձապետական համակարգ, մակրոտնտեսական ցուցանիշներ, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, լիցենզավորում, նորմատիվ իրավական դաշտ, օգտակար տեղեկատուներ:



### ՀՀ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.minted.am/am/

տնտեսական քաղաքականությունը արդյունաբերության, առևտրի ու ծառայությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության, տեղեկատվական տեխնոլոգիաների զբոսաշրջության, ընդերքօգտագործման բնագավառներում, ստանդարտացում, չափագիտություն և համապատասխանության գնահատում, ոլորտը կարգավորող իրավական ակտերը:



### ՀՀ ՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.mnp.am
http://www.nature-ic.am

կառուցվածքն ու գործառույթները, բնապահպանության ոլորտի իրավական դաշտը, բնապահպանական վերահսկողություն, վիճակագրական, էկոլոգիական և այլ օգտակար տեղեկատվություն տեղեկատվություն:



### ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.edu.am/

կառուցվածքն ու գործառույթները, կրթական ծրագրերի իրականացում, լիցենզավորում, վերահսկում, ոլորտի իրավական դաշտ:

### ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.arminhealth.am

կառուցվածքն ու գործառույթները, առողջապահության բնագավառում գործունեության իրականացում, լիցենզավորում, վերահսկողություն, ոլորտի իրավական դաշտ:



### ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.mtc.am/

կառուցվածքն ու գործառույթները, տրանսպորտի և կապի բնագավառում գործունեության իրականացում, ոլորտի իրավական դաշտ և օգտակար այլ տեղեկատվություն:

### ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹ-ՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.minagro.am

կառուցվածքն ու գործառույթները, գյուղատնտեսության բնագավառում գործունեության իրականացում, ոլորտի իրավական դաշտ և օգտակար այլ տեղեկատվություն:

### ՀՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.taxservice.am/

ՀՊԾ կառուցվածք, գործառույթներ, իրավունքներ ու պարտականություններ, հարկային օրենսդրություն, հարկատեսակների ու վճարատեսակների գծով իրավական տեղեկատվություն, հարկային հաշվետվություններ և խորհրդատվություն, մեդիանյութեր, հարկային իրավախախտումներն ու դրանց պատժամիջոցները, այլ օգտակար տեղեկատվություն:

### ՀՀ ԿԱ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.customs.am/

ՄՊԿ կառուցվածքը, գործառույթներ, մաքսային օրենսդրություն, ապրանքների ներմուծման, արտահանման ընթացակարգեր և մաքսային ռեժիմներ, մաքսային օրենսդրության խախտումները և պատժամիջոցները, այլ օգտակար տեղեկատվություն:

### ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.privatization.am/

օգտակար տեղեկատվություն մասնավորեցման մասին, մասնավորեցման ծրագրեր և մրցույթների հայտարարություններ, ոլորտի նորմատիվ-իրավական դաշտը:

### ՀՀ ԿԱ ԱՆՇԱՐԺ ԳՈՒյՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.cadastre.am

տեղեկատվություն գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման օրենսդրության, պետական գրանցման ընթացակարգերի մասին:



### ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.mss.am/

Կառուցվածքն ու գործառույթները, աշխատանքի, կենսաթոշակային և սոցիալական ապահովագրության ոլորտի իրավական դաշտ, սոցիալական և կենսաթոշակային ապահովագրություն, աշխատանքի, աշխատավարձի և զբաղվածության ոլորտի գործնական հարցեր ու տեղեկատվություն:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ՀԻՏՀ)

http://www.lows.am/

http://www.arils.am/

ՀՀ գործող իրավական ակտերի պաշտոնական էլեկտրոնային հրապարակում ՀՀ արդարադատության նախարարության «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ-ի կողմից: Համակարգը բաց է և հնարավորություն է տալիս ունենալ ցանկացած ակտի ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակը:

### «ԻՐՏԵԿ» ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈՐՈՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԿԱՐԳ

http://www.irtek.am/

Իրավական տեղեկատվական կենտրոնը վարում է բոլոր իրավական ակտերի բազմագործոն որոնողական տեղեկատվական համակարգ, հնարավորություն տալով ծանոթանալու իրավական ակտի ժամանակագրական տարբերակին:

### ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹ-ՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

http://www.armstat.am

Վիճակագրական տարեգրքեր, դասակարգիչներ (վարչատարածքային, տնտեսական գործունեության տեսակների, արտադրանքի և զբաղմունքների), իրավական դաշտ, տարածքային վիճակագրություն, ըստ ոլորտների բոլոր վիճակագրական հաշվետվությունների ձևաթղթերն ու լրացման հրահանգները:

### ՀՀ ՄՏԱՎՈՐ ՍՈՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

www.armpatent.org

գործակալության նպատակները, գյուտի կամ օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի արտոնագրի, ապրանքային (սպասարկման) նշանի, ապրանքի ծագման տեղանվան կամ օգտագործման իրավունքի, ինչպես նաև ֆիրմային անվանման գրանցման ողջ ընթացակարգը և պահանջները:

http://www.taxinfo.am

Հարկային օրենսդրություն, հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրություն, փոփոխություններ նորություններ, էլեկտրոնային տարբերակով դրանք ստանալու հնարավորություն, օգտակար տեղեկատվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ**

http://www.spyur.am/

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
http://www.smednc.am/

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

http://www.ada.am/

հարկային, առևտրի, ֆինանսների , հեղինակային և հարակից իրա-վունքների և մրցակցության պաշտպանության, ինչպես նաև բիզնեսին առընչվող այլ բնագավառները կարգավորող օրենսդրություն:

**ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

http://www.region.am

ՀՀ տարածքային կառավարման նախարարության և 10 մարզերի էլեկտրոնային կառավարման համակարգեր, որոնք իրավական դաշտից բացի յուրաքանչյուր մարզի մասով ներառում են՝ ընդհանուր տեղեկություններ, մարզի գերատեսչական մարմիններն ու համայնքները, կազմակերպություններն ու հասարակական կառույցները, տնտեսական կյանքը բնութագրող ցուցանիշները, ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորություններ, վիճակագրական և այլ օգտակար տեղեկատվություն:

Սյունիքի մարզ
http://syunik.region.am/

Արագածոտնի մարզ
http://aragatsotn.region.am/

Գեղարքունիքի մարզ
http://gegharkunik.region.am

Կոտայքի մարզ
http://kotayk.region.am/

Արարատի մարզ
http://ararat.region.am

Արմավիրի մարզ
http://armavir.region.am/

Շիրակի մարզ
http://shirak.region.am

Տավուշի մարզ
http://tavush.region.am

Լոռու մարզ
http://lori.region.am/

Վայոց Ձորի մարզ
http://vdzor.region.am/

# ԻՆՉՊԵՍ ՍՏՈՒԳՎԵԼ

Հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումները առանձին՝ զուտ հարկային ուղղվածության օրենքով կամ իրավական այլ ակտով չեն կանոնակարգվում: Ինչպես վարչական ներգործության իրավասությամբ օժտված պետական կառավարման այլ մարմինների, այնպես էլ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումները կանոնակարգվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով[58]:

## ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ստուգումն ընթացակարգ է, որը նպատակ ունի պարզել տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկային մարմին ներկայացված հաշվետվությունների, հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների ու այլ փաստաթղթերի արժանահավատությունը և նրա փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով չեն կանոնակարգվում՝**

- **պետական մարմնի և տնտեսավարող սուբյեկտի միջև կնքված քաղաքացիաիրավական գործարքների հիման վրա կնքված պայմանագրի շրջանակներում պետական մարմնի կողմից որպես գործարքի կողմ իրականացվող ստուգումները,**
- **ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզիա ստացած անձանց գործունեության նկատմամբ իրականացվող վերստուգումները,**
- **ՀՀ Ազգային ժողովի վերահսկիչ պալատի կողմից իրականացվող վերահսկողությունը,**
- **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան իրականացվող ստուգումների նշանակումն ու անցկացումը,**
- **ՀՀ մաքսային օրենսգրքով նախատեսված մաքսային հսկողության հետ կապված հարաբերությունները,**
- **տնտեսավարող սուբյեկտի գործադիր մարմնի նկատմամբ բաժնետերերի, փայատերերի, հիմնադիրների կամ անդամների (տնտեսավարող սուբյեկտի տարածքային ու կառուցվածքային ստորաբաժանումների նկատմամբ տնտեսավարող սուբյեկտի գործադիր մարմնի) կողմից իրականացվող հսկողության հետ կապված հարաբերությունները:**

Ստուգումները կարող են լինել երկու տեսակի՝ թեմատիկ կամ համալիր:

Համալիր են այն ստուգումները, որոնք ուղղված են տնտեսավարող սուբյեկտի ամբողջ ֆինանսատնտեսական գործունեության փաստացի իրավիճակը պարզելուն: Համալիր ստուգումները նպատակ ունեն պարզելու, մասնավորապես, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների վարման և փաստաթղթերի լրացման ճշտությունը՝ վեր հանելով սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության վերջնական կամ միջանկյալ արդյունքները:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Համալիր ստուգման անցկացում պահանջելու բացառիկ իրավունքը պատկանում է տնտեսավարող սուբյեկտի բաժնետերերին, փայատերերին, հիմնադիրներին կամ անդամներին՝ իրենց վերապահված իրավասությունների շրջանակներում:**

Թեմատիկ են տնտեսավարող սուբյեկտների՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների կամ առանձին հարկատեսակների և պարտադիր վճարների հաշվարկման ու վճարման ճշտության ստուգումները, օրինակ՝ հարկային, մաքսային, պարտադիր սոցիալական ապահովագրության, բնօգտագործման և բնապահպանական վճարների հաշվարկման ու վճարման ճշտությունը պարզելուն ուղղված ստուգումները, գործունեությունը համապատասխան լիցենզիայի հիման վրա իրականացնելու, ինչպես նաև արժութային գործառնությունների ճշտության ստուգմները և այլն:

Ստուգումից բացի հարկային մարմինը կարող է իրականացնել նաև ուսումնասիրություն, որը տնտեսավարող սուբյեկտի ֆինանսական ու փաստացի գործունեության վիճակը (վերջինիս ներկայացրած հաշվապահական հաշվեկշռի, ֆինանսական և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվությունների հիման վրա) պարզաբանելու նպատակով իրականացվող ընթացակարգ է:

---

[58] «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» 17.05.2000թ ՀՕ-60 օրենք, ուժի մեջ է մտել 01.07.2000թ., հրապարակվել է ՀՀՊՏ2000/14(112), 23.06.2000թ.

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Հարկային մարմնի կողմից ուսումնասիրությունները կարող են իրականացվել

- արտագնա (տնտեսավարող սուբյեկտի մոտ) ուսումնասիրություններ, օրինակ՝ որևէ հարկային կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների պարտավորությունից ավելի վճարված գումարների (գերավճարների) հաշվանցման և վերադարձի, ինչպես նաև հսկիչ գնումների իրականացման դեպքերում ՀՀ կառավարության սահմանած կարգով[59]: Ուսումնասիրության հիմք կարող է հանդիսանալ մասնավորապես՝
  - որևէ հարկային պարտավորությունից հարկ վճարողի կողմից ավելի վճարված գումարների (գերավճարների) նույն հարկ վճարողի այլ հարկատեսակների գծով առկա տույժերի, տուգանքների, ապա հարկերի գումարների հաշվին հաշվանցման անհրաժեշտությունը.
  - հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարները (գերավճարներ) բոլոր հարկային պարտավորությունների կատարումից հետո հարկ վճարողին վերադարձման անհրաժեշտությունը.
  - տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկվող օբյեկտի գծով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հաշվապահական հաշվառման, այլ հաշվառման կամ գրանցման սահմանված փաստաթղթերը չվարելը կամ դրանք կոպիտ խախտումներով վարելը.
  - հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում, հաշվարկներում, հայտարարագրերում և այլ փաստաթղթերում ակնհայտ կեղծ տվյալներ մտցնելը, որի հետևանքով անհնար է դառնում տնտեսավարող սուբյեկտի հարկային պարտավորությունները օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկելը.
  - սահմանված կարգով երրորդ անձից ստացված տեղեկությունները.
  - հարկային մարմնի պաշտոնատար անձի հիմնավորված միջնորդությունը՝ հսկիչ գնում կատարելու թույլտվություն ստանալու համար, որտեղ պետք է նշվեն հսկիչ գնում կատարելու պատճառները, վայրը, իրականացման ժամանակահատվածի հիմնավորումը,
  - հարկ վճարողի դիմումն ուսումնասիրություն իրականացնելու մասին:

Ուսումնասիրությունն իրականացվում է սահմանված կարգով գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են ուսումնասիրություն կատարելու հիմքերը, նպատակը, հարկ վճարողի տվյալները (հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը), ուսումնասիրության իրականացման վայրը, ժամկետը, հարկային մարմնի անվանումն ու հարկային մարմնի պաշտոնատար անձի տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի կնիքով:

Ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձն իրավունք ունի՝

- պահանջելու փաստաթղթեր, տվյալներ, այլ տեղեկություններ և կատարելու անմիջականորեն ուսումնասիրությանն առնչվող գործողություններ.
- անհրաժեշտության դեպքում ուսումնասիրության հետ կապված աշխատանքներում ներգրավելու հարկ վճարողի համապատասխան մասնագետներին:

Ուսումնասիրություն կատարող հարկային մարմնի պաշտոնատար անձը պարտավոր է՝

- հարկ վճարողին ծանոթացնել ուսումնասիրության հանձնարարագրին.
- պահպանել ՀՀ օրենսդրությունը, հարկ վճարողի իրավունքները և օրինական շահերը.
- առանց հարկ վճարողի գրավոր համաձայնության՝ չհրապարակել ուսումնասիրության ընթացքում հարկ վճարողի մասին հայտնի դարձած տեղեկությունը.
- չխոչընդոտել հարկ վճարողի բնականոն աշխատանքը:

Հարկ վճարողն իրավունք ունի՝

- արգելելու հարկային մարմնի պաշտոնատար անձին ուսումնասիրություն իրականացնել, եթե բացակայում են սահմանված հիմքերը.
- չկատարելու հարկային մարմնի պաշտոնատար անձի իրավասությունից, ինչպես նաև ուսումնասիրության նպատակներից չբխող պահանջները.
- ծանոթանալու ուսումնասիրության արդյունքում կազմված արձանագրության հետ.
- պահանջելու հարկային մարմնի պաշտոնատար անձի ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը:

Հարկ վճարողը պարտավոր է՝

- ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ուսումնասիրություն իրականացնելու համար.

---

[59] ՀՀ կառավարության 11.05.2002թ. N502 որոշում, ուժի մեջ է մտել 11.05.2000թ., հրապարակվել է ՀՀՊՏ2002/17(192), 05.06.2002թ.

- կատարել ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի օրինական պահանջները, չխոչընդոտելով ուսումնասիրության ընթացքը, ներկայացնել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ:

Ուսումնասիրության իրականացման հանձնարարագիրը նախքան ուսումնասիրությունն սկսելը ծանոթացման նպատակով ներկայացվում է հարկ վճարողի ղեկավարին (փոխարինող պաշտոնատար կամ այլ պատասխանատու անձին), բացառությամբ հսկիչ գնումների, երբ հանձնարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր հսկիչ գնման ավարտից անմիջապես հետո:

Ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձն ուսումնասիրության արդյունքում կազմում է արձանագրություն՝ 2 օրինակից: Արձանագրության մեջ նշվում են հանձնարարագրի համարը, ուսումնասիրության համար ընդգրկված ժամանակաշրջանը, արձանագրության կազմման վայրը, ուսումնասիրություն իրականացնող պաշտոնատար անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, հարկ վճարողի տվյալները (հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը), տնտեսավարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), ստացված արդյունքները: Հսկիչ գնման դեպքում նշվում են նաև հսկիչ գնման իրականացման վայրը, ժամանակը, ընթերակայի անկետային տվյալները (եթե հսկիչ գնումը կատարվում է որևէ այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջոցով, նաև (կամ) դրանց տվյալները):

Արձանագրությունն ստորագրում են ուսումնասիրություն իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձը և հարկ վճարողի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, հսկիչ գնման դեպքում՝ նաև ընթերակաները և տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վճարող, ծառայություններ մատուցող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը:

Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, որն առարկություններ ունենալու դեպքում դրանք ներկայացնում է գրավոր:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Իրականացված ուսումնասիրության (բացառությամբ կամերալ ուսումնասիրության) արդյունքներով լրացուցիչ հարկային կամ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների պարտավորություններ (այդ թվում՝ տույժերի կամ տուգանքների տեսքով) չեն կարող առաջադրվել: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն օգտագործվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում հարկային մարմինների կողմից հարկ վճարողների հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման), ինչպես նաև ապրանքների, առարկաների, աշխատանքների ու ծառայությունների գների արձանագրման նպատակով:**

- հարկային մարմին ներկայացրած հաշվետվությունների, հաշվարկների, հայտարարագրերի, ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունների և օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների՝ հարկային մարմնում (առանց տնտեսավարող սուբյեկտին այցելության և լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջի) կամերալ (գրասենյակային) ուսումնասիրություններ: Կամերալ ուսումնասիրության նպատակն է պարզել հարկերի հաշվարկման ճշտությունը, միևնույն հաշվետվության ցուցանիշների, տվյալների և թվաբանական հաշվարկների ճշտությունը, տարբեր հաշվետվություններում առկա համադրելի ցուցանիշների կամ տեղեկությունների համապատասխանությունը, հաշվետվություններում արտացոլված ցուցանիշների և տեղեկությունների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու պետական մարմիններից ստացված տեղեկությունների հետ:

  Կամերալ ուսումնասիրության արդյունքում հաշվետվություններում խախտումներ, անճշտություններ, անհամապատասխանություններ (խախտումներ) հայտնաբերելու դեպքում դրա վերաբերյալ կազմվում է արձանագրություն (2 օրինակից), որը ուսումնասիրություն անցկացնող հարկային մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում փոստով կամ առձեռն տրամադրում է տնտեսավարող սուբյեկտին: Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) 5 աշխատանքային օրվա ընթացքում՝

  - արձանագրված խախտումների հետ համաձայնվելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում օրենսդրությամբ սահմանված ճշտված (ճշգրտված) հաշվետվությունը կամ հաշվետվությունները,
  - արձանագրված խախտումների հետ համաձայն չլինելու դեպքում հարկային մարմին է ներկայացնում իր գրավոր առարկությունները: Հարկային մարմինը նշված գրավոր առարկությունները կցում է տնտեսավարող սուբյեկտի հարկային գործին և կարող է դրանք օգտագործել միայն օրենքով նախատեսված ստուգումների ժամանակ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Կամերալ (գրասենյակային) ուսումնասիրության արդյունքներով լրացուցիչ պարտավորություններ կարող են առաջանալ միայն տնտեսավարող սուբյեկտի կողմից հարկային մարմնի հայտնաբերած խախտումները ընդունելու եւ ճշգրտված հաշվետվություններ ներկայացնելու արդյունքում:**

**Ինչ վերաբերում է նշված խախտումների հետևանքով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ստուգումներին, ապա այդ խախտումների հիմքով պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների կրկնակի ստուգումներ կարող են անցկացվել միայն օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքերում:**

## ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Տնտեսավարող սուբյեկտների մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող գրեթե բոլոր ստուգումները ընթացակարգային առումով կարելի բաժանել երեք հիմնական փուլի՝

- նախապատրաստական կամ ծանուցման փուլ,
- ստուգման իրականացման բուն գործընթաց,
- ստուգման արդյունքների ամփոփման փուլ:
- *Նախապատրաստական կամ ծանուցման փուլ*

Որևէ տնտեսավարող սուբյեկտի մոտ իրականացվող ստուգումն սկսելուց առաջ համապատասխան պետական մարմնի ղեկավարը (հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգումների դեպքում՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետը) հրապարակում է հրաման կամ հանձնարարագիր ստուգում իրականացնելու մասին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման, հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների, տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների, առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգումների, չձևակերպված աշխատողների բացահայտմանն ուղղված ստուգումների դեպքերում հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ հրամանի կամ հանձնարարագրի տրման լիազորությունը կարող է փոխանցվել հարկային (տարածքային) տեսչության պետին:**

Հրամանում կամ հանձնարարագրում նշվում են ստուգում իրականացնող մարմնի անվանումը, ստուգվող տնտեսավարող սուբյեկտի անվանումը, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց տվյալները, ստուգման հարցերը, ստուգմամբ ընդգրկվող ժամանակաշրջանը, ստուգման նպատակը, ժամկետը, ստուգման իրավական հիմքերը:

Ստուգման հրամանի կամ հանձնարարագրի երկու օրինակն ստուգումն սկսելուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ պետք է հանձնվի տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (նրան փոխարինող պաշտոնատար անձին): Վերջինս պարտավոր է ստորագրել դրա մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման (մասնավորապես՝ ժամկետների մասին) մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Ստուգման մասին 3 աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) չի տեղեկացվում օրենքով սահմանված բացառիկ դեպքերում, մասնավորապես՝**

- **ակցիզային դրոշմանիշների և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգումներ,**
- **հաստատագրված վճարների մասին օրենքով սահմանված ելակետային տվյալների և դրանց ուղղիչ գործակիցների ստուգումներ,**
- **տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների ստուգումներ,**
- **տարադրամի փոխանակման կետերի կամ արժութային դիլերների կողմից արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների գրանցման ստուգումներ,**
- **արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այդ օրենքների հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի կիրառման ստուգումներ,**
- **առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների գրանցման ստուգումներ,**
- **առանց պետական գրանցման, առանց համապատասխան լիցենզիայի (թույլտվության) ձեռնարկատիրական գործունեության իրականացման ստուգումներ,**
- **պարզեցված հարկ վճարողների մոտ իրենց պատկանող ապրանքային մնացորդների ստուգումներ,**
- **պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների (այդ թվում՝ վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի վարման) ճշտությանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումներ:**

■ *Ստուգման իրականացման բուն գործընթաց*

Ստուգում կատարող պաշտոնատար անձինք ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված նպատակների շրջանակներից դուրս գալու իրավունք չունեն, սակայն անհրաժեշտության դեպքում ստուգման նպատակները և շրջանակները կարող են փոփոխվել համապատասխան պետական մարմնի կողմից՝ ստուգում կատարող պաշտոնատար անձի (անձանց) գրավոր հիմնավորմամբ:

Տնտեսավարող սուբյեկտի մոտ մեկ ստուգման ժամկետը չի կարող գերազանցել 15 անընդմեջ աշխատանքային օրը՝ յուրաքանչյուր տարվա համար: Ընդ որում, ստուգման առաջին օր է համարվում ստուգումը փաստացի սկսելու օրը (ստուգվող օբյեկտում պահվող ստուգման մատյանում համապատասխան գրառում կատարելու օրը): Ստուգման մատյանը պարունակում է տեղեկություններ՝ տարվա ընթացքում կատարվող ստուգումների, ստուգումն իրականացնող մարմնի, ստուգող պաշտոնատար անձանց կազմի, ստուգման հարցերի, նպատակի, ժամկետների մասին:

Ստուգման ժամկետը չպետք է գերազանցի ստուգման հրամանում կամ հանձնարարագրում նշված ժամկետը: Անհրաժեշտության դեպքում ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի գրավոր հիմնավորմամբ ստուգման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 անընդմեջ աշխատանքային օր, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ մինչև 75 անընդմեջ աշխատանքային օր:

| |
|---|
| **ԽՈՐՀՈՒՐԴ**<br>**Ձեր գրասենյակում միշտ ունեցեք ստուգման մատյան՝ բոլոր տեսակի ստուգումների վերաբերյալ օրենքով պահանջվող գրառումները կատարելու համար: Ստուգման մատյանի որոշակի ձև օրենքով պարտադրված չէ, ուստի ստուգվող սուբյեկտի համար որպես ստուգման մատյան կարող է ծառայել դրա համար հարմարեցված և կազմված (կազմված, կնքված, գծաբաժանված և այլն) ցանկացած թղթային կրիչ (տետր, մատյան և այլն):** |

Ստուգման ընթացքում առանձին տեղեկությունների ճշտման անհրաժեշտություն առաջանալու դեպքում ստուգման ընթացքը կարող է կասեցվել՝ մինչև կասեցման հիմքերի վերացումը: Ստուգման փաստացի ժամկետի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 30 անընդմեջ աշխատանքային օրը (առանց կասեցման ժամանակահատվածի), իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3,0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ՝ 90 աշխատանքային օրը (առանց կասեցման ժամանակահատվածի): Ստուգման ժամկետների սխեմատիկ պատկերը հետևյալն է՝



■ *Ստուգման արդյունքների ամփոփում*

Ստուգման ավարտից հետո, ստուգման արդյունքներով կազմվում է ակտ՝ 2 օրինակից (պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների դեպքում՝ երեք օրինակից), իսկ խախտումներ և թերություններ չհայտնաբերելու դեպքում՝ տեղեկանք, որում արձանագրվում են տեղեկանքը կազմելու ամսաթիվն ու տեղը, ստուգող մարմնի և տնտեսավարող սուբյեկտի անվանումները, ստուգող անձանց կազմը, ստուգման նպատակը, ժամկետները և այլն:

Կազմված ակտը ստուգում իրականացնող անձինք 3 օրվա ընթացքում ներկայացնում են տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին (նրան փոխարինող պաշտոնատար անձին): Ակտն ստորագրում են ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը): Տարաձայնությունների դեպքում կողմերի կարծիքները արձանագրվում են ակտում: Ակտն ստորագրելուց հրաժարվելու դեպքում դրա մասին ակտում կատարվում է համապատասխան գրառում: Տնտեսավարող սուբյեկտի կողմից ակտն ստորագրելու և տարաձայնություններ ներկայացնելու ժամկետը չի կարող գերազանցել 3 աշխատանքային օրը, իսկ հաշվետու տարվա արդյունքներով 3.0 մլրդ դրամ և ավելի իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ հայտարարագրած տնտեսավարող սուբյեկտների մոտ ստուգման դեպքում՝ 15 աշխատանքային օրը:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Ստուգման ակտը ստորագրելուց հրաժարվելը և դրա վերաբերյալ տարաձայնություններ և առարկություններ ներկայացնելը տնտեսավարող սուբյեկտին չի ազատում ակտով արձանագրված խախտումների համար նախատեսված պատասխանատվությունից (մասնավորապես՝ տուգանքների վճարումից), ինչպես նաև չի կանգնեցնում այդ խախտումների համար օրական տույժերի հաշվարկման ընթացքը:**

## ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Որպես կանոն, միևնույն պետական մարմնի կողմից միևնույն տնտեսավարող սուբյեկտում ստուգում կարող է իրականացվել օրացուցային տարում ոչ ավելի, քան մեկ անգամ: Եթե առկա են օրենքով սահմանված վերստուգումներ անցկացնելու իրավական հիմքեր, ստուգող մարմինն իրավունք ունի մեկ տարվա ընթացքում իրականացնել կրկնակի ստուգում: Հարկային մարմնի կողմից իրականացվող՝ տնտեսավարող սուբյեկտի համալիր կամ թեմատիկ ստուգումից հետո նույն տնտեսավարող սուբյեկտում նույն ժամանակաշրջանի համար կատարվող պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության յանկացած ստուգում համարվում է կրկնակի ստուգում: Ֆինանսատնտեսական գործունեության վերստուգումներ կարող են իրականացվել բացառապես ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ:

Վերստուգումներ կարող են անցկացվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

- տնտեսավարող սուբյեկտը լուծարելիս,
- տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի խնդրանքով,
- ՀՀ վարչապետի գրավոր հանձնարարությամբ,
- եթե օրինական ուժի մեջ մտած դատավճռով հաստատվել են նախորդ ստուգողի հանցավոր գործողություններ,
- պետական գույքի մասնավորեցման լիազորված պետական մարմնի պահանջով, պայմանավորված պետական կամ 51%-ից ավելի պետական մասնակցությամբ տնտեսավարող սուբյեկտի մասնավորեցման նախապատրաստական աշխատանքների իրականացմամբ,
- ստուգվող տնտեսավարող սուբյեկտի կողմից դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց՝ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումների ժամանակ,
- բողոքները վերադասության կարգով քննության առնվելու ընթացքում ծագած հանգամանքների դեպքում,
- ստուգման մասին 3 աշխատանքային օր առաջ տնտեսավարող սուբյեկտին չտեղեկացնելու առումով օրենքով սահմանված բացառիկ դեպքերում,
- հարկային պարտավորությունների սահմանված չափից ավելի վճարված գումարները հարկ վճարողի դիմումի հիման վրա հարկ վճարողի այլ հարկային պարտավորություններին հաշվանցելու կամ նրան վերադարձնելու առաջ տնտեսավարող սուբյեկտի մոտ կատարվող ստուգման դեպքերում:

Կրկնակի ստուգման անցկացման հիմքեր ներկայացրած անձինք կրկնակի ստուգման հետևանքով այդ հիմքերը չհաստատվելու (չհիմնավորվելու) դեպքում ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ՍՏՈՒԳՎՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք իրավունք ունեն՝

- արգելել ստուգումը (ստուգումն իրականացնող անձանց փաստաթղթեր տրամադրելը), եթե ստուգողների կողմից խախտել են ստուգում իրականացնելու համար օրենքով սահմանված պահանջները:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Ստուգումն արգելելու մասին տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) պարտավոր է նույն օրը գրավոր կերպով ծանուցել ստուգում իրականացնող պետական մարմնին:**

- ծանոթանալ ստուգումների ակտերին,
- ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, հարուցել միջնորդություններ, սահմանված կարգով բողոքարկել ստուգումն իրականացնող անձանց գործողությունները,
- պահանջել ստուգումն իրականացնող անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում,
- չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասություններից, ինչպես նաև ստուգման նպատակներից և ծրագրերից չբխող պահանջներ,
- իրենց օրինական շահերի պաշտպանության նպատակով՝ ստուգման ցանկացած փուլում ստուգմանը մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, աուդիտորների, փաստաբանների:

Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

- չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները,
- ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց ներկայացնել փաստաթղթեր, տվյալներ, տրամադրել դրանց լուսապատճեններ, կրկնօրինակներ և այլ տեղեկություններ,
- անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց աշխատանքների համար,
- սահմանված ժամկետում վերացնել ստուգման արդյունքների ակտում նշված թերությունները և խախտումները՝ այդ մասին գրավոր հայտնելով ստուգող մարմնին:
- 

## ՍՏՈՒԳՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստուգումն իրականացնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք ունեն՝

- տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցչի մասնակցությամբ անարգել մուտք գործել տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ստորաբաժանումներ, պահանջել փաստաթղթեր, տվյալներ, բացատրություններ և տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրականացվող ստուգման նպատակներին,
- անհրաժեշտության դեպքում ստուգումներին ներգրավել տնտեսավարող սուբյեկտի մասնագետներին՝ տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի համաձայնությամբ,
- սահմանել ժամկետներ՝ այն թերությունների և խախտումների վերացման համար, որոնք չեն առաջացնում քրեական կամ վարչական պատասխանատվություն,
- առաջարկություններ ներկայացնել ստուգում նշանակող պետական մարմնի ղեկավարությանը՝ վարչական կամ քրեական պատասխանատվություն առաջացնող բացահայտված չարաշահումների և այլ խախտումների կապակցությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար,
- կատարել չափագրումներ, վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին: Փաստաթղթերը վերցնելիս ստուգում իրականացնող պաշտոնատար անձինք կնիքով կնքում են դրանց կրկնօրինակները և հանձնում տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչներին,
- դրամական գործառնություններ կատարելու, հաշվետվություններ և հաշվարկներ կազմելու ճշտությունը հիմնավորելու նպատակով իրականացնել գործարքի մյուս կողմի մոտ հանդիպակաց՝ միայն տվյալ գործարքի կատարման օրինականության ստուգումներ,
- ստուգման հրամանում նշված հարցերի շրջանակներում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարից կամ նրան փոխարինող անձից պահանջել անցկացնելու հիմնական ֆոնդերի, ապրանքանյութական արժեքների, դրամական միջոցների և հաշվարկների գույքագրումներ,

- անհրաժեշտության դեպքում տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկանքներ և այլ փաստաթղթեր պահանջել պետական համապատասխան մարմիններից,

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Ստուգման ցանկացած փուլում առանձին հարցերի պարզաբանման նպատակով հարկային մարմինն իրավունք ունի ստուգմանը ներգրավել թարգմանիչների և տնտեսության համապատասխան ոլորտի մասնագետների:**

Ստուգում իրականացնող անձինք պարտավոր են՝

- պահպանել ստուգման հետ առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները և տնտեսավարող սուբյեկտի օրինական շահերը,
- առանց տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի գրավոր համաձայնության՝ չհրապարակել ստուգման ընթացքում իրենց հայտնի դարձած տնտեսավարող սուբյեկտի առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունները,
- չխոչընդոտել տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին,
- իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնել տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց,

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Ստուգման ընթացքում ստուգում իրականացնողները պետք է հիմնվեն բացառապես «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և «Հայաստանի Հանրապետության գերատեսչական նորմատիվ ակտերի պաշտոնական տեղեկագրում» հրապարակված օրենքների և այլ իրավական ակտերի վրա:**

- ստուգման ընթացքում գրավոր պատասխանել տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ նրան փոխարինող անձի՝ անմիջականորեն տնտեսավարող սուբյեկտի ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող ստուգման հետ առնչվող ցանկացած գրավոր հարցման:

Ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող փաստաթղթեր, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր ժամանակավորապես վերցնելու դեպքում այդ մասին կազմվում է արձանագրություն, որում նշվում է դրանց վերադարձման ժամկետը: Արձանագրության մեկ օրինակը հանձնվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող անձին: Ստուգումն իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի, իրերի, փորձանմուշների և այլ անհրաժեշտ նյութերի որակական և քանակական ամբողջականության պահպանման ու սահմանված ժամկետում վերադարձման համար:

Արգելվում է ստուգման ընթացքում կապարակնքել պահեստներ, շինություններ, դրամարկղներ, էներգիայի աղբյուրներ, սարքավորումներ, սարքեր և այլն, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվող գույքագրման և չափագրման դեպքերի, եթե դրանք չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին:

## ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՒԳՈՂ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

Ստուգում իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունները և ստուգման արդյունքները (մասնավորապես, ստուգման ակտի տեսքով ամփոփված) չեն հանդիսանում վերջնական և անբեկանելի: Տնտեսավարող սուբյեկտներն իրենց օրինական շահերը պաշտպանելու համար կարող են բողոքարկել ստուգում իրականացնող անձանց գործողությունները և ստուգման արդյունքները այն պետական մարմնին, որին անմիջականորեն ենթարկվում են ստուգող անձինք, կամ դատարան:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքները (ստուգման ակտով արձանագրված խախտումները՝ ամբողջությամբ կամ մասնակի) բողոքարկվում են ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողով:**

Տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) մինչև բողոքի նկատմամբ պատասխան ստանալը կարող է թույլ չտալ շարունակելու ստուգումը (բացառությամբ «Հայաստանի

Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի):

Բողոքները վերադասության կարգով քննության են առնվում և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում: Նշված ժամկետում բողոքի վերաբերյալ պատասխան չտրվելու դեպքում բողոքում բերված փաստարկները համարվում են ընդունված: Գրավոր բողոքի քննարկման և որոշման ընդունման 30-օրյա ժամկետի հաշվարկն սկսվում է գրավոր բողոքը համապատասխան մարմնում մուտքագրվելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից

Ընդունված որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը (նրան փոխարինող պաշտոնատար անձը) իրավունք ունի բողոքարկել դատարան:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Օրենքի պահանջների խախտմամբ ստուգում իրականացնող անձինք պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ստուգումն իրականացնող մարմինների ապօրինի գործողությունների հետևանքով տնտեսավարող սուբյեկտին պատճառված վնասները, այդ թվում նաեւ՝ բաց թողնված օգուտները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են հատուցման՝ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետում:**

# ԻՆՉՊԵՍ ԱՎԱՐՏԵԼ

## ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Իրավաբանական անձի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու: Իրավաբանական անձի լուծարման համար հիմք են հանդիսանում՝

- իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշումը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևերի մասին առանձին օրենքներով սահմանված են իրավաբանական անձանց այն լիազոր (կառավարման բարձրագույն) մարմինները, որոնց բացառիկ իրավասությանն են պատկանում իրավաբանական անձի լուծարման մասին որոշումների ընդունումը (մասնավորապես՝ սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների ընդհանուր ժողովը, բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը, կոոպերատիվի անդամների ընդհանուր ժողովը և այլն): Իրավաբանական անձի լուծարման համար լիազորված մարմնի որոշումները կայացվում են հետևյալ հիմքերով՝
  - այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը.
  - այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար ստեղծվել է իրավաբանական անձը.
  - իրավաբանական անձի տնտեսական անկարողության, գործունեությունը շարունակելու հետագա աննպատակահարմարության կապակցությամբ.
  - եթե դատարանի վճռով իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) վրա դրվել են իրավաբանական անձին լուծարելու պարտականություններ.
  - լիակատար ընկերակցությունում միայն մեկ մասնակից մնալու կապակցությամբ (ընկերակցության միակ մասնակիցը այդպիսին դառնալու պահից սկսած 6 ամսվա ընթացքում իրավունք ունի ընկերակցությունը վերակազմավորել տնտեսական ընկերության).
  - վստահության վրա հիմնված ընկերակցության բոլոր ավանդատուների՝ ընկերակցությունից դուրս գալու կապակցությամբ (սակայն լիակատար ընկերներն իրավունք ունեն լուծարելու փոխարեն վստահության վրա հիմնված ընկերակցությունը վերակազմավորել լիակատար ընկերակցության): Վստահության վրա հիմնված ընկերակցությունը պահպանվում է, եթե նրանում մնում են թեկուզև մեկ լիակատար ընկեր և մեկ ավանդատու.
  - երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալի՝ օրենքով սահմանված նվազագույն չափից.
  - երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո բաժնետիրական ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալի՝ օրենքով սահմանված նվազագույն չափից.
  - օրենքով նախատեսված այլ դեպքերում,
- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը (իրավաբանական անձի լուծարման պահանջը կարող է դատարան ներկայացնել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որին օրենքով նման պահանջ ներկայացնելու իրավունք է վերապահված) հետևյալ հիմքերով.
  - դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված օրենքի խախտումների հետ.
  - առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու դեպքերում.
  - օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքերում,
  - հասարակական միավորման կամ հիմնադրամի կողմից պարբերաբար իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն իրականացնելու դեպքում,
  - սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվն օրենքով սահմանված քանակը գերազանցելու դեպքում՝ դրան հաջորդող 1 տարին (այդ ընթացքում բաժնետիրական ընկերության չվերակազմավորվելու դեպքում) լրանալուց հետո.
  - փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների թիվն օրենքով սահմանված քանակը գերազանցելու դեպքում՝ դրան հաջորդող 1 տարին (այդ ընթացքում բաց բաժնետիրական ընկերության չվերակազմավորվելու կամ մասնակիցների թիվը մինչև օրենքով սահմանված չափը չնվազելու դեպքում) լրանալուց հետո.
  - տարեկան հաշվեկշռի հաստատումից հետո 2 ամսվա ընթացքում առաջացած վնասները կոոպերատիվի անդամների կողմից լրացուցիչ վճարների միջոցով չփակելու դեպքում՝ կոոպերատիվի պարտատերերի պահանջով.

- օրենքով նախատեսված այլ դեպքերում,

- սնանկության հետևանքով: Եթե լուծարվող իրավաբանական անձի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

## ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲ

Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունող լիազորված մարմինը՝

- պարտավոր է լուծարման որոշման մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին, որն իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում տեղեկություններ է գրառում տվյալ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին,
- պարտավոր է լուծարման որոշման մասին 7-օրյա ժամկետում տեղեկացնել համապատասխան հարկային մարմնին,
- որոշմամբ նշանակում է լուծարման հանձնաժողով (լուծարող),
- որոշմամբ սահմանում է լուծարման կարգն ու ժամկետները՝ օրենսդրությանը համապատասխան:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Իրավաբանական անձանց կազմակերպական-իրավական ձևերի մասին առանձին օրենքներով սահմանված են լուծարման մասին որոշումների ընդունման պարտադիր պահանջներ, մասնավորապես.**
>
> - **բաժնետիրական ընկերության լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման մասին որոշում կայացվում է դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից,**
> - **սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների լուծարման և լուծարային հանձնաժողովի ստեղծման որոշումներն ընդունվում են ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն 2/3-ի մեծամասնությամբ, եթե ընկերության կանոնադրությամբ տվյալ որոշման ընդունման համար նախատեսված չէ ձայների ավելի մեծ թվի անհրաժեշտություն:**

Նշանակման պահից լուծարման հանձնաժողովին են անցնում իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները (դատարանում հանդես է գալիս լուծարվող իրավաբանական անձի անունից): Լուծարման հանձնաժողովը իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել 2 ամսից՝ սկսած լուծարման մասին հրապարակման պահից (լուծարման գործընթացի սկզբից):

Իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած լիազորված մարմինը լուծարման որոշման և մամուլում հրապարակված հայտարարության հիման վրա պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում է ներկայացնում դիմում, որի հիման վրա պետական գրանցամատյանում գրառվում են տեղեկություններ իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու մասին (դիմողին տրվում է պետական գրանցման վկայականի հերթական ներդիր):

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Բաժնետիրական ընկերությունների լուծարման գործընթացում գտնվելու մասին տեղեկությունները (լուծարման գործընթացի սկիզբը և ավարտը, լուծարման հանձնաժողովի կազմը) գրառվում են իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում՝ լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:**

## ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- Լուծարման հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու, լուծարման մասին նրանց տեղեկացնելու և դեբիտորական պարտքերը ստանալու ուղղությամբ:

> **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**
>
> **Լուծարման ընթացքում բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի կնքել նոր գործարքներ և ստանձնել նոր պարտավորություններ՝ միայն ընկերության պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ ընթացիկ գործունեությունն ավարտելու անհրաժեշտության դեպքում: Լուծարվող ընկերության գույքի օտարմանը կամ պարտքերի մարմանն ուղղված բոլոր գործողությունները կարող են իրականացվել միայն լուծարման հանձնաժողովի համաձայնությամբ:**

- Պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող իրավաբանական անձի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների մասին: Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է լուծարման մասին որոշում ընդունող լիազոր մարմինը:
- Եթե լուծարվող իրավաբանական անձի ունեցած դրամական միջոցները անբավարար են պարտատերերի պահանջները բավարարելու համար, լուծարման հանձնաժողովը հրապարակային սակարկություններով վաճառում է իրավաբանական անձի գույքը՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով:
- Լուծարման հանձնաժողովը լուծարվող իրավաբանական անձի պարտատերերին լուծարման միջանկյալ հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հաստատման օրվանից, վճարում է գումարներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հետևյալ հերթականությամբ՝
  - լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.
  - այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև լուծարվող իրավաբանական անձը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով.
  - աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.
  - բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքը.
  - հաշվարկներ մնացած պարտատերերի հետ:
- Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Լուծարման հանձնաժողովի կողմից պարտատիրոջ պահանջների բավարարումը մերժելու կամ դրանք քննարկելուց խուսափելու դեպքում մինչև իրավաբանական անձի լուծարման (վերջնական) հաշվեկշռի հաստատումը պարտատերն իրավունք ունի հայց հարուցել ընդդեմ լուծարման հանձնաժողովի: Լուծարման հանձնաժողովի կողմից պահանջներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո պարտատիրոջ ներկայացրած պահանջները բավարարվում են լուծարված իրավաբանական անձի գույքից, որը մնացել է պարտատերերի՝ ժամանակին ներկայացված պահանջները բավարարելուց հետո: Լուծարման հանձնաժողովի կողմից մերժված պարտատերերի պահանջները, եթե պարտատերը հայցով չի դիմել դատարան, ինչպես նաև դատարանի վճռով մերժված պահանջները համարվում են մարված:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- **Առևտրային կազմակերպությունների լուծարման ընթացքում դրանց կողմից սեփականության իրավունքի օբյեկտների և այլ գույքային իրավունքների օտարումը, այդ թվում՝ պետության և երրորդ անձանց հանդեպ պարտավորությունները կատարելուց (մարելուց) հետո բաժնետերերի, հիմնադիրների, փայամասնակիցների միջև բաշխումը (օտարումը) ենթակա է ԱԱՀ-ով հարկման՝ սահմանված ընդհանուր կարգով:**
- **Առանց անվճարունակության ընթացակարգ անցնելու լուծարվող իրավաբանական անձի շահութահարկի վճարումները կասեցվում են լուծարման մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պարտատերերի պահանջները բավարարելու վերաբերյալ օրենքով սահմանված հերթականությանը համապատասխան՝ պետական բյուջեի պահանջները բավարարելու հերթի հասնելը:**
- **Իրավաբանական անձի լուծարման դեպքում հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հարկատուի բաժնետոմսերի (փայերի) դիմաց ստացված մնացորդային գույքի գումարի և բաժնեմասի հաշվեկշռային արժեքի դրական տարբերության չափով:**
- **Օրենքով սահմանված շահութահարկի գումարի նվազեցման արտոնությունից օգտվող օտարերկրյա ներդրումներով ռեզիդենտի համար արտոնության ժամկետում իրավաբանական անձի լուծարման դեպքում շահութահարկի գումարն այդ արտոնության ժամանակաշրջանի համար հաշվարկվում է լրիվ չափով՝ գործունեության ամբողջ ժամանակաշրջանի համար:**
- **Հարկային գործակալ հանդիսացող իրավաբանական անձի լուծարման դեպքում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին եռամսյակային տեղեկությունները հարկային մարմիններին ներկայացվում են հարկային գործակալի կողմից լուծարման մասին պետական գրանցում իրականացնող մարմնին դիմում տալու օրվանից 5-օրյա ժամկետում:**

- Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ, որն իր որոշմամբ հաստատում է իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած լիազոր մարմինը:

■ Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո իրավաբանական անձի մնացած գույքը հանձնվում է նրա հիմնադիրներին (մասնակիցներին), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ:

## ԼՈՒԾԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՎԱՐՏ

■ Լուծարման հանձնաժողովն այդ գործընթացն ավարտելուց հետո, լուծարման պետական գրանցման համար պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը (փաստաթղթերի կազմման համար օրենքով սահմանված պահանջներին համապատասխան)՝

- հաստատված լուծարման հաշվեկշիռը.
- դիմում.
- իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունող լիազոր մարմնի որոշումը լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին.

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Մինչև լուծարման հաշվեկշիռը ներկայացնելը պարտադիր կարգով պետք է մարված լինեն պարտատերերի (այդ թվում՝ պետական և համայնքային բյուջեների և սոցիալական ապահովագրության բյուջեի) բոլոր պահանջները: Պետական ռեգիստրին ներկայացված փաստաթղթերի տվյալների իսկության համար պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը ներկայացրած անձինք:**

- տեղեկանքներ հարկային մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին.

**ԽՈՐՀՈՒՐԴ**

**Օրենքով ներկայումս պահանջվում է ներկայացնել տեղեկանքներ միայն հարկային մարմիններից, սակայն բյուջեների հանդեպ պարտավորությունների բացակայության հավաստումն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում ներկայացնել նաև տեղեկանքներ.**

- **համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններից՝ գույքահարկի, հողի հարկի և (կամ) տեղական տուրքերի պարտավորությունների բացակայության մասին,**
- **օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի իսկողությունից դուրս գտնվող վճարների դեպքում դրանք հավաքագրող լիազոր մարմիններից՝ բյուջեի հանդեպ պարտավորություններ չունենալու մասին:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Եթե գրանցման հայտի հետ չեն ներկայացվել տեղեկանքները, ապա պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը 3-օրյա ժամկետում հարցում է ուղարկում համապատասխան հարկային մարմին՝ բյուջեների նկատմամբ իրավաբանական անձի պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հանձնվում է ստացականով: Հարկային մարմինները պատասխանում են հարցմանն այն ուղարկելու օրվանից 30 օրվա ընթացքում: Հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելը դիտվում է որպես լուծարվող իրավաբանական անձի պարտավորությունների բացակայության հավաստում:**

- ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում նաև տեղեկանք լիազորված պետական կառավարման մարմնից՝ ապահովագրական ընկերությունների կողմից ապահովագրվողների (ապահովադիրների), ապահովագրված անձանց, շահառուների և պետության (միայն պետական տուրքի մասով) նկատմամբ պարտավորությունների բացակայության մասին

Նշված տեղեկանքները չներկայացնելու դեպքում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը հարկային մարմինների տեղեկանքները ներկայացնելու համար սահմանված կարգով ու ժամկետներում կատարում է նույն գործողությունները.

- կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ.
- պետական գրանցման վկայականը.
- իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի[60] պահանջների կատարման մասին:

[60] «Արխիվային գործի մասին» 08.06.2004թ. ՀՕ-89-Ն օրենք, ուժի մեջ է մտել 14.10.2004թ., հրապարակվել է ՀՀՊՏ2004/38(337), 14.07.2004թ.

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարային հանձնաժողովը կազմակերպում է լուծարվող կազմակերպության գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ:**

- Լուծարման վերաբերյալ գրառում է կատարվում պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման փաստաթղթերի ընդունման մատյանում: Պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումում ստուգվում է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունն օրենքի պահանջներին:
- Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման մերժումը պետք է լինի պատճառաբանված և հղում պարունակի օրենքի այն կոնկրետ նորմերին կամ իրավաբանական ածի կանոնադրության այն կետերին, որոնց պահանջները խախտվել են իրավաբանական անձի գործունեությունը դադարելիս:
- Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո, լուծարման պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում, պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանման ղեկավարն անհրաժեշտ տեղեկությունները լրացնում է քարտերում, ստորագրում ու կնքում է դրանք, և լուծարումը գրանցվում է պետական գրանցամատյանում:
- Իրավաբանական անձը համարվում է լուծարված և նրա գոյությունը դադարած այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից, ինչի մասին տրվում է տեղեկանք: Իրավաբանական անձանց լուծարման գրանցման համար պետական տուրք չի գանձվում:
- Պետական ռեգիստրը պահպանում է բոլոր իրավաբանական անձանց գրանցման փաստաթղթերը: Լուծարված իրավաբանական անձի արխիվային գործը ենթակա է պահպանման պետական ռեգիստրի արխիվում 10 տարի, որից հետո սահմանված կարգով հանձնվում է պետական արխիվ, իսկ իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը ենթակա է ոչնչացման:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Իրավաբանական անձի լուծարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային տեսչության ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել այդ իրավաբանական անձի որոշումների ընդունման վրա ազդելու հնարավորություն ունեցող սեփականատերերի և (կամ) ղեկավար մարմնի անդամների վրա՝ լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային տեսչությունից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով, եթե նշված պարտավորությունները ծագել են այդ անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով:**

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ի տարբերություն իրավաբանական անձի լուծարման (նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու), անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցումից հետո սուբյեկտը չի վերանում (ընդամենը դադարում է անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակը): Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում նրա պարտավորությունները շարունակում է կրել նույն ֆիզիկական անձը: Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարում է հետևյալ հիմքերով.

- անհատ ձեռնարկատիրոջ որոշման հիման վրա, որը կայացվում է հետևյալ հիմքերով՝
  - անհատ ձեռնարկատիրոջ տնտեսական անկարողության, գործունեությունը շարունակելու հետագա աննպատակահարմարության կապակցությամբ.
  - օրենքով նախատեսված այլ դեպքերում,

**ԽՈՐՀՈՒՐԴ**

**Անհատ ձեռնարկատերը «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով (անկախ փաստացի գործունեություն չիրականացնելու հանգամանքից): Երբ անհատ ձեռնարկատերը մտադիր չէ որոշակի ժամանակահատված զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, օրենքով իրավունք ունի առանց գործունեության դադարեցման պետական գրանցման ժամանակավորապես չզբաղվել այդ գործունեությամբ և զերծ մնալ նվազագույն ցոցիալական վճարի վճարումից:**

**«Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմնին հանձնած և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:**

- դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հետևյալ հիմքերով.
  - անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձին անգործունակ (հոգեկան խանգարման հետևանքով իր գործողությունների նշանակությունը չհասկանալը կամ դրանք չղեկավարելը) ճանաչելու դեպքում.
  - առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու դեպքերում.
  - օրենքի կամ այլ իրավական ակտերի բազմակի կամ կոպիտ խախտումների դեպքերում,
  - օրենքով նախատեսված այլ դեպքերում,
- սնանկության հետևանքով.

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Անհատ ձեռնարկատերը դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել, եթե ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները: Սնանկ ճանաչվելու դեպքում նրա գույքի բացակայության կամ անբավարարության հետևանքով պարտատերերի չբավարարված պահանջներն իրենց ուժը պահպանում են մինչև դրանց լիակատար մարումը: Անհատ ձեռնարկատերը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում:**

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման դեպքում անհատ ձեռնարկատերը պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանում է ներկայայցնում հետևյալ փաստաքղթերը (փաստաքղթերի կազմման համար օրենքով սահմանված պահանջներին համապատասխան)՝

- դիմում.
- պետական գրանցման վկայականը.
- իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման մասին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Գործունեության դադարեցման դեպքում անհատ ձեռնարկատերը կազմակերպում է իր գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ:**

- տեղեկանքներ հարկային մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին.

**ԽՈՐՀՈՒՐԴ**

**Օրենքով ներկայումս պահանջվում է ներկայացնել տեղեկանքներ միայն հարկային մարմիններից, սակայն բյուջեների հանդեպ պարտավորությունների բացակայության հավաստումն ապահովելու նպատակով խորհուրդ է տրվում ներկայացնել նաև տեղեկանքներ.**

**համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններից՝ տեղական տուրքերի պարտավորությունների բացակայության մասին (գույքահարկի և հողի հարկի պարտավորությունները անհատ ձեռնարկատերը կատարում է որպես ֆիզիկական անձ),**

**օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի հսկողությունից դուրս գտնվող վճարների դեպքում դրանք հավաքագրող լիազոր մարմիններից՝ բյուջեի հանդեպ պարտավորություններ չունենալու մասին:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Եթե գրանցման հայտի հետ չեն ներկայացվել տեղեկանքները, ապա պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումը իրավաբանական անձանց լուծարման համար սահմանված կարգով ու ժամկետներում հարցում է ուղարկում համապատասխան հարկային մարմին՝ բյուջեների նկատմամբ պարտավորությունների բացակայությունը հավաստելու վերաբերյալ: Հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելը դիտվում է որպես գործունեությունը դադարեցնող անհատ ձեռնարկատիրոջ պարտավորությունների բացակայության հավաստում:**

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Գործունեության դադարեցման մասին որոշման ընդունման օրվանից 7-օրյա ժամկետում անհատ ձեռնարկատերը պարտավոր է այդ մասին տեղեկացնել համապատասխան հարկային մարմնին:**

**Մինչև պետական ռեգիտր դիմում ներկայացնելը պարտադիր կարգով պետք է մարված լինեն պարտատերերի (այդ թվում՝ պետական և համայնքային բյուջեների և սոցիալական ապահովագրության բյուջեի) բոլոր պահանջները: Պետական ռեգիստրին ներկայացված փաստաթղթերի տվյալների իսկության համար պատասխանատվությունը կրում են այդ փաստաթղթերը ներկայացրած անձինք:**

- Մահացած անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականի մարումն իրականացվում է շահագրգիռ անձի դիմումի համաձայն, որի համար ներկայացվում են անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականն ու մահվան փաստը հավաստող փաստաթուղթը:
- Ներկայացված փաստաթղթերի ստուգումից հետո, գործունեության դադարման պետական գրանցումը մերժելու հիմքեր չհայտնաբերելու դեպքում, տարածքային ստորաբաժանման ղեկավարն անհրաժեշտ տեղեկությունները լրացնում է քարտում, ստորագրում ու կնքում է այն և գործունեության դադարումը գրառում է պետական գրանցամատյանում:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

- **Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների մնացորդների մասով (այդ թվում` ապրանքների, արտադրանքի, մտավոր սեփականության օբյեկտների), այլ գույքային իրավունքների գծով ձեռքբերումների դիմաց վճարված (հարկային հաշիվներում կամ մաքսային փաստաթղթերում առանձնացված) եւ մինչև գործունեության դադարեցումը հաշվանցված ԱԱՀ-ի գումարների չափով առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն:**
- **Հարկային գործակալ հանդիսացող անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման դեպքում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով ֆիզիկական անձանց վճարված եկամտի գումարների, նրանց բնակության (հաշվառման) վայրի հասցեների և այդ եկամուտներից պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին եռամսյակային տեղեկությունները հարկային մարմիններին ներկայացվում են հարկային գործակալի կողմից լուծարման մասին պետական գրանցում իրականացնող մարմնին դիմում տալու օրվանից 5-օրյա ժամկետում:**

- Անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը համարվում է դադարած այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից, ինչի մասին տրվում է տեղեկանք: Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման գրանցման համար պետական տուրք չի գանձվում:
- Պետական ռեգիստրը պահպանում է բոլոր անհատ ձեռնարկատերերի գրանցման փաստաթղթերը: Գործունեությունը դադարեցրած անհատ ձեռնարկատիրոջ արխիվային գործը ենթակա է պահպանման պետական ռեգիստրի արխիվում 10 տարի, որից հետո սահմանված կարգով հանձնվում է պետական արխիվ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայականը ենթակա է ոչնչացման:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարումից հետո հարկային պարտավորությունների հայտնաբերման դեպքում, հարկային տեսչության ներկայացրած հայցի հիման վրա, դրանք դատարանի որոշմամբ կարող են դրվել անհատ ձեռնարկատիրոջ վրա` լուծարմանը նախորդած մեկ տարվա ընթացքում հարկային մարմնից թաքցրած հարկման օբյեկտներից վճարման ենթակա հարկային պարտավորությունների չափով:**

## ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐՎԵԼԻՍ

- Գործատուները (այդ թվում` անհատ ձեռնարկատերերը, նոտարները)` իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց, իսկ անհատ ձեռնարկատերերը, նոտարները և ֆիզիկական անձինք` իրենց տվյալները սահմանված ժամկետներում ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի տարածքային կենտրոն են ներկայացնում անհատական հաշվետվության ձևերին համապատասխան:
- Լուծարման դեպքում ապահովադիրն անհատական հաշվետվության ձևով տարածքային կենտրոն է ներկայացնում նաև իր մոտ աշխատած ապահովագրված անձանց այն անհատական տվյալները, որոնք մինչև այդ չեն ներկայացվել:
- Ապահովադիրը հարկային մարմնից պարտավորությունների մասին տեղեկանք ստանալու համար հարկային մարմին է ներկայացնում տարածքային կենտրոնի տված տեղեկանքը` ապահովագրված անձանց տվյալները տարածքային կենտրոն ներկայացրած լինելու մասին:
- Ապահովադիր իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից անհատական հաշվետվությունը և պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը տարածքային կենտրոն է ներկայացվում լուծարման օրվանից հետո` 15 աշխատանքային օրվա ընթացքում` հաշվետու ժամանակաշրջանի վերջ համարելով լուծարման պետական գրանցման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը:

## ԱՆՎՃԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆ)

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի անվճարունակության (սնանկության) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են համապատասխան օրենքով[61]:Պարտապանը կարող է սնանկ ճանաչվել միայն դատարանի վճռով, եթե ի վիճակի չէ բավարարել պարտատերերի պահանջները, հետևյալ հատկանիշների առկայության դեպքում.

- սնանկության գործը պարտատիրոջ կողմից հարուցվելու դեպքում պարտապանը թույլ է տրվել 500.0 հազ. դրամը գերազանցող վճարային պարտավորությունների 30-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, և վճռի կայացման պահին նշված հատկանիշն առկա է,
- սնանկության գործը պարտապանի կողմից հարուցվելու դեպքում պարտապանը վճռի կայացման պահին ի վիճակի չէ կատարել իր դրամական պարտավորությունները, կամ նրա գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար:

Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև դատարանի թույլտվությունը սառեցվում է պարտատերերի պահանջների բավարարումը: Այդ պահից`

- կասեցվում են պարտատերերի բոլոր գործողությունները, որոնք ուղղված են պարտապանի նկատմամբ պահանջների բավարարմանը, արգելվում է պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը.
- արգելվում է առանց դատավորի որոշման պարտապանի գույքի, ինչպես նաև նրա մասնակիցների սեփականությունը հանդիսացող պարտապան կազմակերպությունում ունեցած բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայաբաժինների և օրենքներով սահմանված այլ արժեթղթերի) օտարումը, վարձակալության տալը, գրավադրումը կամ այլ ձևով ծանրաբեռնումը.
- կարճվում են գույքային բռնագանձումներով բոլոր կատարողական վարույթները, արգելվում են կատարողական և այլ փաստաթղթերով սահմանված անվիճելի կարգով գանձումները.
- կասեցվում է դրամական պարտավորությունների (այդ թվում` ապահովված) և պարտադիր վճարումների, ներառյալ` հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների և այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաև վճարման ենթակա տոկոսների հաշվարկումը, վճարումը կամ գանձումը.
- կասեցվում են սնանկության վարույթին առնչվող կամ դրա ընթացքի վրա ազդող այն քաղաքացիական գործերի վարույթները, որտեղ պարտապանը հանդես է գալիս որպես պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.
- պարտապանի անունից ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններ ներկայացնում է կառավարիչը:

Ֆինանսական առողջացման ծրագիր է համարվում պարտապանի վճարունակությունը վերականգնելու նպատակով նրա նկատմամբ կիրառվող` օրենքով չարգելված միջոցառումների համալիրը, որի արդյունքում պարտապանը չի լուծարվում: Ֆինանսական առողջացման ծրագրի ժամկետը չի կարող գերազանցել 24 ամիսը, եթե օրենքով սահմանված կարգով դրա գործողության ժամկետը չի երկարաձգվել: Օրենքով սահմանված ժամկետում ֆինանսական առողջացման ծրագիր չներկայացվելու, ներկայացված ծրագրի հաստատումը մերժվելու, ֆինանսական առողջացման ծրագիրը վաղաժամկետ դադարեցվելու, ֆինանսական առողջացման ծրագրի կատարման մասին կառավարչի հաշվետվության հաստատումը մերժվելու դեպքերում դատավորը որոշում է կայացնում պարտապան-իրավաբանական անձի լուծարման կամ պարտապան-անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման մասին:

Պարտապանի լուծարման մասին որոշման կայացումից հետո` 5 օրվա ընթացքում, կառավարիչն այն հրապարակում է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում: Պարտապանին լուծարելու մասին որոշման 1 օրինակը դատավորն ուղարկում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմին` համապատասխան գրառում կատարելու համար:

Պարտապանին լուծարելու մասին որոշման հրապարակումից հետո կառավարիչն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պարտապանի գույքի վաճառքը: Պարտապանին պատկանող գույքի կառավարումից և տնօրինումից ստացված եկամուտը փոխանցվում է պարտապանի սնանկության հատուկ հաշվին և բաշխվում է պարտատերերի միջև` գույքի վաճառքից ստացված միջոցների հետ միասին: Պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները փոխանցվում են պարտապանի սնանկության հատուկ հաշվին, իսկ անդորրագրերը հանձնվում են կառավարչին: Պարտապանի գույքի վաճառքից ստացված միջոցները բաշխվում են օրենքով սահմանված հետևյալ հերթականությամբ, կառավարչի կողմից` դատավորի հաստատած բաշխման ծրագրին համապատասխան.

[61] «Անվճարունակության (սնանկության) մասին» 17.12.2003թ. ՀՕ-17-Ն օրենք, ուժի մեջ է մտել 30.01.2004թ., հրապարակված է ՀՀՊՏ2004/6(305), 29.01.2004թ.

- պահովված պահանջները.
- կառավարչի վարձատրություն և վարչական ծախսերը, այդ թվում՝ գույքի պահպանման և տնօրինման համար անհրաժեշտ ծախսերը, վարչական աշխատողների աշխատավարձը, վարչական ապարատը պահպանելու համար այլ անհրաժեշտ ծախսերը, պարտադիր սոցիալական վճարումները, այդ թվում՝ գործատուի պարտադիր սոցիալական վճարումները.
- դատական ծախսերը.
- ընթացիկ անուղղակի հարկային պարտավորությունները՝ կապված պարտապանի գույքի վաճառքի հետ.
- չապահովված պահանջները, որոնք առաջացել են պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ սույն օրենքով սահմանված կարգով իրականացված գործառնությունների (այդ թվում՝ գործունեության վերսկսման) հետևանքով.
- այն քաղաքացիների պահանջները, որոնց առջև պարտապանը պատասխանատվություն է կրում նրանց կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու համար՝ համապատասխան պարբերական վճարումների կապիտալացման միջոցով, ինչպես նաև պարտապան քաղաքացու անչափահաս երեխաների համար անհրաժեշտ ծախսերը (ալիմենտները).
- աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև լուծարումը առաջացող), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը, հեղինակային պայմանագրերով վարձատրությունների վճարումները և սույն հերթի պահանջների բավարարումից առաջացող պարտադիր սոցիալական վճարումները.
- չապահովված պարտատերերի պահանջները, ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների, սոցիալական ապահովության պետական հիմնադրամի նկատմամբ առաջացած պարտավորությունները, բացառությամբ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջների.
- ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները՝ պարտապան-իրավաբանական անձին իր հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների կողմից տրամադրված վարկերից, փոխառություններից կամ այլ ներդրումներից առաջացած պահանջները, պարտապանի կողմից տեղաբաշխված տասը տարի և ավելի ժամկետ ունեցող պարտատոմսերով, ինչպես նաև արտոնյալ արժեթղթերով ներկայացված պահանջները, աշխատավարձի գծով  և այլ պահանջներ.
- պարտապանի, հիմնադիրների, մասնակիցների, բաժնետերերի, անդամների կամ գործընկերների պահանջները:

Պարտապանի դրամական միջոցները անբավարար լինելու դեպքում համապատասխան հերթի պարտատերերի միջև դրանք բաշխվում են բավարարման ենթակա պահանջների գումարներին համամասնորեն: Յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**Սնանկության օրենսդրության խախտումների համար սահմանված է քրեական պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 192-րդ, 193-րդ և 194-րդ հոդվածներով, մասնավորապես հետևյալի համար՝**

- **սնանկության կամ սնանկության հնարավոր կանխատեսման ընթացքում գույքը կամ գույքային իրավունքները, գույքի, նրա չափի, գտնվելու վայրի կամ այլ տեղեկություններ թաքցնելը, գույքն առանց օրինական հիմքի ուրիշի տիրապետմանը հանձնելը, ոչնչացնելը կամ ակնհայտ անշահավետ պայմաններով օտարելը, պարտապանի տնտեսական գործունեությունն արտացոլող հաշվապահական և այլ փաստաթղթեր թաքցնելը, ոչնչացնելը, կեղծելը,**
- **սնանկության ընթացքում առանձին պարտատերերի գույքային պահանջներին ապօրինի բավարարում տալը՝ ակնհայտորեն ի վնաս այլ պարտատերերի, հավասարապես՝ պարտատիրոջ կողմից նման բավարարումն ընդունելը, եթե վերջինս տեղյակ էր սնանկ պարտապանի կողմից ի վնաս այլ պարտատերերի իրեն տրված նախապատվության մասին,**
- **կանխամտածված սնանկությունը՝ պարտապանի ղեկավարի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից անվճարունակության հատկանիշների կանխամտածված ստեղծումը կամ դրանց չափի ավելացումը սեփական կամ այլ անձանց շահերից ելնելով,**
- **կեղծ սնանկությունը՝ պարտապանի ղեկավարի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից սնանկության հատկանիշների բացակայության պայմաններում սեփական սնանկության ճանաչման մասին հայցադիմում ներկայացնելը՝ պարտատերերին մոլորեցնելու և նրանց պահանջների բավարարման հետաձգում, տարաժամկետում, նվազեցում, սառեցում կամ մորատորիում ստանալու, հավասարապես նաև պարտքերի չվճարման նպատակով:**

## ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՄ ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով իրավաբանական անձանց լուծարման դեպքում լուծարումն իրականացվում է վճռում նշված մարմնի, իսկ նման նշման բացակայության դեպքում իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի կողմից, որոնք լուծարումը գրանցելու համար պետական ռեգիստր են ներկայացնում դատարանի վճիռը և իրավաբանական անձանց լուծարման համար սահմանված փաստաթղթերը:
- Սնանկության հետևանքով լուծարված իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար ներկայացվում են դատարանի՝ օրինակ ուժի մեջ մտած որոշումը և իրավաբանական անձանց լուծարման համար սահմանված փաստաթղթերը (բացառությամբ լուծարային հաշվեկշիռը հաստատելու որոշումից և պարտավորություններ չունենալու մասին տեղեկանքներից):
- Սնանկ ճանաչված անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պետական գրանցման համար ներկայացվում են դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը և անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման համար պահանջվող փաստաթղթերը (բացառությամբ պարտավորություններ չունենալու մասին տեղեկանքների):
- Բանկերի լուծարման հիմքերի, կարգի, ինչպես նաև լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով:

---

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐ

Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԴԱՐ» ՍՊԸ
Տպագրությունը՝ «ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 500